Էջմիածին

1962

ՌՆԹԱՎ
ՄԹ ՏԱՐԻ

Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1962

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՍՍ-4830

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Երուսաղեմի Սուրբ Հարության Տաճարի վերանորոգման հանգանակության առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Երուսաղեմի Սուրբ Հարության Տաճարի վերանորոգությունը	5
Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի անունով ստացված հույր եկեղեցիների հոգևոր պետերի ողջույնի հեռագրերն ու գրությունները	8
Խազաղության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերանսը	15
Պաշտոնական հաղորդագրություն	16
Պաշտոնական հաղորդագրություն	17
Ա. Հ.— Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններ	19
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ— Ցշականում	27
ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ— Մատյան գոյության	28
ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ— Հայոց այբուբեն	30
ՆԱՆՍԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ— Մաշտոցի ջիրմարի առաջ	31
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՏԵՆՋՅԱՆ— Ներքող սուրբ էջմիածնի	33
ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵ—Հայ այբուբենը գլուխ գործոց մրն է	34
ԺԱՆ ԲԱԼԱՐ—Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ	35
ՄԱՅԻ ԱԹՈՒՌՄ	36
Ն. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ— Ե դարի Հայ եկեղեցու պատմության և գրականության մի քանի հանգուցային հարցերի քննությունը	37
Հ. Ռ. ՍԻՐՈՒՆԻ— Օրմանյան և իր ժամանակը	45

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1962 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ ԱՒԱՉՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Նկարիչ՝ ՍՏԵՓԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՀԱՅԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՋՄՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄԱՐՔՆ ԱՀԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ՝ ԾԱՌԱՅՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՀԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԾԻՐՈՅՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ամայն աշխարհի նուիրական սրբավայր և տիեզերական մշակոյթի յաւերժական կոթող. Քրիստոսակոխ Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարի վերանորոգումը այլևս անյետաձգելի հարց մըն է:

Յայտնի է բոլորիս, թէ մեր Սուրբ Եկեղեցին, բաղում դարերէ ի վեր, Յունաց և Լատինաց Սուրբ Եկեղեցիներու հետ միասին, պահապանն ու վերակացուն է այս փառաւոր Տաճարին, որուն հիմքերը դրուած են Դ դարուն, Մեծն Կոստանդիանոս կայսեր և իր աստուածասէր մօր՝ Հեղինէի ձեռքերով:

Ահա այս Սուրբ Տաճարի կամարներուն տակ է, որ Հայաստանեայց Եկեղեցին հաստատած է իր հաւատքի և ծառայութեան առաքելութիւնը և Սրբոց Յակոբեանց յիշատակին վրայ խարսխած իր նուիրապետական Աթոռներէն մին, աստուածալառոյց Սուրբ Էջմիածնի օրհնութեամբ:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սուրբ Աթոռն է այդ, զոր մեր լուսաբնակ նախնիք և քաջակորով հայրապետները, երբեմն իրենց կեանքի իսկ գնով, պահպանած են տիրաբար ու ծաղկեալ պահած, մեզի՝ այսօրուաններս թողլով սրբազան ժառանգութիւն մը, որ բոլորիս համար ունի հոգևոր և ազգային անփոխարինելի նշանակութիւն, Հայ Եկեղեցւոյ միջազգային դիրքին և իրաւունքներուն առումով։

Ահա թե ինչո՛ւ բոլորիս սեպուհ պարտքն է՝ շարունակել մեր նախնեաց սրբազան գործը և ամուր պահպանել Հայ Երուսաղէմի կրոնական ու ազգային այդ մեծ ժառանգութիւնը։

Ամէն հայ հոգևորական և ամէն հայ մարդ պարտի խորհիլ ու գործի անցնիլ, որպէսզի Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը մօտ ապագային կարողանայ կատարել Սուրբ Յարութեան Տաճարի վերանորոգման իրեն բաժին ինկած ծախքերը։

Արդ, Մենք կոչ կ՚ուղղենք նախ Սրբոց Յակոբեանց վինուտրեալ միաբանութեան և մեր նուիրապետական Աթոռներուն ու մեր բոլոր թեմական առաջնորդներուն, որպէսզի անյապաղ աշխատանքի անցնին ու միասնական ճիգերով օժանդակեն այս նպատակաւ ստեղծուող հանգանակութեան, որ պիտի կազմակերպուի Պատրիարք Մեր Եղբօր՝ Տ. Եղիշէ Սրբազան Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ։

Սրտագին կոչ կ՚ուղղենք նաև համայն մերազն ժողովուրդին և բարի ու շինարար գործի նուիրուած հայ կազմակերպութիւններուն և հիմնարկութիւններուն, որ իրենց պարտականութիւնը նկատեն Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարի նորոգութեան գործը, լիառատ կերպով յատկացնելով իրենց տրամադրութեան տակ գտնուող նիւթական միջոցները։

Դրամը և այն տնտեսողը կը փառաւորուին այն ատեն միայն, երբ կը յաջողին ծառայել բարի և սուրբ գործոց իրականացման։

Քրիստոնեայ հայ ժողովուրդը այս առիթով ալ ապացոյցը թող տայ հոգևոր ազգային միասնութեան և վոհաբերութեան ու շինարար ոգիի։

Անգամ մը ևս և ազգովին ցոյց տանք, թէ ոգեկան արժէքներ դաւանող և մեր գերագույն շահերու գիտակցութիւնը ունեցող ժողովուրդ ենք։ Համրանքով փոքր մեր Ազգին փառքի տիտղոսը այս գիտակցութիւնն իսկ է։

Քրիստոսատես Սուրբ Էջմիածնի կողքին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց պատմական Աթոռը կը հանդիսանայ Հայ Եկեղեցիին ու հայ ժողովուրդին հոգևորիմացական կայսրութեան սիւներէն մին։

Ամրացնենք ու անշարժ և շէն պահենք այդ Սուրբ Աթոռը։

Փրկչի Իշման Սուրբ Տաճարէն և Մեր սրտէն ջերմագին ողջո՛յն Սուրբ Յարութեան Տաճարին, ողջո՛յն Հայ Երուսաղէմին, ողջո՛յն և օրհնութի՛ւն քրիստոսասեր հայ ժողովուրդին։

Արդ, «Այսուհետև կօրացարուք Տէրամբ և կարողութեամբ կօրութեան Նորա» և «Գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ վինչ առնէ կրարին, կնոյն ընդունի և ի Տեառնէ, եթէ ծառայ և եթէ ազատ» (Եփես. Զ 10, 8)։

Ամէն։

ՅԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի-30-ն ապրիլի
1962 Փրկչական ամի,
և ի տաճարիս Հայոց ՌՆՏԻԱ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Այս Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի սույն համարի սկզբում տպագրվում է Վեհափառ Հայրապետի ապրիլ 30 թվակիր սրբատառ կոնդակը, Երուսաղեմի Ս. Հարության Տաճարի նորոգության առթիվ, որը միաժամանակ հայրապետական սրտագին կոչ է՝ ուղղված «ՀԱՄԱՅՆ ՄԵՐԱԶՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ», «ՍՐԲՈՑ ՀԱԿՈԹՅԱՆՑ ԶԻՆՎՈՐՅԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՈՒՆ ՈՒ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐՊԵՍԶԻ ԱՆՀԱՊԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԻՆ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՆՔԵՐՈՎ ԱԺԱՆԴԱԿԵՆ ԱՅՍ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԿԶԲՆԱՎՈՐՎՈՂ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՈՐ ՊԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԵՐ ԵՂԲՈՐ Տ. ՆՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ»:

Վեհափառ Հայրապետը, թարգմանը հանդիսանալով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի զգացմունքների դեպի Երուսաղեմի հայոց Պատրիարքությունը, դեպի ազգային այս մեծ Տունը և ժառանգությունը, որը «ՔՐԻՍՏՈՍԱՏԵՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՔԻՆ», «ԿՀԱՆԴԻՍԱՆԱ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀՈԳԵՎՈՐ-ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՅՍՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԵՐՆՆ ՄԻՆ», կարևորությամբ շեշտում է, որ Ս. Հարության Տաճարի նորոգության ճարը սրբազան պարտականությունն է հայ ժողովրդի, որը միշտ իր գերագույնը կատարել է՝ վառ ու պայծառ պահելու համար համազգային այս հաստատությունը. «ՄԵՐ ԼՈՒՍԱՒՈՐՅԱԿ ՆԱԽՆԻՔ ԵՎ ՔԱՋԱԿՈՐՈՎ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ, ԵՐԲԵՄՆ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻ ԻՍԿ ԴՆՈՎ, ՊԱՀՊԱՆԱԾ ԵՆ ՏԻՐԱԲԱՐ ՈՒ ՄԱՂԿՅԱԼ ՊԱՀԱԾ, ՄԵԶԻՆ ԱՅՍՕՐՎԱՆՆԵՐՈՒՆ ԹՈՂԼՈՎ ՍՐԲԱԶԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ, ՈՐ ԲՈԼՈՐԻՑ ՀԱՄԱՐ ՈՒՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՐՔԻՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԱՌՈՒՄՈՎ»:

Երուսաղեմը միշտ ունեցել է իր տագնապի, նեղության օրերը: Պատմության ընթացքում Հայ Երուսաղեմի գլխով են անցել փոթորիկներ ու մրրիկներ: Բայց հայ ժողովուրդը միշտ բարոյապես, նյութապես օժանդակել է համազգային այս հաստատության և իր սրտաբուխ նվիրատվությամբ, կանգուն ու պայծառ պահել ազգային և կրոնական մեծ արժեք ներկայացնող այս հաստատությունը:

Այժմ նորից Երուսաղեմի հայոց Պատրիարքությունը պետք ունի հայ ժողովրդի սրտաբուխ նվիրատվության, բերելու համար իր բաժինը Ս. Հարության Տաճարի նորոգության ծախքերին:

«ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈ՞Ւ,— հրաճանգում է Վեհափառ Հայրապետը,—բոլորիս սեպուհ ՊԱՐՏՔՆ Է՝ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԵՐ ՆԱԽՆՅԱՑ ՍՐԲԱԶԱՆ ԴՈՐՈՒՆ ԵՎ ԱՄՈՒՐ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՅԴ ՄԵԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»:

Երուսաղեմը բացառիկ ճանգամանք է ներկայացնում մանավանդ քրիստոնեական ողջ աշխարհի համար, որպես Քրիստոսի

կյանքի հիշատակներով, մանվան և հարության դեպքերով նվիրագործված Ս. Երկիր:

Դ դարի սկզբներին, երբ հռոմեական կայսրության մեջ պետական կրոնի հռչակվեց քրիստոնեությունը, Ս. Երկրում փառավոր տաճարներ, պատմական կթողներ կառուցվեցին՝ Քրիստոսի կյանքի հետ կապված ամենանվիրական վայրերի վրա, ինչպիսի էին Ս. Ծննդյան հոյակապ բազիլիկան Բեթղեհեմում, Ս. Հարության Տաճարը Երուսաղեմում, Այլակերպության եկեղեցին Գալիլիայում՝ Թաբոր լեռան վրա և այլուր:

Երուսաղեմը այսպիսով դարձավ պատմական սրբավայրերի, տաճարների, վանքերի մի սուրբ աշխարհ:

Այդ հոյակապ սրբավայրերից հնագույնն է այս օրերին վերանորոգվող Ս. Հարության նակա, գմբեթազարդ Տաճարը, կառուցված Քրիստոսի շարչարանքների, խաչելության և հարության նվիրական վայրերի վրա:

Ս. Երկրում առաջին սրբավայրերի կառուցումը բարձրանում է մինչև 325 թվականը, Կոստանդիանոս կայսեր և իր աստվածասեր մոր՝ Հեղինե թագուհու օրերը:

Երուսաղեմում քրիստոնեական առաջին սրբավայրերի շինության ու պահպանության հետ պատմականորեն կապված է եղել նաև հայ ժողովրդի անունը:

Է դարի պատմիչ Հերապոլսեցի Անաստաս վարդապետը, որը Համազասպ Կամսարական իշխանի խնդրանքով այցելել է Ս. Երկիր, վկայում է իր «վասն վանորէից Հայոց որ յԵրուսաղէմ» գրքում, որ հայերը նույն դարում Ս. Երկրում ունեին 70 վանքեր, շինված «ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ և ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին... վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի տեղիս տնօրինականացն Քրիստոսի և յայլ աստուածակոխ տեղիսն: Եւ զմեծամեծ եկեղեցիքն, զԳողգոթա, զՍ. Յակոբն, զՀրեշտակապետն և զԳրկիչն, զՇնունդն, զվերնատունն և զՀամբարձումն, զձառներն և զԳիւտ խաչն, զեռանն Լուսաւորչին և զաստուածընկալ Գերեզմանն, շինեալ ի թագաւորէն Տրդատայ և ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ»:

Մովսես Կաղանկայտվացի պատմիչը (Ժ դար) և այլ հիշատակագիրներ նույնպես վկայում են, որ Ս. Երկրում առաջին հայ վանքերի շինությունը բարձրանում է մինչև Լուսավորչի և Տրդատի օրերը:

Այդ պատմական սրբավայրերի շինության մասնակցել են հայրապետն ու թագավորը, հայ նախարարն ու շինականը, հայ արվեստագետն ու բարեպաշտը, «Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈՅ եւ ի ՅԻՇԱՏԱԿ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ»:

Երուսաղեմում հայ հնագարյան վանքերի, կրոնական, մշակութային հաստատությունների գոյությունը ինքնին պերճախոս վկան է և պատմական ապացույցը Երուսաղեմում Հայ եկեղեցու գրված բարձր դիրքի և հայ մշակույթի զարգացման Ս. Երկրում:

Վերանորոգվող Ս. Հարության Տաճարը ինքնին մեջ բազմաթիվ տնօրինական սրբավայրերի, աղոթատեղիների, մատուռների մի ամբողջություն է, որն իր մեջ ներառում բովանդակում է Քրիստոսի Ս. Գերեզմանը. Գողգոթան, Երկնաց պարտեզը, Գիւտ խաչը, Պատանատեղին և նրանց պատկանող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և այլ մատուռներ:

Ս. Հարության Տաճարը քրիստոնեական միջազգային սրբավայր է: Տաճարի «գլխավոր պահապանները» և իրավատերերն են Երուսաղեմի հայերի, նույների և լատինների Պատրիարքությունները:

Ս. Երկրում, քրիստոնեական այդ միջազգային սրբավայրում, երկու մեծազույն եկեղեցիների՝ նույն օրթոդոքսների և հռոմեական կաթոլիկների հետ Հայ եկեղեցու գրված դիրքը՝ հայ ժողովրդի հավատի զորության և կրոնական կենսունակության ապացույցն է, միաժամանակ ազգային արդար հպարտության և հոգևոր մխիթարության անսպառ աղբյուրը:

Տասնյոթ դարի հնություն ունեցող Ս. Հարության այս Տաճարի գլխով անցել են շատ փոթորիկներ: 325 թվականին կառուցված Տաճարը դարերի ընթացքում ենթարկվել է բնական և քաղաքական փոթորիկների պատճառած տվերածությանց: 614 թվականին պարսիկները քանդեցին Տաճարը, որը միայն հետո վերաշինվեց Մոտեստոս պատրիարքի կողմից: 1009 թվականին Ֆաթիմյան ալ-Հաքիմ խալիֆան մոլեռանդությամբ հիմնահատակ արեց Տաճարը, որը նորից վերաշինվեց մասամբ 1048 թվականին, Կոստանդիանոս Մոնոմախոս կայսեր կողմից: 1099 թվականին, խաչակիրների շրջանին, Ս. Հարության Տաճարը ենթարկվեց հիմնական վերաշինության՝ իր այժմյան վիճակով:

1800 թվականին հրդեհը մեծ վնասներ պատճառեց Տաճարի նարտարապետական կառուցվածքին, իսկ 1927 թվականի երկրաշարժի ցնցման հետևանքով ճեղքեր բացվեցին Տաճարը վեր բռնող սյուների վրա (տե՛ս Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունի, «Ս. Երկրին ավանդությունները», Երուսաղեմ, 1936, էջ 3—4):

Ս. Հարության Տաճարի նորոգության հարցը հին է և ունի իր պատմությունը: Տարբեր

ժամանակներում նարտարապետական Իրենությունները ու տեղեկագրերը անհրաժեշտ դարձրին հիմնական վերանորոգումներից առաջ «երկաթյա և փայտյա նեցուկներով զորավիգ բլալ շենքին, արգիլելու անոր տարվետարի աճող և փլուզումի գացող խայթումը»: Ճարտարապետների թելադրությանց համաձայն, իրագործվեց եղած առաջարկը և 1927 թվականի երկրաշարժից հետո Տաճարի վտանգված մասերը ամրացվեցին երկաթյա և փայտյա մույրերով, «որոնք մինչև հիմա կմնան»:

Այնուհետև հաջորդ տարիներին և մանավանդ վերջերս նշտվեցին. երեք պատրիարքարանների նարտարապետների միասնական իրենությամբ, Տաճարի վերանորոգության վերաբերող հիմնական հարցերը:

Իրավատեր երեք պատրիարքությունները համաձայնվել են, որ «այն մասերը Տաճարին, որոնք յուրաքանչյուր հարանվանության առանձին սեփականություն կնկատվին և ենթակա են իր իրավասության, հետաքրքրվող հարանվանությունը ինքը պիտի հայթայթե վերաշինման ծախքը: Իսկ այն մասերը, որոնք հասարակաց սեփականություն ընդունված են, երեք պատրիարքարանները հավասար իրավունքներով և ծախքով պիտի բերեն իրենց մասնակցությունը» («Սիոն», 1961 հոկտեմբեր—նոյեմբեր, էջ 275, խմբագրական):

Ս. Հարության Տաճարի վերանորոգության ընդհանուր ծախքը նախատեսվում է մոտավորապես 750 000 ստեռլինգ, համաձայն նարտարապետների նախահաշվի: «Հայոց Պատրիարքարանը, իբրև մին երեք գլխավոր հարանվանություններեն, որոնք սեփականության իրավունք ունին աշխարհամատուռ և պատմական Տաճարին մեջ, վերոհիշյալ ծախքից գումարին մեկ երրորդը, 250 000 ստեռլինգ հոգալու հարկին ներքև են, կարենալ ապահովելու իրենց տասնվեց դարերե ի վեր այս Տաճարին մեջ ունեցած եկեղեցական և ազգային իրավունքները...:

Ինչպես կհետևի, այս դարավոր ու պատմական կարևորություն ունեցող եկեղեցիին մեջ կարենալ պահելու մեր սեփականության իրավունքը, պարտիք կարենալ հունցաց և լատինաց Պատրիարքարաններուն հետ հավասար բաժիններով բերելու մեր մասնակցությունը վերաշինության գործին: Ասիկա կենսական հարց մըն է մեր գոյության իրավունքը պահելու համար, որովհետև պատրիարքական մեր իրավունքները կբխին Ս. Տեղյաց մեջ մեր ունեցած իրավասություններեն» (նույն տեղում):

Ս. Հարության Տաճարի նորոգության մասնակցության հարցը, ինչպես շեշտում է Վեհափառ Հայրապետը Իր սրբատառ կոնդակում, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ է, ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՎԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՏԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ է:

«ԱՆԳԱՄ ՄԸ ԵՎՍ, ԵՎ ԱԶԳՈՎԻՆ ՅՈՒՅՑ ՏԱՆՔ,—գրում է Վեհափառ Հայրապետը,—ԹԵ ՈԳԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԴԱՎԱՆՈՂ ԵՎ ՄԵՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՆՔ: ՀԱՄԲԱՆՔՈՎ ՓՈՔՐ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՓԱՌՔԻ ՏԻՏՂՈՍԸ Ա՛ՅՍ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՍԿ է»: «ԱՄԲԱՑՆԵՆՔ ՈՒ ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԵՆ ՊԱՀԵՆՔ ԱՅԴ Ս. ԱԹՈՌԸ,—հրահանգում է Վեհափառ Հայրապետը:

Նորին Ս. Օծությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը խորապես վստահ են, որ հայ ժողովուրդը, որպես դարավոր երեք իրավատերերից մեկը քրիստոնեական միջազգային այդ սրբավայրի, որ Երուսաղեմում Ս. Հարության պատմական Տաճարն է, կանգ չի առնի նյութական ո՛չ մի զոհողության առաջ, գոյացնելու համար այդ դարավոր սրբավայրի ընդհանուր վերանորոգման ծախսերի իրեն ընկած բաժինը:

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՂԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ, ՍՏԱՑՎԱԾ ՌՈՒՍԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զերդ Սրբություն, սիրեցյալդ ի Տեր, Սրբազնագույն Հայրապետ.

Մեծ, լիառատ և խատարյալ է մեր ուրախությունը Տեր Հիսուս Քրիստոսի հարության առթիվ։ Այդ առավել ևս մատ է դառնում մեր սրտերին և փոխադարձ անբակտելի կերպով կապում է մեզ միմյանց հետ նույն հավատով, մեր երբոլորի Փրկչի և Աստուծո հետ, ինչպես լույսը բեկման և անդրադարձման երևույթով ընդունում է նոր փայլ, հաճույք պատճառելով բոլոր տեսնողներին։

Սիրով ողջունելով Զերդ սիրեցյալ Սրբությանը Փրկչի լուսապայծառ հարության տոնի առթիվ, և ճոխելով Զեզ ուրախության խոսքեր և բարեմաղթություններ, աղաչում եմ հարուցյալ Տիրոջ, որ Իր աստվածային խաղաղությամբ և ուրախությամբ ամրապնդի և վերանորոգի Զեր կյանքը, շնորհատու ուղեկից լինի Զեզ, ծառայելու Նրա նշմարիտ խոսքին՝ աստվածային նախախնամությամբ պանպանելու համար Զեր խնամքին հանձնված քրիստոնյա հոգիները։

Հայցելով Զեր սուրբ աղոթքները, եղբայրական սիրով մնամ Զերդ Սրբության ամբողջ հոգով նվիրված՝

ԱԼԵՔՍԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

ՄՈՍԿՎԱ

Մինչ այնքան մոտ ենք մեր Տիրոջ՝ Քրիստոսի Հարության սուրբ և մեծ տոնին, որում տոնում ենք մանկան պատությունը, դժոխքի խորտակումը, այլ կյանքի՝ հավիտենական կյանքի սկիզբը և սաղմոսներով ու երգերով փառաբանում ենք Նրան, որ երբեք որ հետո հարություն առավ գերեզմանից. մեծ հաճույքով, սիրով և միության հասարակաց ցանկությամբ է, որ մեր սույն նամակով հայտնում ենք Զերդ սիրեցյալ Ամենապատվության, Զեր եկեղեցուն և Զեր հավատացյալ հոտին՝ զատկական մեր սրտագին շնորհավորությունները։

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆ Ի ՄԵՌԵԼՈՑ»։

Թող մարդացյալ Ս. Փրկիչը պահի և պահպանի Զերդ սիրեցյալ Ամենապատվությանը գալիք բազում տարիներին, տևական առողջությամբ և մեծ հրճվանքով դիմավորելով տոների այս թագուհին, պատկառելի հոգևորականության և հավատացյալ Զեր հոտի հետ, և շնորհի Զեզ ուժ և կարողություն՝ շարունակելու համար Զեր հովվապետական բարձր առաքելությունը։

Հարուցյալ Քրիստոսով ողջագուրում ենք Զերդ Ամենապատվությանը և մնում եղբայրական սիրով և հարգանքով,

Մեծապես հարգելի Զերդ Վեհափառության սիրող եղբայր ի Քրիստոս՝

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՊՅԱՄԲՈՒԼ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՀԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Փառաբանություն ենք առաքում ողորմած Աստուծուն, որ Ձեզ, մեզ հետ միասին, այս տարի էլ արժանացրեց Ս. Հարության մեծ տոնի ուրախություններին և օրհնություններին:

Քրիստոնյաներս ճանդիսանում ենք վկաները Քրիստոսի շարշարանաց, մահվան և հարության:

Խորին, հոգևոր խնդությամբ և զաակական սուրբ համբույրներով ողջունում և շնորհավորում ենք Ձեր սիրելյալ Սրբության մեծ և լուսապայծառ Հարության տոնը և ամբողջ սրտով ցանկանում ենք Ձեզ, Ձեր միարանության և ասպետաբանաներ ժողովրդին՝ առատություն, բախտավորություն և հաջողություն կյանքի բոլոր բնագավառներում և մնում Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստոս.

ԹԵՈԴՈՍԻՈՍ Ջ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

ԴԱՄԱՍԿՈՍ

Ձերդ Սրբություն, Սրբազնագույն Հայրապետ.

Մենք և մեզ հետ Վրաց եկեղեցու Ս. Սինոդը Ձերդ Սրբության հղում ենք խնդությամբ անկեղծ շնորհավորանքներ՝ Քրիստոսի Հարության տոնի առթիվ:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՀԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Աղոթում ենք խաղաղություն և ամեն տեսակ բարիք տվող հարուցյալ Տիրոջ, որ նա ամրապնդի Ձեր հոգեկան և մարմնական ուժերը՝ շարունակելու Ձեր դժվար բայց օգտակար ծառայությունը՝ ի փառս Քրիստոնեական Ս. եկեղեցու:

Աստուծո Սեղանի առաջ, մեր խոնարհ աղոթքների մեջ միշտ հիշում ենք Ձեր անունը:

«Արդարև յարեաւ Քրիստոս»:

Խորին հարգանքներով և եղբայրական սիրով, մնում եմ Աստուծո ողորմությամբ,

ԵՓՐԵՄ Բ

ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ

ԹԲԻԼԻՍԻ

Ձերդ Սրբություն, սիրելյալ եղբայր ի Քրիստոս.

«ՋՅԻՍՈՒՍ, ՋԱԱՋԵԼԵԱԼ ԽՆԴՐԷՔ: ՉԷ ԱՍՏ, ՔԱՆՁԻ ՅԱՐԵԱԼԻ» (Մատթ. ԻԸ 5—6):

Տխուր և հուսաբեկ աշակերտների խմբին հրեշտակը ավետեց Փրկչի հարությունը. «ՉԷ ԱՍՏ, ՅԱՐԵԱԼԻ»: Հաջորդող օրերին, սիրելյալ Տերը երևաց նրանց. և ցույց տվեց Իր խոցված կողը և վիրավոր ձեռքերն ու ոտքերը, համոզելով նրանց, որ իսկապես ինքն էր:

Նախքան Իր Հոր մոտ վերադառնալը, Տերը նրանց տվեց Իր հանձնարարությունը. «ԳՆԱՅԷՔ ԱՆՍՈՒՀԵՏԻ, ԱՇԱԿԵՐՏԵՑԷՔ ԶԱՄԵՆԱՅՆ ՀԵԹԱՆՈՍԱՍ, ՍԿՐՏԵՑԷՔ ԶՆՈՍԱ ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ» (Մատթ. ԻԸ 19—20): Եվ նրանք մեկնեցին իրենց հարուցյալ և համբարձյալ Տիրոջ զորությամբ և հավատով, հավատարիմ իրենց կոչման, ուսուցանելով մարդկանց կատարել այն ամենը, ինչ Տերը իրենց հրամայել է:

Նույնն է պատգամը այս դարի Քրիստոնյաների համար ևս: Տերը, որ հեռացավ մեզանից, նույնն է «ԵՐԷԿ, ԱՅՍՕՐ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ»: Զորացած Նրա հարուցյալ կյանքով, Քրիստոսի ծառաները դեռևս գնում են ուսուցանելու բոլոր ազգերին և մկրտելու նրանց: Մեր մեծ եկեղեցիների ճանդիսավոր հավաքներին և մեր առանձին համայնքների ծիսակատարությունների մեջ, Աստված հավերժ ներկա է Իր ժողովրդի հետ: Միասնության և տկարության պահերին, Նրա հոգին դեռևս զորացնում է նրանց:

Քանի Իր ծառաները այսօր շարունակում են իրենց երկրավոր ուխտագնացությունը, նրանք երբեք մենակ չեն։ Նրանք գնում են շրջապատված վկաների մեծ բազմությամբ, ընկերակցությամբ օրհնյալ սրբերի և նրանց աղոթքների օգնությամբ։ Նրանք նույնպես նամբարդում են ամբողջ աշխարհի՝ իրենց ի Քրիստոս եղբայրների աղոթքների օգնությամբ։

Մենք աղոթում ենք սրտագին, որ մեր օրհնյալ Տերը այս Հինանց օրերին զորացնի Ձեզ և Ձեր նամայն ժողովրդին Իր հարուցյալ կենաց զորությամբ, և Ձեր երկրավոր ուխտագնացության ընթացքին Ձեր խոհերը ուղղեցնի դեպի բարձր, երկնային ցանկությունների, ի մտի ունենալով Փրկչի խոստումը. «ԱՀԱՒԱՍԻԿ ԵՍ ԸՆԴ ՁԵԶ ԵՄ ՁԱՄԵՆԱՅՆ ԱՒՈՒՐՍ, ՄԻՆՉԵՒ Ի ԿԱՏԱՐԱՄ ԱՇԽԱՐՀԻ» (Մատթ. ԻԸ 20)։

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ՄԱՏԹԷՈՍ ՌԵՄԶԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐԵԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ԼՈՆԴՈՆ

Ձերդ Վեհափառություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս հարուցյալ.

Ամբողջ սրտով շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Վեհափառության մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հարության առթիվ ուղարկված եղբայրական շնորհավորանքների համար։

Մեր Փրկչի՝ Քրիստոսի հարության օրը «Այսօր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմ. ՃԺԷ 24)։ Այս օրը առիթ է տալիս մեզ խոստովանելու մեր եղբայրական սերը. «փութալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան» (Եփես. Դ 3)։ Սերը, միությունը և խաղաղությունը այն պատգամներն են, որ Հարուցյալ Հիսուսը թողեց Իրեն հետևողներին, իբրև Իր թանկագին և սրբազան կտակը։

«Պատուիրան նոր տամ ձեզ. զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրեցէք զմիմեանս» (Յովհ. ԺԳ 34—35)։

«Եւ որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ի նմա բնակէ» (Ա Յովհ. Դ 16)։

«Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է, և գիտէք, զի ամենայն մարդասպան ոչ ունի զկեանս յաւիտենականս յանձին հաստատեալ» (Ա Յովհ. Գ 15)։

Աստուծո Միածին Որդին Քրիստոս զոհվեց բոլոր մարդկանց համար և աղաչեց Իր երկնավոր Հորը, որ բոլոր նրանք, որ հավատում են Իրեն, լինեն ամուր միացած միմյանց հետ. «Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետուս նոցա, զի իցեն մի, որպէս և մեք մի եմք։ Ես ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի» (Յովհ. ԺԷ 22—23)։

Իսկ Պողոս առաքյալը նորոգում է. «... և մի՛ իցեն ի ձեզ հերձուածք. քանզի էիք հաստատեալք ի նոյն միտս և ի նոյն հանգամս» (Ա Կորնթ. Ա 10)։

Վերջապես խաղաղությունը մեր հավատի հիմքն է, «Զի նա է խաղաղութիւն մեր» (Եփես. Բ 14), «Եւ ինքն Տէր խաղաղութեան» (Բ Թեսաղ. Գ 16)։

Նա «իջավ երկրի վրա խաղաղության համար և Իր արյունով հաշտեցնելու երկրավորներին և երկնավորներին, միացնելու համար նրանց։ Նա չարչարվեց խաղաղության համար, հալածվեց խաղաղության համար, թաղվեց խաղաղության համար», այնպես, ինչպես մեզ է ավանդում Ս. Հովհան Ոսկեբերանը (Հատ Ը)։

Մենք ունենք այն ուժեղ զգացմունքը, որ մեր օրերում, այս մեծ գանձերը՝ բերված մեր Փրկչի հարությամբ, սկսում են է՛լ ավելի բարձր գնահատվել աշխարհի բոլոր ժողովուրդներից, որոնք իրենց ջանքերն են միացնում՝ աշխարհ բերելու սիրո իշխանությունը, եղբայրական համագործակցությունն ու խաղաղությունը։

Մեծ հույսեր է խոստանում այն որոշումը, որով ամբողջ ժողովուրդները վիճակամ են խաղաղությունն ամրապնդելու և առանց զենքերի և պատերազմ-

ների մի աշխարհ կերտելու, որովհետև, ինչպես Ս. Գրիգոր Նյուսացին է ասում, «Պատերազմը խեղդում է կյանքը և սարսափի ու մահվան հայրն է»:

Մեր հերթին մենք ևս, Ս. Եկեղեցիների սիրելիս, որ հարուցյալ Քրիստոսին հաստատում ենք որպես «Իշխան խաղաղության», պարտականություն ունենանք մեր բոլոր ջանքերը թափելու, որպեսզի բոլոր ազգերը հաղորդվեն Քրիստոսի հարության խաղաղությամբ, թոթափելու համար վերջնականապես պատերազմները ժողովուրդների կյանքից:

Այս բազմաթիվ նախադրյալների կողքին, որոնք արդարացնում են այս սուրբ գործադրությունը, որպես ուղեցույց ունենանք նաև երջանիկ Ստեփանոսի պատգամը. «Ավելի լավ է պատերազմները խորտակել խոսքերով, քան մարդկանց սրերի միջոցով և խաղաղությունը ձեռք բերել խաղաղությամբ և ոչ թե պատերազմով» (Թուղթ 229):

Այսպիսի հանգամանքներով և հույսերով մեր եղբայրական ողջույնն ենք ճղում Ձերդ Վեհափառության և ամբողջ սրտով մաղթում ենք Ձեզ, ինչպես նաև ողջ հոգևոր դասուն և հավատացյալներին Ձեր Ս. Եկեղեցվո, որի Գերագույն Պետն եք, որ առատորեն հաղորդվեք այն բոլոր հարստություններով, որոնք շնորհված են մեր Տիրոջ հարությամբ, ուրախանաք կատարյալ առողջությամբ, խաղաղություն և երջանկություն վայելեք այս կյանքում, իրագործելու համար հավիտենական կյանքը, ժառանգ թողված մեզ մահվան հաղթողից՝ մեր Տեր Հիսուսից:

Եղբայրական անկեղծ սիրով ողջագուրում ենք Ձեզ ի Քրիստոս հարուցյալ:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Ձերդ Սրբություն.

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Մեռելներից հարություն առած Աստվածորդու մասին հրեշտակի պատգամը լցնում է մեր հոգիները սուրբ առաքյալների հրճվանքով, որոնք ընդունեցին Քրիստոսի հարության ավետիսը:

Եվ մինչև օրս էլ չի դադարում Ս. Եկեղեցու այդ պատգամը, որովհետև դա սիրո և խաղաղության խոսք է և հավիտենական կտակը երկնային ավետարանի:

Այս մեծ տոնին, երբ Աստուծո ուժով հաղթահարվեցին չարը և մահը, իմ և Ս. Սինոդի անունից, եղբայրական սիրով ողջունում եմ Ձերդ Սրբությանն՝ բարեմաղթություններով և աղոթքով: Աստվածապարգև Ս. Զատիկը թող Ձեզ համար բերի հոգևոր ուրախություն:

Թող օրհնված լինի ամենաբարի Աստվածը, որը մեզ զորացնում է, որպեսզի աղոթենք աշխարհի համար, երկրի վրա հաստատ խաղաղության և ողջ մարդկության բարօրության համար:

Կենսապարգև Հարուցյալը թող շնորհի Ձերդ Սրբության, Ձեր բարեպաշտ միաբանության, Ձեր նվիրյալ հոտին և Ձեր Հայրենիքին բազում ողորմություն և բարություն, բարեհաջողություն, եղբայրսիրություն և խաղաղություն բոլոր մարդկանց և համայն աշխարհի ժողովուրդներին:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Հայցում ենք Ձերդ Սրբության աղոթքները և մնում Ձեր ի Քրիստոս խոնարհ եղբայր և ծառայակից՝

ԿԻՐԻԼ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

ՍՈՖԻԱ

Եղբայրական ճարգանքներով ի Տեր, Ձերդ Սրբության ամենասրտագին շնորհավորանքներ:

Աստուծո ողորմությամբ ամեն տարի Ձեզ հետ միասին տոնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության տոնը և դարավոր Բիստոնական սովորությամբ հոգևոր հայրությունը փոխանակում շնորհավորական խոսքերով:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Ձերդ Սրբության, Ձեր միաբանության, ասավածապաշտ ժողովրդին ցանկանում ենք երկնային օրհնությունը հարուցյալ Փրկչի:

Հանձնում ենք մեզ Ձեր սուրբ աղոթքներին և մնում Ձեր եղբայրն ի Քրիստոս,

ԳԵՐՄԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՍԻՐԻԱՅԻ

ԲԵԼԳՐԱԴ

Ձերդ Սրբություն.

Ուրախությամբ ստացել ենք մեր Փրկչի Հարության վառապանծ տոնի առթիվ Ձեր շնորհավորությունները: Ջերմագին շնորհակալություն ենք հայտնում Ձեր հոգած զատկական բարեմաղթությունների համար:

Գոհություն Աստուծո, որ մեզ այս տարի ևս արժանացրեց սաղմոսներով փառաբանելու մեր Փրկչին, որ Իր մահով խորտակեց մահվան շղթաները և Իր հաղթական հարությամբ մեր առաջ բացեց հավիտենականության դռները:

«Արդարև յարեաւ Տէր»:

Թող հարուցյալ Տերը Իր սիրո ոգին հեղու Ձերդ Սրբության վրա, որպեսզի զատկական խոսքերով զորացած, մեր Փրկչի շնորհներով հովվեք հայ հավատացյալ ժողովուրդը երկար տարիներ՝ խաղաղության և բարգավաճման մեջ:

Ան այդ մնամ սիրով ի Քրիստոս.

ՔՐԻՍՈՍՏՈՄՈՍ
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԵՏՐՊՈԼԻՏ

ԱԹԵՆՔ

Սիրելի՛ Եղբայր մեր ի Տեր Հիսուս Քրիստոս.

Ձեզ և Ձեր Սկեղեցուն հաղորդում ենք մեր շնորհավորանքներն ու լավագույն մաղթանքները՝ մեր Տիրոջ փառավոր հարության մեծ և սուրբ օրվան առթիվ:

Նորին հարգանքներով ստացանք Ձեր շնորհավորությունները, որ ուղարկել էիք մեզ այս սուրբ օրվա առթիվ, որի համար շատ երախտապարտ ենք:

Մեր խոնարհ աղոթքներն ենք բարձրացնում դեպի մեր Փրկիչը, որ Իր մահով և հաղթական հարությամբ աշխարհի վրա և երկնքում մարդկությանը շնորհեց լիակատար ազատություն և հավիտենական կյանք, որպեսզի նա մի անգամ ևս հեղու երկրի վրա և աշխարհի ժողովուրդների մեջ Իր օրհնությունները Հարության սուրբ տոնի առթիվ, որպեսզի կյանքի ազատությունը, խաղաղությունը, ապահովությունն ու միությունը կարողանան իրագործվել այս աշխարհում:

Աղոթում ենք նաև Ձերդ Սրբության երկար և առույգ կյանքի և Ձեր Ս. Սկեղեցու բարգավաճման համար:

Ձեր եղբայրն ի Տեր՝

ԱԼԲՈՒՆԻ ԲԱՍԻԼԻՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵԹՈՊԻԱՅԻ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

Ձերդ Սրբություն.

Մեր սրտագին փափագն է ուղարկել Ձեզ մեր շնորհավորությունները, լի գատկական հրճվանքով, բայց մեզ տխրեցնում է այն, որ մենք անկարող եղանք այդ անելու ճիշտ ժամանակին: Սակայն և այնպես մեծ հաճույքով հանում ենք Ձեզ շնորհավորություններ մեր Տիրոջ Քրիստոսի հրաշափառ Հարության առթիվ, հոգեկան վկայությամբ, որ Նա հաղթեց մահվան և մեզ շնորհեց հավիտենական կյանք:

Շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը և ցանկանում Ձեզ երկար տարիներ պտղառատ գործունեությամբ՝ Ձեր Ս. եկեղեցու փառքի համար, Ձեր Աստվածասեր ժողովրդի հանգստության համար և Իր Ս. Եկեղեցու միության համար:

Մեր Տիրոջ Քրիստոսի սիրով և եղբայրական շնորհավորություններով.

ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՅՐԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ

ԿԵՐԱԼԱ

Ձերդ Սրբություն.

Խնդրում եմ ընդունել իմ սրտագին և լավագույն բարեմաղթությունները Ս. Զատիկի տոնի հոգևոր ուրախությանց առթիվ:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ի Ի ՄԵՌԵԼՈՅ»:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ձերդ Սրբություն.

Փոքրիկ՝ մահվան դեմ տարած հաղթանակով ուրախությամբ լցված, մտքերս ուղղելով Ձերդ Սրբության, ամբողջ սրտով շնորհավորում եմ Ձեր ուրախ և փրկարար տոնը՝ Քրիստոսի լուսապայծառ հարությունը:

Հարուցյալ Քրիստոսը թո՛ղ ամրապնդի Ձեր հոգեկան ուժերը, թո՛ղ օրհնի Ձեր բոլոր բարի գործերը և Ձեր նկեղեցու հավատացյալներին՝ պահելով բոլորիս խաղաղության մեջ:

Մեր Տիրոջ՝ Քրիստոսի սիրով առ Ձեզ,

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Վեհափա՛ռ Տեր.

Սիրով և հոգեկան անխառն հրճվանքով կարդացի Ձերդ Վեհափառության 10 ապրիլ թվակիրը, որով բարեհաճեր էիք ինձի և համօրեն Մխիթարյան միաբանությանս ուղղել Ձեր սիրալիր և բանկագին մաղթանքները գատկական:

Վստահ եղեք, Վեհափա՛ռ Տեր, որ նույնքան ջերմագին և անկեղծ են մեր այլ իղձերն ու բարեմաղթությունները Ձեզի հանդեպ: Պետք է ըսեմ, որ երախտապարտ ենք, որ այնքան սիրով և հոգածությամբ կփութամ Ձեր մաղթանքներն ու բարի լուրերը մեզի հաղորդել:

Թող օրհնյալ ըլլա Քրիստոսի հարությունը և աղբյուր ամենայն ուրախության, երկնային շնորհներու և պարգևներու նոր և երջանիկ կյանքով և հաջողություններով Ձեզի և համօրեն հայ ժողովրդյան:

Լավագույն զգացումներով և ամենախոնարհ հարգանքներով եմ՝

Վեհափառ Տերությանդ խոնարհ ծառա՝

ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ

Վեհափա՛ռ Տեր.

Տյառն մեր Հիսուսի Քրիստոսի հրաշափառ հարության առիթով Վեհիդ շնորհավորագրին համար հայտնելով իմ խորին շնորհակալիս, փոխադարձաբար նվաղեմ Ձեզի ամենեցուն պարգևատուն երկար տարիներ ակաղձուն պտուղներով՝ ի հոգևոր մխիթարություն Ձեր հոտին:

Ակնածալիր ողջունիվ՝

ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՉՅԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՎԻԵՆՆԱ

Քող արդարության արեգակը Քրիստոս լուսավորի Ձեր եկեղեցին այս Ս. Զատիկին:

ՎԻՍՍԵՐ Ֆ ՀՈՒՖՏ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԺԸՆԵՎ

Անդրկովկասի ճավատացյալ մուսուլմանների և անձամբ մեր անունից շնորհավորում ենք Ձեզ Զատկի և Մայիսմեկյան տոների առթիվ:

Մաղթում ենք Ձեզ բաջառողջություն և հաջողություն, խաղաղության և ժողովուրդների միջև եղբայրական բարեկամության ամրապնդման գործում:

ՇԵՅԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱ-ՔԻՄԶԱԴԵ

ՄՈՒՖՏԻ ՎԵԼԻԶԱՏԵ

ԲԱՔՈՒ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Մայիսի 12-ին, Երևանում, Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում, տեղի ունեցավ խաղաղության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերանսը:

Կոնֆերանսը բացվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի ներածական խոսքով:

Այնուհետև խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ, գրող Նաիրի Զարյանը հանդես է գալիս «Ընդհանուր զինաթափման և խաղաղության պաշտպանության հարցերը» թեմային նվիրված զեկուցումով:

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը կոնֆերանսում հրապարակում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խաղաղության նվիրված հառը:

Կոնֆերանսում ջերմ ելույթներ են ունենում Վարպետը՝ ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ռ. Ֆանարջյանը, բանաստեղծ Դեղամ Սարյանը, Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնի գլխավոր ռեժիսոր Վ. Աճեմյանը, ուսուցչուհի Գ. Աղամյանը, բանվորուհի Թ. Մինասյանը և ուրիշներ:

Վերջում կոնֆերանսը բանաձև է ընդունում, որով հավանություն է տալիս Սովետական կառավարության հետևողական խաղաղասիրական քաղաքականության, ընդհանուր և լրիվ զինաթափման համար նրա մղած պայքարին:

Այնուհետև ընտրվում են խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտե՝ բաղկացած 75 հոգուց, խաղաղության կողմնակիցների համամիութենական կոնֆերանսի պատգամավորներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, բարեհաճեց անձամբ տանել հայրապետական Իր ողջույնն ու օրհնությունը խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական ժողովին, որը տեղի ունեցավ Չեխոսլովակիայի Կարլովի-Վարի քաղաքում, մայիսի 15.—18-ին:

Քրիստոնեական եկեղեցիների սույն համագումարը ավետարանական ոգով մի անգամ ևս բնաբակեց աշխարհի խաղաղության պաշտպանության, ընդհանուր գինաթափման, միջուկային զենքերի փորձարկումների արգելման հարցերը և ընդունեց որոշումներ՝ միասնական աղոթքներով և կենդանի գործով շարունակելու և առավել ծավալելու խաղաղության դատին նվիրված սրբազան գործը:

Կարլովի-Վարիի խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական այս համագումարը կնանդիսանա բարոյական մի նոր խթան՝ ժողովուրդների աղնիվ պայքարի հանապարհին, հանուն աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրության:

Վեհափառ Հայրապետը մայիսի 24-ին վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՍԱՀՄ ԱԹՈՌԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնազույն Կաթողիկոս Ամենայն Հայոց մայիսի 25-ին ընդունեց այցելությունը Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի հերկայացուցիչ, Մելոյայի Եպիսկոպոս գերաշնորհ Տ. Էմիլիանոս Թիմիադիսի:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և գերաշնորհ Տ. Էմիլիանոս Եպիսկոպոսի միջև Վեհարանում տեղի ունեցավ ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում:

Մայիսի 26-ին սրբազան հյուրն այցելեց Ս. Էջմիածնի վանքը, Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի տաճարները, Զվարթնոցը և այլ ուխտավայրեր:

Մայիսի 27-ին, կիրակի օր, գերաշնորհ Տ. Էմիլիանոս Եպիսկոպոսը Մայր Տաճարում ներկա եղավ հանդիսավոր սուրբ պատարագին: Նույն օրը Վեհափառ Հայրապետի շքախմբի հետ Սրբազան հյուրը հերկա գտնվեց Ս. Սեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված պաշտոնական հանդիսության Պետական օպերային թատրոնում:

Մայիսի 28-ին գերաշնորհ Տ. Էմիլիանոս Սրբազանը մեկնեց դեպի Կիպրոս:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՍԱ-4830

ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԷՄԻԼԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԹԵՆԱԳՈՐԱՍԸ
ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

ԳՈՂՈՄՈՆ ԲՈՍՅԱՆ

(Լուսանկար Լենինգրադի Արվեստների Ակադեմիայի)

ՊՈՍՏԱՆ Ս. ՊԱՊԱՅԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՕՐԵՐ

Վերածնված հայ ժողովուրդը իր Հայրենիքում ապրում է Մեսրոպյան խորհուրդը, բուռն ցնծությամբ ու ազգային հպարտությամբ։

Մայիս է, վարդաբույր ու վառ մայիս։

Հայ ժողովուրդը, մեր մտավորականությունն ու մամուլը, ամսի 26—28-ին, մեծաշուք և համազգային հանդիսությամբ, սրտագին երախտագիտությամբ, հայրենի հարազատ պետության կազմակերպությամբ և նրա հովանու տակ, նշում են հայ գրերի հանճարեղ ստեղծող, հայ դպրության հիմնադիր Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։

Սփյուռքի հայությունը ևս մասնակցում է հոբելյանական այս հանդիսություններին։ Բազմաթիվ հյուրերի շարքին, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ են ժամանել Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերապատիվ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը (Փարիզից), Մխիթարյան ուխտի միաբան Հ. Եղիա վարդապետ Փելիկյանը (Վենետիկից), գրող Կոստան Զարյանը իր տիկնոջ հետ (ԱՄՆ-ից), պրոֆ. Մանասե Սեակը (ԱՄՆ-ից) և բանաստեղծ Վահե Վահյանը (Բելգրադից)։

Հայ մշակույթի անմահ նահապետ Ս. Մեսրոպ Մաշտոցի սրտառուչ կերպարը և խնկելի հիշատակը չեն թառամել սերունդների և հայ հոգիների անդաստանի մեջ։

Տասնվեց դարերի բարձունքից մեզ է նայում ու առաջնորդում Ս. Մեսրոպ Մաշտոցը։ Հայ մշակույթի և դպրության «մշտավառ ջահը ձեռքին, դարեր շարունակ քայլել է նա իր ժողովրդի հետ, քայլել է բոլոր աղետների և արհավիրքների միջով և հասել մեր օրերը» (Ս. Զորյան)։

Ս. Մեսրոպ Մաշտոց հոգևոր, իմացական անցամաքելի աղբյուրն է հայ ժողովրդի ինքնաճանաչման և հավերժության։

Գրերի գյուտով հայ ժողովուրդը գտավ իր դոյության և հավերժության կոչանը և դարերի դիմաց վառեց իր կյանքի անշեջ խարույկը։

Հոբելյանական այս օրերին, այս մտածումների և զգացմունքների լույսի տակ, հայ ժողովուրդը մի անգամ ևս հիացմունքով և պատկառանքով սիրո և երախտագիտության իր սրտագին տուրքն է բերում Օշա-

կանի Մեծ Սրբի, Տեսանողի, Մտածողի և Հայրենասերի անթառամ հիշատակին։

Անցյալում երբեք չի տոնվել Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան տոնը պետականորեն, համազգային շուքով և հանդիսությամբ։ Հայ եկեղեցին միայն, ամեն տարի, ոգեկոչել է հիշատակը Ս. Մեսրոպի, Ս. Սահակի և թարգմանիչ վարդապետների։

Այժմ միայն, առաջին անգամ, 1600 տարի հետո, հայ պետության հովանու տակ, տոնվում է Ս. Մեսրոպ Մաշտոց և իր գործը։

Արդարև, որքա՞ն իրավունք ունենք, հոբելյանական այս օրերին ևս կրկնելու Կորյունի հետ, «Ցայսմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր»։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Այս տարի հոբելյանական կրկնակի տարի է, նվիրված Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600 և հայ տպագրության 450-ամյակին։

Համազգային և պատմական նշանակություն ունեցող այս կրկնակի հոբելյանների առթիվ, Հայրենիքի բոլոր գիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններում, դպրոցներում, գրադարաններում, հիմնարկ-ձեռնարկություններում, շրջանային մշակութային տներում և ակումբներում ու կոլտնտեսային դաշտերում, հեռավոր գյուղերում, սարերում անգամ, ամենուրեք կազմակերպվեցին գրական-երաժշտական հանդիսություններ, հոբելյանական գիտական նիստեր, կարդացվեցին բովանդակալից դեկուցումներ՝ նվիրված Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։

Մայիսի 21—22-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ հոբելյանական գիտական նիստ՝ նվիրված Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600 և հայ տպագրության 450-ամյակին։

Հոբելյանական հանդիսավոր նիստը ներածական խոսքով բաց արեց Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

«Մեր ժողովուրդը,—ասաց նա,—տոնում է հայ մեծագույն մտածողի, իր հանճարեղ զավակի, հայ գրության ու դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծնունդյան 1600-ամյակը։ Մեր մշակույթի պատմությունը տվել է բազմաթիվ կարկառուն դեմքեր, սակայն բոլոր այդ գործիչներից հայ ժողովուրդը ամենից շատ պարտական է Տարոն գավառի Հացեկաց գյուղի գեղջուկ Վարդանի որդի Մաշտոցին։ Այն աշխատանքը, այն չարչարանքները, որ, ինչպես ասում է ավանդությունը, կրել է նա իր մեծ գյուտի համար՝ հիրավի տիտանական են։ Նրա գյուտը հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի միասնության, ինքնուրույնության պահպանման համար։

Այս տարի լրանում է նաև հայերեն առաջին գրքի տպագրության 450-ամյակը։ Մենք շատ և շատ երջանիկ ենք, որ հայ ժողովուրդը մեծ շուքով տոնում է Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։ Այդ տոնը նշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ամբողջ Սովետական երկիրը»։

Ապա «Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերի և գրության ստեղծողը» թեմայով զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ղարիբյանը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Երեմյանի զեկուցումը նվիրված էր «Մեսրոպ Մաշտոցը և նրա ժամանակը» թեմային։

Այնուհետև հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ե. Տեր-Մինասյանը, որը զեկուցեց «Հայ գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին»։ Սկզբնաղբյուրների ուսումնասիրության փաստացի հարուստ նյութերի հիման վրա նա ցույց տվեց, որ հայ գրերի գյուտի ստույգ ժամանակը պետք է համարել 405—406 թվականները, ինչպես այդ մասին վկայում է Մեսրոպի աշակերտ ու ժամանակակից, պատմիչ Կորյունը իր «Վարք Մաշտոցի» գրքում։

Հանդիսավոր ժողովի երկրորդ նիստում Մաշտոցյան գրերի պատմական նշանակության մասին զեկուցեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, հայկական գրերի հնագույն տեսակների մասին՝ պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանի զեկուցումը նվիրված էր «Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդական բանահյուսության մեջ» թեմային։

Հանդիսավոր ժողովի նիստերին մասնակցում էին նաև սփյուռքահայ գրողներ, պատմաբաններ, գաղութահայ մշակութային կենտրոնների անվանի գործիչներ։

Երեք օր տևեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի Մատենադարանի գիտական նիստը՝ նվիրված Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքին և գործին։

Մատենադարանի երկնագույն դահլիճի խորքում դրված էր Ս. Մեսրոպ Մաշտոցի նկարը՝ շրջապատված մայիսյան վարդերով։ Մատենադարանի գիտական նիստում

յավեցին հետևյալ կարևոր զեկումումները. «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը» (Մատենադարանի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյան), «Մաշտոցի Վարքի» ժանրային առանձնահատկությունները» (պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյան), «Մաշտոցի գործունեության բնույթի մասին» (բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Սարտիրոսյան), «Գրերի գյուտը և հայկական հին թարգմանությունները» (փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Աբեղյան), «Մեսրոպատառ այբբենու գրականության մասին» (պատմական գիտությունների թեկնածու Հ. Փափազյան), «Հայատառ լեհերեն վավերագրերը» (պատմական գիտությունների թեկնածու Վ. Գրիգորյան և Ա. Պիսովիչ), «Հայ գրականության սկզբնավորման շրջանի հայերենը» (բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Խաչերյան), «Թե ինչո՞ւ Մաշտոցը թարգմանեց Սողոմոնի առակները» (բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյան»), «Մաշտոցի բանաստեղծությունները» (բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյան), «Մեսրոպ Մաշտոցը և գրերի գյուտը օտարազգի հայագետների դնահատմամբ» (Ա. Քյոչկերյան), «Մաշտոցը և հայ հոգևոր հրգարվեստը» (Ն. Թանմիզյան), «Վարդան Արևելցու գրերի գյուտին նվիրված ներբողը» (Անթաբյան):

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի ուրախ առիթով, սովետահայ մամուլում լույս տեսան բազմաթիվ արժեքավոր հոդվածներ, գիտական լուրջ ուսումնասիրություններ, բանաստեղծություններ, պատմվածքներ և ակնարկներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել առանձին գրքույկով Ակադեմիայի Պատմության ինստիտուտի կազմած «Մեսրոպ Մաշտոց» գիտական հոդվածների ժողովածուն, 395 էջ։ Ժողովածուում վերահրատարակվել են Հ. Մանանդյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» և «Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը», Հ. Մարկվարտի «Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը», Գալուստ Տեր-Մկրտչյանի «Հայ գրերի 1500-ամյակի առթիվ», Ն. Ադոնցի «Մաշտոցը և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների» և Մ. Արեղյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» հոդվածները։

Հայպետհրատը վերահրատարակել է Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն՝ Մ. Աբեղյանի աշխարհաբար թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով։ Գրքի սկզբում հրատարակիչ և խմբագիր Լ. Ա. Պիվազյանը անհրաժեշտ է գտել զետեղել Աբեղյանի 1941 թվականին հրատարակած «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» ուսումնասիրությունը։

Երևանի Պետական համալսարանի հրատարակչությունը վերստին լույս է ընծայել Լեոյի 1904 թվականին գրած «Ս. Մեսրոպ» ուսումնասիրությունը որոշ կրճատումներով, պրոֆ. Մ. Մկրյանի խմբագրությամբ։

«Մեսրոպ Մաշտոց, հայկական գրերի և մատենագրության սկզբնավորումը» վերնագիրն է կրում Գուրգեն Սեակի մենագրությունը, որը հրատարակվում է Հայպետհրատի կողմից, «նպատակ ունենալով ընթերցող լայն հասարակությանը ծանոթացնել հայ մեծագույն լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործունեությանը»։ Գրքույկը միաժամանակ լույս է տեսել նաև ռուսերեն լեզվով։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1962 թվականի երկրորդ համարի առաջին բաժինը նույնպես նվիրվել է Ս. Մեսրոպ Մաշտոցի հիշատակին։ Բաժինն սկսվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի «Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը» հոդվածով։ Տպագրված են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ղարիբյանի «Հայ գրերի և գրության ստեղծող Մեսրոպ Մաշտոցը», պրոֆ. Է. Աղայանի «Մեսրոպյան այբուբենը և ուղղագրությունը», պրոֆ. Կ. Ղաֆադարյանի «Տեկորի տաճարի 5-րդ դարի հայերեն արձանագրությունը և Մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը», Ա. Ղանալանյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայոց բառ ու բանը», Մ. Ղազարյանի «Մեսրոպ Մաշտոցը հայկական կերպարվեստում» ուսումնասիրությունները։

Հայաստանի Գրողների միության վարչության օրգան «Գրական թերթ»-ը իր մայիսի 26-ի 21-րդ համարը ամբողջությամբ նվիրել է Ս. Մեսրոպին։

«Իր հազար վեց հարյուրամյակի բարձունքից մեզ է նայում մեր բարեկամ Մեսրոպ Մաշտոցը»,— գրում է Նիկոլայ Տիխո-

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԴՐՈՇՄԱՆԻՇԸ

նովը— «Եվ մենք երախտագիտությամբ ողջունում ենք նրան՝ խոնարհվելով նրա կյանքի սխրագործության առջև մեր բոլոր հայ բարեկամների հետ»։

Ֆրանսիական «Կայյե դյու Սյուդ» հանդեսի հիմնադիր Ժան Բալարը գրում է. «Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը փրկել են հայ միտքը անիշխանությունից և մոռացումից, իրենց ժողովրդին տվել են գիրը, իր հավերժությունը դարբնող զենքը։ Այդպիսով նրանք փրկում էին հայկական ոգին օտար ազդեցություններից, օտար հրապույրներից... Այս հանճարեղ դյուտարարները թույլ տվին, որ հայկական խղճմտանքը ինքը կազմակերպի իր օրենքները, ամրապնդի իր ավանդությունները, բառերի զրահի մեջ պարփակի թափառիկ, խուսափուկ ու միշտ անկայուն մտածումը։ Հայության ամենից պանծալի այս երկու զավակները՝ Ս. Մեսրոպը և Ս. Սահակը ապահովեցին հայ հանճարի հավերժությունը, հայկական մշակույթի ճառագայթումը մինչև մեր օրերը»։

«Ովկեանական Հայաստան», «Երևան» և «Կոմունիստ» ռեսպուբլիկական թերթերը կիրակի օրվա իրենց համարները նվիրել էին Ս. Մեսրոպ Մաշտոցին և հայ մշակույթի մեծ տոնին։

«Ամենուր, ամեն ժամ ու վայրկյան մեզ ոգնության է հասնում մեր մայրենի, մեր մեսրոպատառ լեզուն... Եվ այսօր այդ լեզվով է, որ մեր բանվորական ողջույնն ենք հղում քեզ՝ մեծ հայրենասերիդ, Մեսրոպ Մաշտոց, քեզ, որ կաս, ապրում ես և կապրես դարեդարձ»,— գրում են էլեկտրատեխնիկական գործարանի մի խումբ բանվորներ։

«Մեծ է Մեսրոպ Մաշտոցի ծառայությունը մեր ժողովրդին,— գրում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։— Կարելի է ասել, որ մշակույթի բոլոր գործիչներից ամենից շատ հայ ժողովուրդը պարտական է Մեսրոպ Մաշտոցին, որովհետև նրա գյուտն ուներ ոչ միայն մշակութային, կուլտուրական, այլ նաև ուներ հսկայական նշանակություն մեր ժողովրդի միավորման ու պահպանման համար»։

«Մեսրոպ Մաշտոցը էությամբ իր ժողովրդի մեծությունը զգացող, նրա համար ապրելու և ստեղծագործելու կոչված մի գերմարդկային երևույթ է,— գրում է Վարպետը՝ Մարտիրոս Սարյան։— Օտար նվաճողները ասպատակում էին մեր երկիրը։ Պետք էր ծնել Վարդան, Վասակ Մամիկոնյաններ, կամ միաբան հայոց մի արքա՝ Արշակ անունով։ Պետք էր։ Սակայն ամենամեծ զորավարն հայոց այբուբենն էր, որը ստեղծվեց Մեսրոպ Մաշտոցի, Սահակ կաթողիկոսի և Վռամշապուհ թագավորի եռանդուն ջանքերով...

Մեսրոպը հայ ժողովրդի ստեղծագործ մտքի հաստատումն է։ Մեսրոպը՝ ինքը հայ ժողովուրդն է։ Ուրեմն մենք նշում ենք ոչ միայն Մեսրոպի, այլև հայ ժողովրդի լուսաշող մտքի հոբելյանը»։

Հայ նկարիչներն ու քանդակագործները ևս իրենց սրտի տուրքը ընծայաբերել են հայ գրչության առաջին և Մեծ Վարդապետի՝ Մեսրոպ Մաշտոցի հիշատակին։

Երևանում բացվել է ավելի քան 50 հայ նկարիչների Մեսրոպ Մաշտոցի կերպարը ներկայացնող ստեղծագործությունների ցուցահանդեսը։

Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական և այլ գրադարաններում կազմակերպվել են հարուստ ցուցահանդեսներ։

ՍՍՌՄ Կապի մինիստրությունը Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ թողարկել է նրա դիմանկարով հոբելյանական գունագարդ նամականիշ։

Նամականիշի վրա պատկերված է Ս. Մեսրոպ Մաշտոցը, նրա կողքին՝ հայկական այբուբենը, և վերևում՝ «1600 տարի», ներքևը, ձախ անկյունում՝ «1962»։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Նկարիչ՝ ՀՐ. ԹՈՒԽԿՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Մայիսի 26-ին, շաբաթ, մամուլում հրապարակվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի հետևյալ որոշումը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը նշանավորելու մասին.

«Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը նշանավորելու համար որոշեց.

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մատենադարան կոչել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան։

Մատենադարանի հրապարակում կանգնեցնել Մեսրոպ Մաշտոցի հուշարձանը։

Աշտարակի շրջանի Օշական գյուղում, որտեղ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, կանգնեցնել հուշասյուն։

Հանձնարարել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային հինգ տարին մեկ կազմակերպել Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակաբաշխություն՝ հայագիտական լավագույն աշխատության համար»։

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Շաբաթ, մայիսի 26-ի իրիկնադեմին, հազարավոր երևանցիներ հավաքվել էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի հրապարակում, որտեղ տեղի ունեցավ Մեսրոպ Մաշտոցի արձանի բացման հանդիսությունը։

Ժամը 6-ն է։ Բեմի վրա են բարձրանում կառավարության անդամները, գիտության, մշակույթի և արվեստի գործիչները, հյուրեր հարևանային ռեսպուբլիկաներից և արտասահմանյան երկրներից։

Հանդիսությունը բացում է Երևանի քաղաքային Սովետի գործադիր Կոմիտեի նախագահ Ս. Վարդանյանը։

Նվագախումբը կատարում է Սովետական Միության և Սովետական Հայաստանի Պետական Հիմները։ Փոթորիկում է բուռն ծափահարություններ։

Զայնը տրվում է անվանի գրող Ստեփան Զորյանին։ «Մաշտոցը,— ասում է նա,— այն երևելի գործիչներից է, որոնց վաստակը երբեք չի մոռացվում։ Նրա գործը միշտ կենդանի է և հանապազօրյա հացի պես սնում է մեր ժողովրդին։ Դպրոցական հասակից մինչև խորին ծերություն նա մեզ հետ է ամեն օր։

Մեսրոպի գյուտը քաղաքական ու կուլտուրական վիթխարի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։

Եվ այսօր հայ ժողովուրդը հուզումնալից սիրով և խորագույն հարգանքով մեծարում է իր անդուգական զավակին, որ հայոց լեզվի մշտավառ ջահը ձեռքին դարեր շարունակ քայլել է իր հետ, քայլել է բոլոր աղետների ու արհավիրքների միջով և հասել մինչև մեր օրերը։ Փո՛ղ հիշատակը նրա միշտ պայծառ մնա»։

Ապա ելույթ են ունենում Պոդչյանի անվան դպրոցի դիրեկտոր, վաստակավոր ուսուցիչ Գ. Թովմասյանը և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ս. Պետրոսյանը։

Խոր հետաքրքրությամբ և ուշադրությամբ է լսվում լիրանահայ քանաստեղծ Վանեն Վանյանի ճառը՝ տոգորված շերմ հայրենասիրությամբ և հուզմունքով.

«Կանգնել եմ հայրենի այն հողի վրա, ուր Մեսրոպ Մաշտոցը անձնատուր է եղել դարերի ընդմիջից մեր ժողովրդի ճանապարհը լուսավորող իր գյուտին։

Կուզենայի, որ իմ նայվածքի մեջ տեսնեիք գոնե մի կայծ հայրենաբաղձ այն կրակից, որ վտարանդի մեր ժողովրդինն է, և իմ ձայնի միջից լսեիք մի շեշտ նրա հուզումներից, մտածումներից և հույսերից։

Զայնը տրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանին։ Նա ասում է.

«Մեր ժողովուրդը խորին գոհունակությամբ ընդունեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշումը՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը նշանավորելու մասին։

Խորհրդանշական է, որ սրանից տասնհինգ և կես դար առաջ, նույն օրը, մայիսի 26-ին, Տզմուտ գետի ափին տեղի ունեցավ մեր ժողովրդի համար բախտորոշ Ավարայրի ճակատամարտը։ Ավարայրում հերոսի մահով ընկան Մաշտոցի աշակերտներից շատերը, որոնք իրենց կյանքի և արյան գնով պաշտպանեցին հայ ժողովրդի ազատությունն ու պատիվը։

Իր բուռն վերելքի և ազգային մշակույթի անեղծությունը ծաղկման մեր լուսավոր ժամանակներում երախտապարտ հայ ժողովուրդը չի մոռանում անցյալի իր մեծավաստակ, անձնվեր զավակներին, չի մոռանում հայ գրերի ստեղծող անմահ Մեսրոպ Մաշտոցին»։

Հայաստանի կենսախինդ պիոներների հուզերն արտահայտեց Նալբանդյանի անվան դպրոցի աշակերտուհի Անահիտ Պարսամյանը:

Նորից տարածվում են Հայաստանի Պետական Հիմնի հնչյունները, ապա դանդաղորեն իջեցվում է սպիտակ պաստառը, և ներկանկարի առջև բացվում է Ս. Մեսրոպ Մաշտոցի արձանը: Ահա մեծ գիտնականն ու ուսուցիչը աջ ձեռքով ցույց է տալիս նորաստեղծ այբուբենը, իսկ ձախը պարզել է դեպի սուրն ու վահանը՝ կարծես ասելով, թե գիրը մեր ժողովրդի ինքնությունը պահելու ամենահզոր զենքն է:

Արձանի հետնամասի ձախ կողմում փորագրված են հայերեն առաջին գրավոր նախադասության բառերը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Արձանի բարձրությունը պատվանդանի հետ միասին 6,6 մետր է: Արձանի հեղինակն է քանդակագործ Ղուկաս Ջուրարյանը:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՆՎԻՐՎԱԾ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ

Կիրակի, մայիսի 27:

Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հանդիսությունների երկրորդ օրն է:

Համազգային այս հոբելյանը իրավամբ վերածվել է հայ ժողովրդի մշակույթի, արվեստի, կիրթության և դպրության փառապանծ տոնի:

Ծերեկվա ժամը 12-ին, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում տեղի է ունենում հոբելյանական հանդիսավոր նիստը՝ նվիրված Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին:

Նախագահությունում տեղեր են գրավել կառավարության, հոբելյանական պետական հանձնաժողովի անդամները, եղբայրական հանրապետությունների ներկայացուցիչներ և սփյուռքահայ հյուրեր:

Հոբելյանական հանդիսության ներկա է նաև Ազգիս Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով:

Թեմի խորքում Ս. Մեսրոպ Մաշտոցի մեծադիր նկարն է, որի ձախ կողմում՝ «1600» և Մեսրոպյան տառերով «ՑԿԲ—ՌՈՆԲ» ոսկեզօծ թվանշանները:

Հոբելյանական կառավարական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ Ա. Քոչինյանը, բացելով հանդիսավոր նիստը, ասում է.

«Այս օրերին Հայաստանի աշխատավորները, Սովետական մեծ Միության բոլոր ժողովուրդների հետ, խորին երախտագիտությամբ ու մեծ հանդիսավորությամբ տոնում են հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր, մեծ գիտնական ու հայրենասեր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Տիրելով Հայաստանին, օտար բռնակալները ձգտում էին վերացնել հայ ժողովրդի դարավոր կուլտուրան, նրա լեզուն ու ազգային ինքնությունը: Ազգային լեզուն և ինքնությունը վերահաս ոչնչացումից փրկելու համար հայ ժողովրդին անհրաժեշտ էր մի հզոր միջոց: Այդ միջոցը նրան տվեց Մեսրոպ Մաշտոցը՝ ստեղծելով հայոց այբուբենը և հիմք դնելով հայ մատենագրությանը:

Գրերի գյուտի շնորհիվ բացվեցին մեր ժողովրդի լեզվի կապանքները և ուժեղ թափով սկսեց զարգանալ հայ մշակույթը: Կարճ ժամանակում ստեղծվեցին պատմագրական, փիլիսոփայական, գեղարվեստական մեծարժեք կոթողներ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը հանդես է գալիս բովանդակալից ճառով:

«Այսօր հայ ժողովուրդը,— ասում է նա, — տոնում է իր մեծ զավակի՝ հայերեն նշանագրերի ստեղծող, հայոց մատենագրության, ուսման ու դպրության հիմնադիր, մեծ գիտնական ու լուսավորիչ անմահ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: ... Մաշտոցի կատարած գործը այն մեծագույն ծառայությունն է, որ կարող էր մատուցել հեռավոր այն ժամանակներում մշակույթի որևէ գործիչ իր հայրենիքին ու հարազատ ժողովրդին: Մեր ժողովուրդը անհուն երախտագիտությամբ, սիրով ու հարգանքով է լցված Մաշտոցի նկատմամբ: Անսպառ ու հարատև մի զգացմունք է դա, որը եղել է, կա ու միշտ կլինի, քանի կա ու կլինի ինքը հայ ժողովուրդը:

Այնուհետև ողջույնի խոսքերով հանդես եկան Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչ Կիրիլ Ցելոլկոն, Բելոռուսիայի Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչ, ինստիտուտի դիրեկտոր Պյոտր Գլեբկոն, Ուզբեկստանի Գիտությունների ակադեմիայի լեզվի և գրականության ինստիտուտի վարիչ, դոկտոր Գանի Արդոտաեմանովը, Վրաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ակակի Շանիձեն, Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մամեդաղա Շիրալիևը, Լիտվայի Գիտությունն-

ների ակադեմիայի թղթակից-անդամ, գրող Անտոնի Վենցլովան, Մոլդավիայի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր Նվգենի Ռուսսեր, Լատվիայի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Էվալդ Սվիմբուլ-Սոկոլը, Կիրգիզիայի Գիտությունների ակադեմիայի անունից բանասիրական գիտությունների թեկնածու Ասֆյար Թուրսունովը, Տաջիկստանի Գիտությունների ակադեմիայի բանասիրական գիտությունների թեկնածու Մամազվաֆո Բակոևը, Թուրքմենիայի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մուխամեդովան, Էստոնիայի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր Վիկտոր Մասլազին, լիբանահայ գրող Արմեն Դարյանը, ամերիկահայ բիոքիմիկոս, պրոֆեսոր Մանասե Սեակը, ամերիկահայ գրող Վահե Հայկը։

Սովետական Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանը հրապարակեց Կառավարական հոբելյանական հանձնաժողովի անունով Միության տարբեր քաղաքներից, գիտական հաստատություններից և գիտության ու գրականության ականավոր գործիչներից ստացված ողջույնի մի շարք հեռագրեր։

Վերջում նախագահող Ա. Քոչինյանը հանդիսավոր նիստը հայտարարեց փակված։

Երեկոյան, նույն դահլիճում, նիստի մասնակիցների համար տրվեց ճոխ համերգ, ռեսպուբլիկայի կատարողական լավագույն ուժերի մասնակցությամբ։

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՐԱՑՈՒՄԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

«Սշակա՜ն.
Քանիսնե՜ր այսօր ֆեզ ուխտի եկան...
Ու դեռ քանիսնե՜ր պիտի գան նորեն...»։

440 թվականից ի վեր, Արագածի լանջին, Մասիսի դիմաց, Օշականի հողն իր ծոցում է պահում հայ հանճարի մեծագույն գանձը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի նվիրական աճյունը։

Հայ սերունդներ սրբությամբ են պահել ու պահպանել և մեզ հասցրել Օշականի այդ ուխտավայրը։

Մայիսի 27-ին, Օշական գյուղի մատույցում, կատարվեց Ս. Մեսրոպ Մաշտոցին նվիրված հայ դպրության հուշարձանի բացումը։

Ժամը 3-ն է։

Հանդիսությունը բացելով, Աշտարակի շրջանային Սովետի գործադիր կոմիտեի նախագահ Մ. Մովսիսյանն ասում է.

«Մեզ՝ աշտարակցիներիս համար առանձնապես թանկ է, որ Մաշտոցը հանգչում է մեր այգեստանում։ Նրա հիշատակը մեկ պարտավորեցնում է ծառայել ժողովրդի բարօրությանն ու երջանկությանը այնպիսի անձնազոհությամբ, ինչպես ինքն է ծառայել, կրթել ու դաստիարակել մեր զավակներին, այնպիսի ջանասիրությամբ, ինչպես դա արել է մեր մեծ դպրահայրը, լինել ժողովուրդների եղբայրության այնպիսի ջատագով, ինչպիսին եղել է ինքը՝ Մեսրոպ Մաշտոցը։

Հավերժ փա՜ռք մեծ լուսավորչին։

Զայնը տրվում է Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանին.

«Շատ կոթողներ են խոյացել Մեսրոպ Մաշտոցի հիշատակին, դրանք մեսրոպատառ գրքերն են, որ հայ ժողովրդի ամեն մի զավակի սրտում անջնջելի հետքեր են թողնում։ Դրանք մեր դպրոցներն են, որոնց հիմնադիրն ու առաջին ուսուցիչը եղել է մեծ Մաշտոցը։ Այսօր, երբ Սովետական Հայաստանը հոյակապ գիտության և սքանչելի կուլտուրայի երկիր է դարձել, անսահման երախտագիտությամբ ես համակվում դեպի այն մարդը, որը քո Ազգի գոյության ամենանհրաժեշտ պայմանն է ստեղծել։

Ամբիոնին է մոտենում Օշականի Մաշտոցի անվան դպրոցի ուսուցչուհի Վ. Գյուլնազարյանը.

«Ես մանկավարժ եմ ու ամեն մի մանկավարժ մաշտոցյան մի-մի ջահ է կրում իր ձեռքում։ Մենք այդ ջահերով լուսավորում ենք այն կամուրջը, որը հայ ուսումնատենչ սերնդին կապում է իր ժողովրդի մշակույթի գոհարներին»։

«Շատ հողմեր են սլացել մեր հողերի վրայով,— ասում է իր ելույթում օշականցի կոլտնտեսական Ս. Իսկանդարյանը,— բայց հայ շինականի շուրթերից նրանք չեն սրբել մեսրոպատառ երգերը։ Մեծ Մեսրոպի փրկած լեզվով հայ գյուղացին այսօր հաղորդակից է դարձել նոր դարաշրջանի ամենապայծառ գաղափարներին»։

Իր ելույթում ողջույնի ջերմ խոսքեր ասաց լիբանահայ մանկավարժ ու հասարակական գործիչ Արմեն Դարիքը։

Սփյուռքահայ գրող Կոստան Զարյանն իր ելույթում ասաց.

«Մեծ են այն ժողովուրդները, որոնք, հավատարիմ իրենց ազգային ոգուն, հաղթաքայլ ընթացել են պատմության դժնդակ քառուղիներով ու հասել լուսավոր կյանքի շողշողուն բարձունքներին։ Եվ ահա տասնվեց դար հետո մենք կանգնած ենք մեծ դպրապետի շիրիմի առջև ավելի ուժեղ, ավելի գիտուն, ավելի համարձակ, քան երբևէ մեր պատմական անցյալում»։

Ներկաները խոր հետաքրքրությամբ ունկընդրեցին նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ Հայր Եղիա Փեշիկյանին, գրող Հմայակ Սիրասին:

Միտինգն ավարտված է, Սովետական Միության և Հայկական ռեսպուբլիկայի Պետական Հիմների հնչյունների տակ ցած է սահում հուշարձանը ծածկող սպիտակ պաստառը և ներկաների առջև հառնում է գրանիտե տասը մետրանոց երկու սյուն՝ հիշեցնելով բացված գիրքը։ Նրա մի էջին Մեսրոպյան խորաքանդակ տառերն են, մյուսին՝ հետևյալ մակագրությունը.

«ԵՎ ԱՅՐ ՄԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, ՊԱՏՄԱԳԱՆ ԴՊԻՐԱՆԵՏ ԻՐԻ ՊԱՀԻ ԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ԱՋՈՎ ԾՆԵՑ ՄԵՐ ՆՈՐՈԳ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ, ՈՐ ԻՐԱՎԱՄԲ ԿՈՉՎՈՒՄ Է ՄԵՍՐՈՊՆԸ, ՈՐ ԻՐԱՎԱՄԲ ԿՈՉՎՈՒՄ Է ՆԱ ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՑ, ՄԻՆՉԵՎ ՈՐ ՆՈՐՈԳ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ ԱՅԼ ՕՐԵՐ ԵԿԱՆ, ԵՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՄ ԻՐ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԶԱՎԱԿԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ»:

Հուշարձանի հեղինակն է երիտասարդ քանդակագործ Զ. Թորոսյանը:

Քիչ անց Օշական տանող ճանապարհը հոսող գետի էր նմանվում։ Բազմությունը գնում էր երախտիք մատուցելու այն նվիրական շիրիմին, ուր հանգչում է Ս. Մեսրոպ Մաշտոցը՝ նրա «աղվոր Ա Բ Գ-են դաս մը» առնելու։

Այնուհետև կառավարական անձնավորություններից բաղկացած մի մեծ պատգամավորություն այցելում է Օշական գյուղը և Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանի վրա ծաղկեպսակներ է դնում։

Մայիսի 28-ին, երեկոյան ժամը 9-ին, կառավարական հորելյանական հանձնաժողովը, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ, կազմակերպում է ջերմ, սրտառուչ մթնոլորտում ընդունելություն, որին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը իր շքախմբով։

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մայիսի 27-ին, Մոսկվայում, Միության-ների տան Սյունաձարդ դահլիճում, տեղի է ունենում Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հիշատակի հանդիսավոր երեկո, որին մասնակցում են մայրաքաղաքի աշխատավորներ, արվեստի և գիտության գործիչներ, եղբայրական հանրապետությունների բազմաթիվ գրողներ։

Հանդիսությունը բացվում է ՍՍՌՄ Գրողների միության վարչության քարտուղար Վ. Կոժևնիկովի ներածական խոսքով։

«Մենք,— ասում է նա,— այսօր մեծարում ենք հայ ժողովրդի մեծ զավակ Մեսրոպ Մաշտոցի հայրենասիրական գիտական անմահ սխրագործությունը։ Անչափ մեծ է նշանակությունն այն գործի, որ արել է Մեսրոպ Մաշտոցը Հայաստանի համար, եղբայրական բոլոր ժողովուրդների կուլտուրաների համար։

Մեսրոպ Մաշտոցը, ստեղծելով ազգային դպրություն, ծարավի էր տեսնել գրականությունը մայրենի լեզվով։ Եվ այդ գրականությունը ծաղկեց որպես ժողովրդի սրտի, բանականության և ոգու անգնահատելի շնորհ։

Այնուհետև հանդիսավոր նիստում Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործունեության մասին զեկուցում է հայտնի գրող Մարիետտա Շահինյանը։

Երեկոյում ելույթներ են ունենում Հայաստանի գրողներ Ն. Զարյանը, Ս. Կասյուտիկյանը, Ուկրաինայից Մ. Բաժանը, Մոլդավիայից Ս. Լուպանը, Ադրբեջանից Մ. Ռահիմը և ուրիշներ։

Հայ ժողովրդի հետ միասին, եղբայրական բոլոր ժողովուրդները, որպես հայ մշակույթի պանծալի տոն, նշում են Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։

Ա. Հ.



ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Նկարիչ՝ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՕՇԱԿԱՆՈՒՄ

Այստեղ, այս հողի տակ, այրվում է, հրկիզվում.
Հողի տակ արեգակ և հողի տակ երկինք,
Եվ հողի տակ մի սիրտ և հողի տակ լեզու,
Եվ հողի տակ անմահ աղբյուրն հայոց երգի:

Մեռյա՞լ է նա արդյոք, բայց որպիսի՜ մեռյալ.
Հողի պես անվախճան, հողի պես հողմածեծ,
Օ՜, նա հողն է հայոց լույսի՝ սիրո մեհյան,
Հերկը մեր դպրության՝ սերմնացանով իր մեծ:

Ակունքը քերթության՝ տեսած հապար ավեր,
Խոյանքը մեր հոգու, դուռը մեր՝ հանճարի,
Ու հին գմբեթի տակ, հին ու սրբանվեր,
Դուք չե՞ք լսում կվարթ կարկաչը լույսերի:

Դրանից չէ՞ արդյոք, որ դաշտերում կմրուխտ
Եվ արտերում, ուր որ արևն է բարբառում,
Որպես ցորյան, որպես հայոց հացի բուրմունք,
Կենաց պես Մեսրոպն է մեր հոգու դեմ հառնում:

Ամեն, ամենուր է գոյությունը նրա,
Մեղվի պես ժողովում ոսկե փոշին գրոց,
Օ՜, նա դեռ գրում է գրչով իր եղեգնյա՝
Մագաղաթին հանձնում ճանապարհը հայոց:

Այստեղ, այս հողի տակ, այրվում է, հրկիզվում,
Հողի տակ արեգակ, և հողի տակ երկինք,
Եվ հողի տակ մի սիրտ, և հողի տակ լեզու,
Եվ հողի տակ անմահ աղբյուրն հայոց երգի...



ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՏՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ*

Ո՞ւր էր ոգին այն հպոր, ո՞վ էր արդյոք որ պիտի
Փայլատակվանը մտքի խառնած կրակն իր սրտի
Զև տար հայոց հնչյունին,
Հույս, հայրենիք՝ անտունին,
Հավատ՝ հայոց աստղաշատ երկնքի տակ ապրելու,
Նրա սարերը ծուփ-ծուփ,
Աղբյուրները սիրելու,
Նրա պաղ-պաղ ջրերից,
Սիրածի տաք համբույրից
Ուժ առնելու, պահելու այդ հպոր սերը անշեջ,
Ինչպես հնչյուն՝ քանդակված ամեն հայի սրտի մեջ:

Հասավ ժամը լուսավոր,
Պա՜հն ստեղծման... ու մի օր
Ճախրեց ոգին հանճարեղ ամենասուրբ Մաշտոցի,
Ցրեց գիշերը մթին, վանեց խավարն իր խցի,
Տքնեց երկա՜ր, անտրտո՜ւնջ:
Աղբյուրի պես կարկաչում,
Զև էր առնում հայրենի լեզվի ամեն մի հնչյուն,—
Երանելի, երազած հայոց գիրը առաջին,
Նոր շունչ տալիս ստեղծման հայրենավառ իր տենչին,
Նոր լույս՝ թոշնած արտերին,
Նոր հույս՝ կոտրած սրտերին...
Եվ նոր լույսով այդ հանկարծ
Ողողվում են սրբատաշ կամարները մթագնած,
Նոր արևն է ճառագում, իր հետ բերում նոր բարին՝
Հայոց բարձրի՜կ աշխարհին:

Ինքը իրեն մոռացած,
Լույս ճակատը ափի մեջ՝ մագաղաթին խոնարհած՝
Անվերջ գրում է, գրում նա իր գունատ մատներով,
Մե՜ծ տքնության խոր սիրով
Հայոց գիրը՝ կյանքի պես հարազատ ու սրտագին,
Կենդանություն է տալիս իր լուսավառ տենչանքին,
Երակներին իր պայծառ...

* Տպագրվում է որոշ կրճատումներով։

Ասես տեսնում է անա
Հայ մանուկներ՝ ձեռքերնին իր նոր գրերը պահած
Կարդում են օր ու գիշեր,
Կարդում լեկվով մայրենի,
Որի հմա՞յքը թովիչ և որի ո՞ւժը չունի
Ո՞չ մի հզոր կորավար, ո՞չ մի ծաղիկ խնկաբույր,
Կարոտի ո՞չ մի համբույր:
Եվ թռչում է, թևածում գիրը հայոց դպրության,—
Ինչպես անմար արևի ճառագայթը լապտերյան,
Ինչպես շո՞ւնչը կենարար,
Ինչպես գարո՞ւնը կանքի,
Ինչպես պտուղն անդրանիկ դարերի լույս տենչանքի:

Մեսրոպյան գիրը հասավ հայոց լեռները բոլոր,
Մտավ շենե՞ր, ավանե՞ր...
Ու նա տեսավ՝ թե մի օր
Ինչպես լեկվով մայրենի ամեն ոգի արթնացավ,
Օջախներից կիսավեր կյանքի նոր ծուխ բարձրացավ,
Սկիզբ առավ խոսքը նոր՝ բխած բալում սրտերից,
Հացը եկավ արտերից,
Սերը մահվանը հաղթեց, բացվեց ժպիտը գարնան
Լո՞ւյս մատյանով Մեսրոպյան:

Եկան, անցան արքաներ և բյուր թագեր փոխվեցին,
Բայց գրերը Մեսրոպյան աստղերի պես մնացին
Վա՞ռ ու վսե՞մ, հավերժո՞ղ,
Անմար՝ ինչպես լույսը շող,
Ինչպես հույսի՛, հավատի՛ և գրության մեծ մատյան,
Որ մեր հոգո՛ւմ, մեր սրտո՛ւմ
Ու մեկ հետ է հավիտյա՞ն:

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ*

Այն սև՛ օրերին, ծա՛նր օրերին,
Երբ հողը հայոց նշխարի նման,
Դաժան մատներով կիսվել էր արդեն երկու բեկորի,
Եվ ապատության հալածված ոգին,
Իջած դրոշից մեր ոտնահարված,
Ապաստանել էր լոկ սրտերի մեջ, որ մխար այնտեղ անեղավրեժ,
Օ՜, այն օրերին, որպես փրկության հպոր էլեքսիր,
Դու աշխարհ եկար, հայոց այբուբեն:

Կյանքի՜ կոչվեցիր,
Որ կյանքը հայոց բոցկլտար հավետ իր հին օջախում,
Որ պարսիկները՝ արևի անվամբ չմարեին վառ արևը հայոց,
Որ Արևմուտքը, մեկ Աստված տալով, անաստվածորեն մեկ չկոխոտեր,
Եվ որ Արաբիո ու Մոնղոլիայի հեղեղները հորդ
Մեր Արարատյան արգավանդ դաշտից
Որթատունկերը մեր չխլեին:

Դու եկար, որ մեր ոգվի շեփորին դառնաս ձայնակից.
Հրամա՜ն դառնաս վսեմ Վարդանի մատների ներքո,
Դառնաս Գահնամա՜կ Հայոց աշխարհի,
Երգի՜ փոխարկվես,
Եվ Ավարայրի սրբական մարտում
Նահատակվելով, ելնե՜ս, բարձրանա՜ս...

Քեզ կյանք շնորհվեց, հայոց այբուբեն,
Որ մեր Եղիշեն մահարձան կերտեր մեր անմահներին,
Որ Խորենացին դառնար պատմահայր մի մասիսակերպ,
Որ Շիրակացին արևը գրկեր տիեզերամուխ իր երակներում,
Որ հայ հանճարի խոյ խառնարանից
Երկինք բարձրանար Ողբը Նարեկյան,
Եվ գույները վառ մեր երակների ու մեր բորբ ծաղկանց
Մագաղաթների դեմքին դրոշմվեր
Թորոս Ռոսլինի կախարդ վրձինով:

Եկա՜ր, որ դառնաս հոգեհույզ նամակ՝ առ հույժ սիրելին,
Սրտից-սիրտ հոսես՝ ինչպես ջուրը պաղ՝ պապակ դաշտերում,
Որ թոռան թոռի՛ն թղթերում թողնես անունն իր նախնու,
Իր ե՜րգը պահես նրան հիշատակ,
Եվ, որ դարերով ու աշխարհով մեկ ցրված հայության հոծ կանգվածներին
Շաղկապե՛ս միմյանց,
Պոհպանե՛ս, պահե՛ս օտար հողմերի ու շանթերի դեմ:

* *Տպագրվում է որոշ կրճատումներով.*

ԳԱՌԱ ԿԱՄՈՒՐՋԻ ԱՐՁԱՆԻՔ ՄԱՏԻՆԼԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ

Հեղինակ՝ Բաղդասարյան Գրիգորի

ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՆԱՆՍԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ՇԻՐՄԱՔԱՐԻ ԱՌԱՋ

Այստեղ ննջում են դարերն անմոռաց,
Ննջում է այստեղ հանճարը մեր ծով,
Քնարի ոսկե լարեր կան քնած
Այս մենության մեջ անխոս թվացող:

Այս լռության մեջ կա մի քաղցրաձայն,
Կա մի բարձրաձայն երգի ելևէջ,
Մի ժողովրդի իմաստուն անցյալ՝
Իմաստուն բոլոր անցյալների մեջ:

Ննջում է այստեղ երգը մեր հոգու՝
Հավերժ արթնության խորհրդով իր թանկ,
Հայոց դպրության տաճարի հենքում
Որպես առաջին հիմքը անխորտակ:

Ապրում է այստեղ լյառը մեր Ալզի,
Որով մնացինք դարերում կանգուն,
Ապրում է այստեղ տառը մեր ոսկի՝
Իր ստեղծողի հոգու պես անքուն:

Բացում դարեր են մոմի պես գունատ
Վառվել այս քարին, հալվել այս քարին,
Բայց իմաստության լույսով անարատ
Նա մեկ կապել է արար աշխարհին:

Մահեր ենք տեսել արյունոտ պահեր,
Անհերով լցված թրերի շառաչ,
Ու թրերի դեմ այն աշխարհավեր
Գրերն ենք պարզել ամենից առաջ:

Թրերն արյամբ են ներկվել անդադար,
Գրերն օծվել են մատյանում ոսկով,
Ու թրերի դեմ ժանգոտած ու չար՝
Փայլել են նրանք հրեղեն խոսքով:

Չար կենքի լեկվով խոսողն է մեռել.
Անհուշ գնացել ու անհիշատակ,
Ոռ իր հանճարի կենքով է կռվել
Աշխարհի հանդեպ հառնել է շիտակ՝

Իր մարմարեղեն տապանաքարով,
Իր գոռ պայքարով մահու և կենաց,
Հայի անունով, հայի քանքարով
Եվ իմաստախոհ երգով Հայրենյաց:

Նրա երակն է ճախրում վեհորեն,
Հին ու հինավուրց իր Հայաստանում,
Իր հայությունն է երգում հայերեն
Եվ աշխարհներին իր երգն է տանում:

Քնարի քնքուշ լարեր կան քնած
Այս մենության մեջ անխոս թվացող,
Այստեղ ապրում են դարերն անմոռաց,
Այստեղ արթուն է հանճարը մեր ծով:

ՄԵԼԲՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՊՊՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հեղինակ՝ Քանդակագործ Զ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՔԱՂԱՔՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՏԵՆՋՅԱՆ

ՆԵՐԲՈՂ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

(ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ)

Սուրբ Էջմիածին, Տաճար լուսածին, հայի հոգետուն,
Հույսի տապանակ, դու ձեռքի մական հային վաչկատուն,
Հոգու աչքերով միայն կարդացվող դու անգիր մատյան,
Անթարթ աչքին տակ Ակգի նահապետ ալեհեր լեռան:

Վսեմին հաղորդ հոգում գերբնածին հայ առաքյալի
Երկնքից կաթեց աստղը գգվաշող. ձայներ խաչյալի
Երապի լեզվով խոսեց, ցույց տվեց բակկով լուսավառ՝
«Սա է տեղիդ իմ, ի սմա լանուն իմ շինեսջիք Տաճար...»:

Հային հաջողվեց մայրենի լեզվով խոսել Աստծու հետ
Հոգեշենքում, որ Փրկչին էր ծոնել մեր մեծ Հայրապետ.
Եվ Էջմիածին դարձավ ինքնուրույն աղոթքի խորան՝
Մենավոր կանգնած, բայց Ակգի կուրծքը արած հենարան:

Անթիվ դարերի մեր տառապանքին սրտցավ ուղեկից,
Գորովագութ Մա՛յր, կաթդ ջամբեցիր հավատի ակից.
Զխզվեց երբեք անտեսանելի լարը հոգեծին,
Որով տարագիր որդիներդ միշտ քեզ կապված մնացին:

Ո՞վ հայ ուխտավոր, երբ դու այցի գաս Սուրբ Մայրավանքին.
Թող հպարտանքի քաղցր հուզումով լցվի քո հոգին.
Քանի տիտաններ այստեղ ապրեցին այն հին դարերում,
Որոնց արյունն է եռում տակավին քո երակներում:

ԱՆՏՈՒԱՆ ՄԵՑԵ

ՀԱՅ ԱՅԲՈՒԲԵՆԸ ԳԼՈՒԽ-ԳՈՐԾՈՑ ՄԸՆ Է

Ույն բնատիպարին հետևելով է, որ հայերը կազմեցին իրենց համար այբուբեն մը, գրական լեզու մը և գրականություն մը:

Հայտնի է, որ հայ այբուբենը գլուխ-գործոց մըն է: Հայ հնչաբանության հնչյուններեն յուրաքանչյուրը հատուկ նշանով մը նոթագրված է, և սիստեմը այնքան լավ հաստատված է, որ Հայ Ազգին հայթայթած է հնչաբանության վերջնական արտահայտություն մը, արտահայտություն, որ պահպանված է մինչև այսօր առանց փոփոխություն մը կրելու, առանց բարելավում մը ստանալու պետք ունենալու, վասնզի սկիզբեն իսկ անիկա կատարյալ էր:

Աստվածաշունչին թարգմանիչը հույն բնագիրը բառ առ բառ հայերենի վերածած է, առանց նշանակելի կերպով փոփոխելու որևէ ֆրազի կառուցումը, պահելով միշտ բառերու կարգը: Իրավունք ունինք ուրեմն ըսելու, թե հույն բնատիպարին կատարելապես հետևած է հայ թարգմանիչը:

Ադոր հետևանքով՝ Հայաստան ունեցավ ճապուկ գրական լեզու մը, որ հույն բառապաշարին բոլոր արժեքները կարտաբերե: Այսպես կազմվեցավ գրական լեզու մը, որ ճոխ է և որ կրնար արտահայտել ամեն ինչ, որ հույն լեզուն կարող էր բացատրել:

Այդ լեզվին ճոխությունն ու ճկունությունը ուժ մը եղած են Հայ Ազգին համար՝ այդ թարգմանության օրեն ի վեր: Հայ Ազգը անոր հավատարիմ մնացած է, և ան ինքզինքը կպատվե՝ դեռ այսօր ալ տոնախմբելով այդպիսի ստեղծագործության մը հիշատակը:



ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՄԱՐՄԱՐՅԱ ՆՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԸ



ԺԱՆ ԲԱԼԱՐ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ ԱՌԹԻՎ

Եմ ուզեր հոդվածի մը հանգամանքը տալ այս քանի մը տողերուն: Ի՞նչ համարձակությամբ պիտի կարենայի այդպիսի հավակնություն մը ունենալ: Հոգիով թեև այլևս կապված հայ ժողովուրդին, բայց կդառնամ բոբիկ, երբ ոտք դնեմ անոր հրաշալի դպրության անդաստանին մեջ: Սերն ու հիացումը չեն կրնար միշտ փոխարինել գիտությունը:

Լսած էի իմարկե, Ս. Մեսրոպ վարդապետի անունը, Նարեկացիի թարգմանիչն: Գիտեր թե ո՛վ էր ան և ի՞նչ էր ըրած:

Շատ հստակ է այլևս ինձի համար հինգերորդ դարու հայկական այս հրաշքը: Չեմ գիտեր, թե այսօրվան բոլոր հայերը կըմբռնե՞ն անոր իրական արժեքն ու մեծությունը:

Լավ է, որ հրաշք մը երբեմն դիտվի նաև դուրսեն, օտարի աչքերով:

Հայությունը ամեն տարի կտոնե հիշատակը իր վավակներեն երկու ամենեն պանծալիներուն՝ Ս. Մեսրոպի և Ս. Սահակի:

Բայց ո՞վ են անոնք. պատերազմիկնե՞ր, ծովակալնե՞ր, մեծ օրենսդիրնե՞ր... տարածա՞ծ են անոնք հայկական գերիշխանությունը հեռավոր երկիրներու և անծանոթ ծովերու վրա... արդյոք երգած են իրենց ժողովուրդին փառքե՞ր, կերտած անոր օրենքնե՞ր, կայն սփոփա՞ծ, կայն մխիթարա՞ծ...

Ավելի՛ն ըրած են անոնք և ավելի գեղեցիկը. փրկած են հայ միտքը անիշխանութենե ու մոռացումե: Իրենց ժողովուրդին տված են ԳԻՐԸ, իր հավերժությունը դարբնող կենքը: Ան կփոխարինե բառերու «ասեղնագործություն»-ը, մտածված, կշռված երկաթագիր վկայությամբ մը, մնայուն և անհերքելի, որ գրված մտածումն է:

Այսպիսով անոնք կփրկեին հայկական ոգին օտար ազդեցություններե, օտար դյութանքներե, կապատեին վայն անգիր դպրության մը տիրապետութենեն, գավառաբարբառներու խառնիճաղանճեն, ուր այդ ոգին ի վերջո պիտի կորսվեր, իբրև խեղճ միջակություն մը:

Այս հանճարեղ գյուտարարները թույլ տվին, որ հայկական խղճմտանքը ձևակերպե իր օրենքները, ամրապնդե իր ավանդությունները, բառերուն վրահին մեջ պարփակե թափառիկ, խուսափուկ ու միշտ անկայուն մտածումը:

Առաջին ակնարկով մեկի այնպես կթվի, թե տղայական խաղ է այբուբենի գյուտը:

Բայց մտածումին ուժգնությունը, անոր գոյությունն իսկ, կախում ունին տառերու ձևեն, անոնց միացման եղանակեն, ա՛յն կարգ ու սարքեն, որուն կենթարկվին բառերը:

Լեզուն ենթարկելով գրության օրենքներուն, քերականության, համաձայնության, շարադասության կանոններուն, հայության ամենեն պանծալի այս երկու վավակները՝ Ս. Մեսրոպ և Ս. Սահակ ապահովեցին հավերժությունը հայ հանճարին, ճառագայթումը հայկական մշակույթին՝ մինչև մեր օրերը:

Անգնահատելի գանձ, անգին բարիք, կորս ո՛չ մեկ թագավոր, ո՛չ մեկ զորավար, ո՛չ մեկ հերոս կամ սուրբ կրնան իբրև ընծա տալ իրենց ժողովուրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, ուխտավորությամբ Մայր Աթոռ ժամանեցին Հունաստանից պր. Ա. Պետրոսյանը և Պզտիկյանը, Բեյրութից տեր և տիկին Հ. Ալթունյանները։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առջև, իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, ուխտավորները բարձրացան Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի օրհնությունները ստանալու։

***

ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԿՐԿՆԱԶԱՏԻԿ» («Նոր կիրակի»)։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ («Աշխարհաշատրան» կամ «Կանաչ կիրակի»), Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը բնաբան ունենալով «Աքանչելի է խորհուրդ տնօրէնութեան քո Քրիստոս, որ իջեր ի Հօրէ ի սէր հարսին Եկեղեցւոյ զոր ընտրեցեր»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ («Կարմիր կիրակի»), Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պոզապալյանը, բնաբան ունենալով «Ինքէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են քարոզութիւնք մեր, ընդունայն են և հաւատքն Ձեր»։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ։

***

ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ինքնաթիռով, տեր և տիկին Հ. Ալթունյանները մեկնեցին Բեյրութ, Մայր Աթոռից և Հայրենիքից իրենց հետ տանելով լավագույն տպավորություններ։

***

ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, Վեհափառ Հայրապետի հրավերով, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Եղիա Փեչիկյանը, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հոբելյանի տոնակատարության առթիվ, ժամանեց Մայր Աթոռ։

***

ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Երևումն Ս. Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Եղիայանը, բնաբան ունենալով «Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն, զՔրիստոս պտղաբերեցեր»։

Սուրբ պատարագին ներկա էին սփյուռքահայ բազմաթիվ ուխտավորներ։

***

ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրավերով, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հոբելյանական տոնակատարության առթիվ, Մայր Աթոռ ժամանեցին Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ից պրոֆ. Մանասե Սեակը և Բեյրութից բանաստեղծ պր. Վահե Վահյանը։

***

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Վեհափառ Հայրապետի հյուր գրող պր. Կոստան Զարյանը իր տիկնոջ հետ։





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ն. ՏԻՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Ե ԴԱՐԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՆԳՈՒՑԱՑԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ե դարի Հայաստանյայց Եկեղեցու պատմության և գրականության մի քանի հարցեր մինչև այսօր դեռ չեն ստացել իրենց լուծումը և շարունակում են լուրջ վիճաբանության առարկա լինել։

Դրանք հատուկ կարևորություն ունեն Ե դարի շարժումն ըմբռնելու համար, ուստի և անհրաժեշտ ենք համարում նրանց վրա կանգ առնել և նրանք ըստ հնարավորության լուսաբանել։

Այդ կարևոր հարցերը հետևյալներն են.

Ա. Հայոց Եկեղեցին կամ թեկուզ նրա ականավոր ներկայացուցիչներից մեկը Ե դարում ընդունե՞լ է Քաղկեդոնի 451 թվականի ժողովի որոշումները և ընդհանրապես Քաղկեդոնի ժողովը որևէ դեր խաղացե՞լ է հայերի կյանքում Ե դարի երկրորդ կեսի ընթացքում։

Բ. Ի՞նչպիսի հակամարտ մտավորական հոսանքներ են եղել հայերի մեջ Ե դարի երկրորդ կեսին և ի՞նչ խնդրի մեջ է եղել նրանց հակամարտության էությունը, կամ այդ հակամարտության որևէ արտահայտություն հասե՞լ է մեզ։

Գ. Ի՞նչ աղանդներ են եղել Հայաստանում Ե դարում և նրանք առհասարակ որևէ վտանգ ներկայացրե՞լ են Հայոց Եկեղեցու և ժամանակի մտավորականության և մտավոր շարժման համար։

Դ. Նեստորականների դեմ Հայաստանում Ե դարում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կողմից սուր պայքար մղվե՞լ է իրոք, թե այդ պայքարը մեր ժամանակի բանասերների հերյուրանք ու գյուտ է, ինչպես կարծում և պնդում են ոմանք (Ս. Մալխասյանց և ուրիշներ)։

Ե. Թադեոս առաքյալի վկայությունը կամ, ավելի ճիշտ, Թադեոս առաքյալի շուրջը Հայաստանում կազմված և տարածված ավանդությունը ո՞ր ժամանակի գործ է. կարո՞ղ է այն կազմված լինել Ե դարի երկրորդ կեսում, շուրջ 470 թվականին, ինչպես պնդում է Ս. Մալխասյանցը։

Զ. Հայոց Եկեղեցու Ե դարի պատմության համար ի՞նչ արժեք են ներկայացնում վրաց Արսեն կաթողիկոսի տված տեղեկությունները։

Է. Ի՞նչ կերպարանք կստանար ընդհանուր պատմական զարգացումը հայերի մեջ, եթե նրանք ընդունած լինեին Քաղկեդոնի ժողովի որոշումները։

Ակադեմիկոս Մ. Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմության» I հատորում (Երևան 1944) և հայտնի բանասեր ակադեմիկոս Սա. Մալխասյանցը իր «Մատենագիտական դիտողություններ» աշխատության մեջ (Երևան 1961) անդրադարձել են այդ հարցերին, յուրաքանչյուրը բերելով իր ուրույն լուսաբանությունները։

Մեր նպատակն է այս յոթ հարցերի շուրջը համառոտակի մեջ բերել մի քանի, մեր կարծիքով հույժ կարևոր, դիտողություններ։

Ա. Քաղկեդոնի ժողովի ճարը և Հայոց եկեղեցու վերաբերմունքը դեպի այդ ժողովի որոշումները։ Քաղկեդոնի ժողովի ընդունած դավանական որոշումը միանգամայն հակառակ էր այն ժամանակվա ամբողջ քրիստոնյա Արևելքի դավանողներին, կա-

թեի է ասել՝ Արևելքին զրկում էր իր հավատքը և իր հիմքում զուտ արևմտյան, հռոմեական էր։ Արևելցիները միշտ այն անփոփոխ կարծիքին են եղել, թե Քաղկեդոնի վարդապետությունը հայհոյություն է մարդեղության խորհրդի դեմ, մի անգամ արդեն նզովված նեստորականության վերադարձն նշանակում։ Իրոք «միաբնակությունը» հատկապես Աթանաս Ալեքսանդրացու դավանական հայացքների հետևողական զարգացումն է ու օրինական ժառանգը, այլև հունական քրիստոնեության համապատասխան արտահայտությունը»[1] կամ, այլ կերպ ասած՝ «միաբնակությունն իրոք օրգանապես և աննկատելի կերպով առաջացել էր հունական-ալեքսանդրյան աստվածաբանությունից»[2]։ Քաղկեդոնի ժողովին հետևող 68 տարվա պատմությունը կարելի է քաղկեդոնականության ամենախիստ դատապարտություն անվանել։ Քաղկեդոնի ժողովին մասնակցող եպիսկոպոսների ճնշող մեծամասնությունը (հատկապես Իլլյուրիացիները, Պաղեստինն ու Եգիպտոսը) մտածում էր այնպես, ինչպես Կյուրեղ և Դիոսկորոս Ալեքսանդրացիները, և ոչ թե ինչպես Հռոմի Լևոն պապը կամ Բյուզանդիայի պատրիարք Ֆլավիանոսը։ Ուրիշ խոսքով՝ նրանց հավատի իսկական արտահայտությունն էր «մի Քրիստոս յերկուց բնութեանց», ըստ որում մարդեղությունից հետո Բանն Աստված միայն «միաւորեալ մի բնութիւն» է ունեցել։ Իզուր չէր, որ Քաղկեդոնի ժողովը չհամարձակվեց նույնիսկ Դիոսկորոսին դատապարտել հերետիկոսության համար, այլ նրան աթոռից զրկեց նրա կողմից թույլ տրված անկանոնությունների և ժողովին չհնազանդվելու համար։ Կոստանդնուպոլսի պատրիարք Անատոլիոսը և ժողովի մեծամասնությունը, հակառակ Հռոմի պատվիրակների գործ դրած ճնշման, հենց Քաղկեդոնի ժողովում փորձ արին մի այնպիսի բանաձև ընդունելու, որ գործ էր ածում «յերկուց բնութեանց» բանաձևը և թույլ էր տալիս մարդեղությունից հետո միայն մի բնության մասին խոսելու։ Իրեն հակաճառողների դեմ Անատոլիոսը սառնորեն և հաստատակամ պնդում էր, թե Դիոսկորոսը բանադրված չէ իբրև հերետիկոս, նրա դավանած մի բնության վարդապետությունն ուղղափառ է և Կյուրեղյան։ Եթե կայսրն անձամբ չմիջամտեր և եպիսկոպոսներին չարգելափակեցներ Իտալիայում նոր տիեզերական ժողով գումարել տալու ահաբեկիչ հեռանկարով, Քաղկեդոնի բանաձևը երբեք չէր ընդունվի ժողովի մեծամասնության կողմից[3]։

Այսպիսով, Քաղկեդոնի ընդունած դավանությունը, փորձելով ոչնչացնել Արևելքի հավատը և խռովություն գցել ամբողջ արևելյան Բյուզանդական կայսրության մեջ, իրենից բոլորովին հրել է և անդառնալիորեն հեռացրել բոլոր ազգային եկեղեցիներին, որոնք և շտապել են միաբնակության օգնությամբ արագորեն առանձնանալ և իրենց ազգային ինքնուրույն ճանապարհով ընթանալ։

Այս էր ընդհանուր դրությունը։ Իսկ ի՞նչ էր Հայոց Եկեղեցու վերաբերմունքը դեպի այս զարգացումը։

Մեր գրականության մեջ մինչև այժմ չի գտնված և ոչ մի գրական տեղեկություն այն մասին, թե հայերը ե դարում (խոսքը, իհարկե, այդ դարի երկրորդ կեսի մասին է) ընդունած լինեն Քաղկեդոնի ժողովի դավանությունը։ Ընդհակառակը, մեզ հասած բոլոր տեղեկությունները միաբերան վկայում են, որ հայերն սկզբից ևեթ բացասական դիրք են բռնել դեպի այդ ժողովը և ե դարի վերջում կամ Զ-ի սկզբում բացարձակապես դատապարտել են այն։ Հայոց Եկեղեցու ղեկավարների և հայ ականավոր գործիչների քաղկեդոնականություն ընդունած լինելու առասպելն ստեղծել են Կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչները, հատկապես Մխիթարյանները, որոնք կաթոլիկ-քաղկեդոնական են հայտարարել և՛ Հովհան Մանդակունուն, և՛ Հովհան Օձնեցուն, և՛ ուրիշներին։ Մեզանում էլ, դժբախտաբար, գտնվել են բանասերներ, որոնք անքննադատորեն կրկնել են կաթոլիկ-քաղկեդոնականների այդ շատ հին տեսությունը՝ առանց հաշվի առնելու ամենաակնհայտնի փաստերը։ Ներկա գիտությունը նոր ասպարեզ եկած աղբյուրների օգնությամբ վերջնականապես մերժել է այդ հերյուրանքները, ապացուցել է, որ հիշված եկեղեցական գործիչներից և ոչ մեկը չէր կարող քաղկեդոնական եղած լինել։ Այս կապակցությամբ բավական է միայն հիշել Հովհան Օձնեցու հրավիրած 726 թվականի ժողովի վավերական արձանագրությունները, որոնք մնացել են ասորերեն լեզվով և միանգամայն հակաքաղկեդոնական բնույթ ունեն[4]։

[1] A. Harnack, «Dogmengeschichte 3», Bd. II, էջ 374։

[2] Möller-von Schubert, «Kirchengeschichte», 2 Auflage, I Bd., էջ 668։

[3] Այս մասին ավելի ընդարձակ տե՛ս իմ «Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը» հոդվածը, «Տեղեկագիր» ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի, Երևան, 1943 թ., էջ 71—78։

[4] Տե՛ս Ն. Տեր-Միքայելյան, «Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ», էջմիածին, 1908 թ., էջ 185—205։

Վերջիս մի փորձ էլ եղավ Մովսես Խորենացուն քաղկեդոնական հռչակելու և մինչև անգամ հայտարարելու, որ հայերը Ե դարի երկրորդ կեսին «լռելյայն» ընդունել են Քաղկեդոնի ժողովի որոշումները։ Սակայն այս հարցի մասին պատմական տեղեկություններ ու փաստեր բոլորովին չկան, իսկ ընդհանուր դատողություններից հանված եզրակացություններն ամենևին չեն համապատասխանում պատմական իրականությանը, ինչպես մենք ցույց ենք տվել մեր «Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը» ընդարձակ հոդվածում («Տեղեկագիր» ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի, 1943 թ., № 2)։

Մեր այդ հոդվածի աղդեցության տակ՝ նորահնար տեսության ջատագով Ս. Մալխասյանցը, որ սկզբում գրում էր, թե Մովսես Խորենացին ու իր ընկերակիցները, կրթություն ստացած լինելով Արևմուտքում՝ «բնականապես պետք է քաղկեդոնական լինեին», արդեն իր երկրորդ հոդվածում ստիպված եղավ ընդունելու, որ Խորենացին մինչև 451 թվականը պետք է Կյուրեղյան միաբնակ եղած լինի, իսկ այդ թվականից հետո, Քաղկեդոնի ժողովի որոշման համաձայն, դարձած լինի երկաբնակ քաղկեդոնական. մի պնդում, որ անհիթեթ է և միևնույն ժամանակ անարդանք Մովսես Խորենացու հիշատակին, որովհետև, ինչպես ասում է Մալխասյանն ինքը, մի բոպե անդամ չի կարելի թույլ տալ, որ «Խորենացին իր համոզմունքը փոխեր որևէ պատճառով, թեկուզ եպիսկոպոս կամ կաթողիկոս ձեռնադրվելու համար։ Մալխասյանցի այն պատճառաբանությունը, թե Խորենացին չէր կամենա հերձվածող դառնալ քաղկեդոնական ժողովի դեմ, բոլորովին անիմաստ և անհիմն է, քանի որ խոսքը վերաբերում է մի այնպիսի ժամանակի, երբ, ինչպես հայտնի է պատմությունից, ամբողջ Արևելքն ու Խորենացու կրթավայր Ալեքսանդրիան ո՛չ միայն չէին ընդունում Քաղկեդոնի ժողովը, այլ նզովելով մերժում էին այն և նույնիսկ հալածում ու սպանում էին Քաղկեդոնի կողմն անցած եպիսկոպոսներին։

Բոլոր նման պնդումներն անհիմն են և դրանք ապացուցելու համար ոչ մի փաստ չկա։ Բայց որպեսզի ընթերցողի համար պարզ լինի, թե ի՛նչպիսի անտրամաբան դատողությունների հիման վրա են նման պնդումներ արվում, հարկ ենք համարում մի բառացի հատված մեջ բերել նույն Ս. Մալխասյանցի դրածից։

Ապացուցելու համար, թե Հայոց Եկեղեցին Ե դարում լռելյայն ընդունել է Քաղկեդոնի ժողովի որոշումները, նա գրում է. «նախ, անուրանալի փաստ է, որ Հայոց Եկեղեցին պաշտոնապես, եկեղեցական ժողովով, ոչ մի որոշում չի կայացրել Քաղկեդոնի բանաձևի մասին, ճիշտ այնպես, ինչպես ոչ մի որոշում չի կայացրել նախընթաց երկու տիեզերական ժողովների՝ Կոստանդնուպոլսի (381) և Եփեսոսի (431) ժողովների որոշումների մասին։ Այս երեք ժողովներում էլ հայերը չեն ունեցել ներկայացուցիչներ. սակայն առաջին երկուսի կանոնները ընդունել են լռելյայն՝ ինչպես տիեզերական ժողովի սահմանած կանոններ։ Ի՞նչ կարելի է սրանից եզրակացնել.— այն, որ երրորդ ժողովի, այսինքն Քաղկեդոնի սահմանած բանաձևն ևս հայերն ընդունել են լռելյայն՝ ինչպես տիեզերական ժողովի սահմանած բանաձև[5]։ Հակառակ դեպքում հայոց հոգևորականությունը պետք է ժողով գումարած լիներ և ժողովով բացարձակ հայտարարեր, թե համաձայն չէ Քաղկեդոնի բանաձևին և մերժում է նրանց[6]։

Այսպիսի դատողության տրամաբանական անհեթեթությունն ակներև է. այսպես մտածելով՝ հարկ կլինի ընդունել, որ հայերն ընդունել են նաև Ե, Զ, է և առհասարակ այն բոլոր ժողովները, որոնց վերաբերմամբ նրանք իր ժամանակին այս կամ այն պատճառով չեն կարողացել ժողովական որոշում կայացնել։ Որպեսզի գիտական փաստարկումը «մտքի երիվարի երազական թռիչքի չվերածվի» (Մ. Արեղյան), անհրաժեշտ է նման հարցերում մի կողմ թողնել ընդհանուր անխարիսխ դատողությունները և մեջ բերել անհերքելի, գրավոր, ժամանակակից կամ հավաստի վկայություններ։

Այնուհետև, Մովսես Խորենացուն քաղկեդոնական դուրս բերելու համար, Ս. Մալխասյանցը գրում է (էջ 113). «Խորենացին գրել է... հակաքաղկեդոնականների տգիտությունը հալածող գրվածքներ... Բայց նրա գրվածքները, որոնց մեջ ջատագովված է եղել քաղկեդոնական դավանաբանությունը, մեր ձեռքը չեն հասել։ Հայոց Եկեղեցին հաջորդ դարերում խնամքով ոչնչացրել է... քաղկեդոնական ոգով գրվածքները։ Այսպիսի անհիմն պնդման միակ ապացույցը Ղազար Փարպեցու թղթի հետևյալ բառերն են՝ «Ո՞չ զլուսաւորիչն և զդիտահալած զդրեանն նորա՝ առ անգիտութեան փաթաթիկէս կոչէինն։ Ի՞նչ հիման վրա «տգիտահալած դրեանն» պետք է անպաճառ քաղկեդոնական ոգով գրվածքներ հասկանալ, թողնում ենք դատելու ընթերցողներին։ Բայց

5 Ընդգծումները իմն են— Ն. Տ.-Մ.։

6 «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, 1944 թ., № 3—4, էջ 29։

հարկ ենք համարում ասել, որ Հայոց եկեղեցին հարկ չուներ որևէ քաղկեդոնական ոգով գրվածք ոչնչացնելու, քանի որ նա Քաղկեդոնի որոշումները և բոլոր հերձվածողների ասույթները ճշտությամբ պահպանել է Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան»-մեջ։ Այսպիսով, Հայոց եկեղեցու ներկայացուցիչների հասցեին ուղղված այս մեղադրանքը անհիմն զրպարտություն է։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ մեջ բերել հունական կրթություն ստացած և Մովսես Խորենացու ընկերակից Եղիշեի մի արտահայտությունը, որը բոլորովին հակաքաղկեդոնական է և դնում է միաբնակության ուղղության գծով. այդ արտահայտությունը հետևյալն է. «Որ ոչ խոստովանի զխաչելեալն (10 ձեռագիր «զխաչեալն») Աստուած, նույն խաւար մածեալ է զոգւով և մարմնով նորա»[7], Պատմությունից հայտնի է, որ Հռոմի քաղկեդոնական ներկայացուցիչները կտրականապես դեմ դուրս եկան «որ խաչեցաւ» բանաձևին և Հռոմի պապը մինչև վերջն էլ չկարողացավ կողմնորոշվել այդ հարցում։

Վերևում բերված փաստերից անհերքելիորեն պարզվում է հետևյալը. քանի որ, ինչպես ասում է Ղազար Փարպեցին, մինչև 451 թվականը հայերի ուղղափառությունը եղել է Կյուրեղյան—Եփեսոսյան միաբնակությունը, իսկ մեզ հայտնի է, որ եթե ոչ Ե դարի վերջին, գոնե Զ դարի սկզբին արդեն հայերը Բարդեն կաթողիկոսի օրով առանց անունը տալու մերժել են Քաղկեդոնի ժողովի որոշումները՝ նույնացնելով դրանք նեստորականության հետ, ապա ուրեմն պարզ է, որ հայերը Ե դարի ընթացքում երբե՛ք չեն կարող ընդունած լինել Քաղկեդոնի ժողովի որոշումները ո՛չ բացարձակ կերպով և ո՛չ էլ լռելյայն։

Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու հարցին, ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերելու ականավոր հայ դիտնական Հ. Աճառյանի եզրակացությունը մեր և Ս. Մալխասյանցի միջև այդ հարցի շուրջը տեղի ունեցած վիճաբանության մասին։ Հ. Աճառյանը գրում է. «Մալխասյանը պնդում է, թե Խորենացին քաղկեդոնական էր, որին և վերագրում է նրա կրած հալածանքը։ Այս կարծիքի դեմ առանձին հոդված ունի Ե. Տեր-Մինասյան, «Տեղեկագիր» Արմֆանի, 1943, № 2, էջ 55—80, ուր հակաբանի, կրոնագետի, բանասերի և պատմաբանի քաջալեր հմտությամբ հաջողապես հերքում է «Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելը»։

Բ. Քաղկեդոնի ժողովի և քաղկեդոնականության հարցի հետ սերտորեն շաղկապված է երկրորդ խնդիրը. ի՞նչպիսի ճակատագրական մտավորական ճոսանքներ են եղել հայերի մեջ Ե դարի երկրորդ կեսին և ի՞նչ է եղել նրանց ճակատագրության էությունը։ Կարելի՞ է այդ հոսանքներին քաղկեդոնական և ճակատաղկեդոնական անունը տալ։

Բանասեր Ս. Մալխասյանցը պնդում է, որ այդպես էլ պետք է հասկանալ խնդիրը և Մովսես Խորենացին հենց այդ «երկու հզոր, միմյանց դեմ պայքարող բանակներից» մեկի՝ քաղկեդոնականների պարագլուխն է եղել։ Այդպիսի քաղկեդոնական «հզոր բանակ» կազմելու դիտավորությամբ ասվում է, թե «գունդագունդ դեպի Հունաստան ուսում ստանալու» գնացող հայ երիտասարդներ, Բյուզանդիոնում «բնականապես» քաղկեդոնական գաղափարներ էին յուրացնում և ապա՝ Հայրենիք վերադառնալով պայքար մղում այդ գաղափարների համար այսպես կոչված ասորական հոսանքի ներկայացուցիչների դեմ, որոնք հակաքաղկեդոնական կամ միաբնակ էին։

Սակայն այսպիսի ըմբռնումը բոլորովին չի համապատասխանում իրականությանը։

Նախ՝ օտար երկրներ ուսում ստանալու համար գնացող ուսանողների հարցը։ Ինչպես հայտնի է, այդ ուսանողները երկու մեծ խմբի են բաժանվում՝ այսպես կոչված ավագ և կրտսեր թարգմանիչներ։ Ավագ թարգմանիչների խմբի մեջ մտնում են՝ Հովսեփ Վայոց-Ձորեցին և Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցացին և Հովհան Խոստովանողը, Ղևոնդ Երեցը, Եղնիկ Կողբացին, Կորյունը, Մուշեղ Տարոնեցին, Տիրայր Խորձենացին, Ինովքը, Դանանը, Երեմիա սարկավագապետը, Թադիկը, Գնիթը, Արձան Արծրունին, Աբրահամ Խոստովանողը, Ստեփանոս Տարոնեցին և Ղազարիկը կամ Ղազրիկը (ո՛չ Փարպեցին)։ Գուցե ես մի երկու անուն բաց եմ թողել, բայց գլխավորները սրանք են։ Սրանք բոլորը, սակայն, արտասահման են գնացել, իրենց կրթությունն ստացել և Հայ-

[7] Տե՛ս Եղիշէի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի, Երևան, 1957, էջ 168։

[8] Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հատ. Գ, Երևան, 1946, էջ 438։

բենիք են վերադարձել ո՛չ միայն Քաղկեդոնի (451 թ.) այլ Եփեսոսի ժողովից (431 թ.) շատ առաջ, մոտավորապես 406—415 թվականների միջև։ Ուրեմն, նրանց քաղկեդոնական ուսմունք և դավանանք սովորած լինելու մասին ո՛չ մի խոսք չի կարող լինել, ինչպես որ Ս. Մալխասյանցն ինքն էլ այդ ընդունում է այժմ, նույնիսկ Մովսես Խորենացու վերաբերմամբ, նախքան 451 թվականը։ Բացի դրանից, հիշված անձինք Ե դարի երկրորդ կեսին բոլորն էլ անխտիր դառամյալ ծերունիներ կլինեին, եթե կենդանի իսկ լինեին, և նրանց հոսանք կազմելու և պայքար մղելու մասին խոսելն ինքնին ապիլորդ է։

Կրտսեր խմբի թարգմանիչները, որոնք 433/434-ին դնացել են Բյուզանդիոն և Ալեքսանդրիա կրթություն ստանալու, բայց նույնպես Հայրենիք են վերադարձել, Մովսես Խորենացու վկայությամբ (տե՛ս «Ողբ»-ը), Քաղկեդոնի ժողովից առնվազն 10 տարի առաջ, Կյուրեղյան միաբնակության դարաշրջանում, ուրեմն և նմանապես չէին կարող քաղկեդոնական ուսմունք սովորած լինել, բաղկացած էին հետևյալ անձերից. Դավիթ Անհաղթ, Գյուտ, Հովհան Մանդակունի, Եղիշե, Մովսես Խորենացի, Մամբրե Վերծանող։ Հիշատակվում են 8—9 այլ անուններ էլ (Եզրաս, Խոսրով, Հովհաննես, Անանիա, Հովնաթան, Խաչիկ, Թաթուլ, Անդրեաս, Վարոս), որոնց մասին կա՛մ ոչինչ հայտնի չէ, կա՛մ շատ քիչ բան գիտենք և տեղեկություն էլ չունենք, թե նրանք իրոք ուսանելու գնացե՞լ են, թե ոչ։

Միակ հռչակավոր անձը, որի մասին որոշակի հայտնի է, որ Ե դարի կեսից հետո է ուսում ստացել Հունաստանում, Ղազար Փարպեցին է։ Սակայն իհարկե մենք պետք է ընդունենք, որ նա միակը չի եղել, նրա հետ եղել են նաև ուրիշներ էլ։ Նույնիսկ այս դեպքում, հաշվելով բոլոր ավագ ու կրտսեր թարգմանիչներին, կրկնապատկելով ու եռապատկելով նրանց թիվը, մենք կունենանք 100 տարվա ընթացքում (Ե դարի սկզբից մինչև Զ դարի սկիզբը), ընդամենը շուրջ 100 հոգի, ուրեմն միջին թվով տարեկան մի հոգի։ Ահա թե իրոք ի՞նչ կերպարանք ունի Ս. Մալխասյանցի «գունդագունդ Արևմուտք ուսանելու գնացող ուսանողներ»-ի հարցը։ Բայց ընդունենք մի րոպե, որ այդ ուսանողները իսկապես շատ մեծ թիվ են կազմել։ Դրանից մի՞թե հետևում է, որ նրանք քաղկեդոնական են դարձել և Հայրենիք վերադառնալով պայքարել են քաղկեդոնականության համար։ Ավագ և կրտսեր հայտնի թարգմանիչների մասին, ինչպես տեսանք, այդ ուղղությամբ խոսք անգամ չի կարող լինել։ Իսկ Ղազար Փարպեցու դեմ մղվող պայքարի մեջ քաղկեդոնական ու հակաքաղկեդոնական պայքարի ոչ մի նշույլ չկա։ Ղազար Փարպեցու հայտնի թղթի մեջ առ Վահան Մամիկոնյան մեկ առ մեկ մեջ են բերված այն բոլոր մեղադրանքները, որ տգետ աբեղաները բարդում էին նրա վրա և որոնք ոչ մի կապ չունեն քաղկեդոնական ու հակաքաղկեդոնական պայքարի հետ։ Իր դեմ եղած հալածանքների պատճառն էլ Ղազարն ինքը բացատրում է տգետ աբեղաների լոկ անսահման նախանձով։ Վերևում էլ մատնանշեցինք, որ Ղազար Փարպեցին Ե դարի վերջին կամ Զ-ի սկզբին ուղղափառություն ասելով հասկացել է ո՛չ թե քաղկեդոնականություն, այլ այն ուսմունքը, որ գոյություն է ունեցել 451 թվականից առաջ, ուրեմն՝ Կյուրեղյան—Եփեսոսյան միաբնակությունը։

Երկրորդ, պետք է լրջորեն կշռադատել նաև հետևյալ հանգամանքը։ Ասում են, թե Ե դարի երկրորդ կեսին, «գուցե Ասորիքից եկած պրոպագանդիստների օգնությամբ», զորացել է Քաղկեդոնի հակառակորդ ասորական հոսանքը, որի պատճառով և պայքար է սկսվել քաղկեդոնականության շուրջը երկու հակամարտ հոսանքների միջև և դեռ Քաղկեդոնի դավանությունն էլ «լռելյայն» ընդունվել է Հայոց եկեղեցու կողմից։ Բնականաբար հարց է առաջ գալիս՝ ե՞րբ կարող էր տեղի ունենալ այդ։ Այդ չէր կարող տեղի ունենալ Հովսեփ կաթողիկոսի և նրա ընկերների ժամանակ, որոնք Վարդանանց նահատակությունից անմիջապես հետո (451 թ.) բռնվեցին և Պարսկաստան քշվեցին՝ դատի ենթարկվելու համար ու այնտեղ չարաչար մահով մեռան։ Մնում է, որ ասորասեր և ասորական ուղղության կողմնակից, ուրեմն, ըստ Մալխասյանցի, Քաղկեդոնի հակառակորդ Մովսես և Մելիտե կաթողիկոսների օրով տեղի ունեցած լինի Քաղկեդոնի այդ ընդունումը։ Սակայն այսպիսի վարկածն այնքան անհեթեթ է, որ այն պետք է առանց այլևայլության դեն շպրտել։ Ի՞նչ է մնում ենթադրել։ Մենք գիտենք, որ Ե դարի երկրորդ կեսին, 461—490 թվականներին, կաթողիկոս էին հունական կրթություն ստացած և հունասեր Գյուտն ու Հովհան Մանդակունին։ Միանգամայն պարզ է, որ սրանց օրով չէր կարող զորանալ ասորասիրական հոսանքը։ Այնուհետև, եթե Տիմոթեոս Կուզի

«Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնիս» գրվածքի թարգմանությունը կատարվել է Հովհան Մանդակունու ժամանակ, 481—484 քառամյակում, ինչպես գրել է Գ. Տեր-Մկրտչյանը և նրա հետևողությամբ ընդունում են Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, Մանուկ Աբեղյանը և Ս. Մալխասյանցը[9] ապա ինքնին պարզ չէ՞ միթե, որ Գյուտ և Հովհան Մանդակունի կաթողիկոսների օրով խոսք կարող է լինել ո՛չ թե «Քաղկեդոնի բանաձևը լռելյայն ընդունելու», այլ միմիայն այդ բանաձևի բացարձակ և ճշապարակական մերժման մասին։ Բացի այդ, հակառակ կարծիք արտահայտող բանասերները չեն տվել իրենց այն բնական հարցը, թե որո՞նք են այդ խիստ հունարան թարգմանության հեղինակները։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթե հիշյալ թարգմանությունը կատարվել է Ե դարի երկրորդ կեսում (481—484 քառամյակում), ապա այն կարող են կատարած լինել միմիայն Մովսես Խորենացու և իր ընկերների նման Հունաստանում ուսում առած և հունարեն լավ գիտցող անձինք և ոչ թե հայ աստրամոլ «տգետ արեղաներրը»։ Այստեղից անհրաժեշտորեն հետևում է, որ եթե Հայաստանում Ե դարի երկրորդ կեսին հակաքաղկեդոնական հոսանք կար, ապա այդ հոսանքի ներկայացուցիչները ո՛չ թե աստրասեր տգետ արեղաներն են եղել, այլ հատկապես հունասեր և հունական կրթություն ստացած անձինք, ուրեմն Մովսես Խորենացին և իր ընկերները։ Հետո, եթե Ե դարի երկրորդ կեսին Հայաստան պրոպագանդիստներ եկել են, ապա, մեր ունեցած տեղեկություններով, այդ պրոպագանդիստները եղել են Քաղկեդոնի դավանությանը մոտիկ տրամադրություններ ունեցող նեստորականները, այլ ոչ թե հակաքաղկեդոնական աստրիները։

Երրորդ, թյուրիմացության արդյունք և հիմնովին սխալ պետք է համարել նաև Ս. Մալխասյանցի այն մի քանի անգամ և զանազան տարբերակներով կրկնվող պնդումը. թե աստրիներն ու աստրական հոսանքն անպատճառ կամ բնականապես հակաքաղկեդոնական պիտի լինեին, իսկ հույներն ու հունական հոսանքը՝ քաղկեդոնական։ Նախ, աստրի լինել և աստրական հոսանքին պատկանել ամենևին չի նշանակում անպատճառ հակաքաղկեդոնական լինել։ Մալխասյանցն այստեղ աչքաթող է արել աստրիների մի շատ մեծ, իր նշանակությամբ միարնակ աստրիներից շատ ավելի կարևոր խմբի՝ նեստորական աստրիների գոյությունը, որոնք շատ ավելի մոտիկ էին քաղկեդոնականներին։ Ապա, ո՞րտեղից է հետևում, թե հույները կամ հունական հոսանքը անպատճառ քաղկեդոնական պիտի լինեին։ Մի՞թե գաղտնիք է, որ քրիստոսաբանական և նրանից էլ առաջ Ս. Երրորդության մասին եղած տանջալի տարիներ տևող վեճերը տեղի էին ունենում զուտ հունական հողի վրա և ներկայացնում էին հունական փիլիսոփայության մշակած գաղափարների— Լոգոսի, Նուսի և այլն— մուտքը քրիստոնեության մեջ և դրանց յուրացումը հույն եկեղեցական հայրերի կողմից։ Ալեքսանդրիայում ծագած և զարգացած զուտ հունական դպրոցը դիմում էր դեպի միարնակություն, իսկ Անտիոքում ծագած ու զարգացած դարձյալ զուտ հունական դպրոցը տանում էր դեպի նեստորականություն, քաղկեդոնականություն և երկարնակություն։ Ի՞նչպես կարելի է, ուրեմն, ասել, թե հույներն ու հունական հոսանքը անպատճառ ու բնականապես պետք է քաղկեդոնական լինեին։ Հույներ չէի՞ն Ապոլինարիս Լավոդիկեցին, Կյուրեղ Աղեքսանդրացին, Պրոկղը, Դիոսկորոսը, որոնք միարնակության ամենաբերմ պաշտպաններն էին, իսկ վերջինը նաև Քաղկեդոնի ժամանակակիցն ու նրա բուռն հակառակորդը։ Հույներ չէի՞ն Կոստանդնուպոլսի պատրիարքներ Նեստորն ու Ֆլավիանոսը, որոնք առաջիններին տրամագծորեն հակառակ ուղղություն էին ներկայացնում։

Այսպիսով, պարզվեց, որ մենք ոչ մի հիմք չունենք խոսելու քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հոսանքների գոյության և նրանց միջև տեղի ունեցած պայքարի մասին Ե դարի երկրորդ կեսում։ Այս չի նշանակում, սակայն, թե առհասարակ հոսանքներ չեն եղել. հոսանքներ, իհարկե, ե-

---

[9] Ես ինքս այդ տեսակետին կողմնակից չեմ և մնում եմ իմ հին կարծիքին, ըստ որի Տիմոթեոս Կուդի «Հակաճառությունն»-ը պետք է թարգմանված լինի Զ դարի կեսերին՝ Ներսես Բ կաթողիկոսի ժամանակ։ Իմ այս կարծիքը պաշտպանում է ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, մի քիչ այլ կերպ նաև Հ. Ն. Ակինյանը։ Ամբողջ հարցի մասին իմ դիտողությունները տե՛ս նորերս լույս տեսած իմ հոդվածում՝ «Տիմոթեոս Կուդի «Հակաճառությանը, թարգմանության ժամանակը», «Բանբեր Մատենադարանի», Գիրք Ե, Երևան, 1961 թ., էջ 279—301։

դել են, բայց նրանց պայքարը տեղի է ունեցել բոլորովին այլ, դավանական խնդիրների հետ ոչ մի կապ չունեցող հողի վրա, ինչպես պարզորոշ վկայում է Ե դարի երկրորդ կեսի պատմագիր Ղազար Փարպեցին իր հայտնի թղթում։

Գ. Երրորդ խնդիրը վերաբերում է աղանդներին։ Հարցը դրվում է հետևյալ ձևով. Հայոց Եկեղեցու և քրիստոնեության համար վտանգավոր աղանդներ եղե՞լ են Ե դարում և Մովսես Խորենացու «Ողբ»-ի հայտնի բառերը կարո՞ղ են նրանց վերաբերել։ Ես իմ «Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը» հոդվածում այն կարծիքն էի հայտնել, թե Խորենացու «Ողբ»-ի մեջ հիշատակված հերձվածողներն ու օտարաձայն լեզուները կարող են վերաբերել խիստ տարածված բորբորիտոն-մծղնյաների աղանդին կամ նաև նեստորականության. իսկ Ս. Մալխասյանցը այդ առթիվ մեղադրելով ինձ «կամավոր կուրության» մեջ, հավատացնում է ընթերցողներին, թե իր ասածները «կատարյալ հայտնագործություններ են», «ամբողջ հատորներ արժեն իրենց մերկացումով» և հերձվածողների մասին եղած ակնարկությունները վերաբերում են քաղկեդոնական և հակաքաղկեդոնական վեճերին, իսկ նեստորականության դեմ պայքար չի եղել Հայաստանում և այդ պայքարը Ե. Տեր-Մինասյանի երևակայության ծնունդն է։

Առայժմ մի կողմ թողնելով նեստորականության հարցը որպես առանձին խնդիր, որին անդրադառնալու ենք ստորև, համառոտակի պարզաբանենք աղանդների կամ հերձվածողների հարցը Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ժամանակ և նրանցից հետո։

Ամենից առաջ ասենք, որ աղանդավորների հարցը չի կարելի լուծված համարել նրանով, որ նրանց հայտարարենք «ապականված վարքի տեր սրիկաներ», որևէ լուրջ նշանակությունից զուրկ մի ոհմակ. «որի անդամներին եպիսկոպոսները կարող էին իբրև կստացած շների պատժել ու հալածել», կամ նրանց անվանենք «պարզապես վատաբարո քրեական հանցավորներ» կամ «ամի խումբ սրիկաներ», ինչպես վարվում է Ս. Մալխասյանցը, վերևում մատնանշված ձևով բնութագրելով նրանց։ Ընդհանրապես պետք է ըմբռնել, որ աղանդավորության հարցը թե՛ Ընդհանուր Եկեղեցու և թե՛ Հայոց Եկեղեցու պատմության կարևորագույն հարցերից մեկն է, որ արժանի է բազմակողմանի և լուրջ ուսումնասիրության։ Այս հոդվածի սահմաններում անկարելի է այդ խնդրի մանրամասն լուսաբանումը, բայց մենք այնուամենայնիվ հարկ ենք համարում ասել հետևյալը։ Մեր կարծիքով, բազմաթիվ աղանդների և հերձվածների ծագումը Քրիստոնեական Եկեղեցու ներսում, ո՛չ մի դեպքում չի կարելի պատահական երևույթ համարել, ո՛չ էլ առանձին խմբերի գործունեության հետևանք։ Աղանդների ծագումը պետք է ճանաչել որպես ճեռնոսության վերակենդանացում Քրիստոնեական Եկեղեցու ներսում։ Այդ պատճառով էլ բոլորովին զարմանալի չէ նրանց աշխուժացումն ամեն անգամ, երբ դժգոհությունն ավելանում է Եկեղեցու զանազան կարգերի և սովորությունների դեմ։ Այդպիսի դեպքերում աղանդավորները սովորաբար միանում են այլ ժողովրդական շարժումների, օրինակ գյուղացիական շարժումների հետ և նրան ուրույն նրանգ են տալիս։ Համենայն դեպս հատկանշականն աղանդների մեջ այն է, որ նրանք ազատություն են պահանջում հոգևոր կյանքի ասպարեզում, չեն ընդունում Եկեղեցու կարգերն ու խորհուրդները և շատ դեպքերում պահանջում են նաև բացարձակ բարոյական անկաշկանդություն, չընդունելով իրենց համար ո՛չ մի բարոյական օրենք ու սահմանափակում։ Քրիստոնեական Եկեղեցին միշտ հաջողությամբ պայքարել է բոլոր աղանդավորական երևույթների դեմ և իրեն սպառնացող ճգնաժամից հաղթող է դուրս եկել։ Նույնը կարող ենք ասել նաև Հայոց Եկեղեցու վերաբերմամբ ընդհանրապես։

Անցնելով այն հարցին, թե արդյոք Հայաստանում Ե դարում աղանդներ եղե՞լ են և նրանց դեմ պայքար մղվե՞լ է, պետք է ասել հետևյալը։— Այո՛, այդպիսի աղանդներ եղել են, նրանց անունները մեզ հայտնի են՝ բորբորիտոններ և մծղնյաներ, և նրանց դեմ պայքար են մղել արդեն Սահակ Պարթև հայրապետն ու Մեսրոպ Մաշտոց վարդապետը։ Այս մասին բացարձակորեն վկայում են մեր պատմիչները և տարօրինակ է հայ բանասերից լսել այն կարծիքը, թե Հայաստանում Ե դարում աղանդներ չեն եղել։ Որ այդպիսի աղանդավորները մեծ տարածում և ազդեցություն են ունեցել, Եկեղեցու համար վտանգավոր և խիստ չարաբաստիք են եղել, դա չի կարող վեճի առարկա լինել։ Մի՞թե կարող է խնդիրը «ամի

խումբ սրիկաներ»-ի կամ «ապականված վարքի տեր քրեական հանցավորներ»-ի վերաբերել, երբ այդ խմբի գործունեությամբ մտահոգված են, Կորյունի՝ և Խորենացու վկայությամբ[10], բյուզանդական կայսրն ու Կոստանդնուպոլսի պատրիարք Ատտիկոսը (մեռել է 425 թվականի հոկտեմբերի 10-ին). երբ 420-ական թվականներից Սահակ կաթողիկոսի հրամանով նրանց դեմ դաժան պայքար է մղել Մեսրոպ Մաշտոցը[11], երբ նրանցով զբաղվել և նրանց նզովել է Եփեսոսի տիեզերական ժողովը (431 թ.), երբ նրանց դեմ 24 նզովք է ուղղել Արքեղայոս Կեսարացին, երբ նրանք մերժում էին եկեղեցու խորհուրդները, երբ նրանք հետագայում, 15 տարի լանցած, նորից ասպարեզ են եկել, զբաղեցրել են Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներին և Շահապիվանի ժողովի նյութ դարձել, և այնուհետև էլ յուրաքանչյուր 100—150 տարուց հետո ասպարեզ են իջել զանազան անուններով, մեծ մտահոգություն և հոգս պատճառել հայոց կաթողիկոսներին և խստագույն հալածանքների ենթարկվել ու մինչև ԺԹ դարի կեսերն էլ չեն ոչնչացել։

Պատասխանը, կարծում ենք, շատ պարզ է. ինչպես ասացինք, բորբորիտոն-մծղնյաները մեծ տարածում և մեծ ազդեցություն ունեցող, եկեղեցու համար վտանգավոր և խիստ լարանենգ աղանդավորներ են եղել, որոնց վերաբերյալ դեռ շատ հարցեր պետք է լրջորեն ուսումնասիրել։ Մենք շատ հավանական ենք համարում, որ Մովսես Խորենացու «Ողբ»-ի մեջ եղած հերձվածողական պայքարի վերաբերյալ արտահայտությունները հատկապես հենց այս աղանդավորներին վերաբերելիս լինեն։ Հայաստանում այդ շրջանում աղանդների բացակայության ցատագով Ս. Մալխասյանցը բոլորովին մոռացել է, որ հենց Ղազար Փարպեցուն մեղադրել են աղանդավորության մեջ։ «Որոյ և դանուն անգամ աղանդոյն, որոյ բամբասէին յանդգնեալքն՝ կարի յոյժ համարիմ ազտեղի՝ նշանակել դրով... Իսկ Հայոց աշխարհի աղանդ զոր ասեն՝ անանուն է ըստ վարդապետի և անգիր ըստ բանի»[12]։ Պարզ է, որ խոսքը վերաբերում է բորբորիտությանը կամ մծղնեությանը։

Առանձին գոհունակությամբ արձանագրում ենք, որ մեր բազմերախտ ուսուցիչ Մ. Աբեղյանը այս հարցում էլ, ինչպես և առհասարակ քննության ենթակա այս հարցերի մեծամասնության վերաբերմամբ, կանգնած է մոտավորապես նույն տեսակետների վրա և հանգել է նույն եզրակացություններին, ինչ որ մենք, բայց մեզնից միանգամայն անկախ կերպով։ Ա. Մալխասյանցի հատկապես հակաաղանդավորական թեզիսի մասին նա գրում է. «Հակապատմական է ասել, թե «ուրիշ աղանդների հիշատակություն չկա» և իբր «Հայաստանում էլ այդ ժամանակներ չէ հիշվում ոչնչ այլ աղանդ»[13]։

Մ. Աբեղյանը բավական մանրամասն ու հիմնավորապես քննում է աղանդների հարցը և դալիս է հետևյալ եզրակացության. «Այսպես, ուրեմն, Հայաստանում եղել են աղանդներ 5-րդ դարի երկրորդ կեսին։ Պրոֆ. Մալխասյանը, սակայն, այդ աղանդներն անգիտացել է, որպեսզի մնան միայն քաղկեդոնականներ և հակաքաղկեդոնականներ, և ապա ինքը հակաքաղկեդոնականներին չարափառ դարձնի, իսկ քաղկեդոնականներին՝ ուղղափառ»[14]։

Եզրակացությունն այն է, որ Հայաստանում Ե դարում աղանդների գոյությունը անժխտելի փաստ է, ինչպես և Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների այդ աղանդների ներկայացուցիչների դեմ մղած պայքարը հաստատուն պատմական իրողություն է և ո՛չ թե Ե. Տեր-Մինասյանի «գյուտը»։

---

10 Կորյուն. «Վարք Մաշտոցի», հրատ. Մ. Աբեղյանի, էջ 66։— Խորենացի. «Պատմութիւն Հայոց», Գ 57։

11 Կորյուն. անդ, էջ 68։— Խորենացի. Գ 58։

12 Ղազար Փարպեցի. «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Էջմիածին-Տփղիս, 1904 թ., էջ 192 և 193։

13 Ընդգծումն իմն է— Ե. Տ.-Մ.։

14 Մ. Աբեղյան, «Հայոց գրականության պատմություն», հատ. Ա, էջ 623—627։ Աղանդների և աղանդավորների (նեստորականների, մծղնյաների և այլն) Հայաստանում այս ժամանակաշրջանում տարածված լինելու մասին տե՛ս նաև Հրանտ Ք. Աբրմեն, «Մարդպանը և սպարապետը», Լոս-Անժելես, 1952, էջ 193—195։

(Շարունակելի)



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

Զ. ՄՍՐԴԸ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԷՐ

Ա. ՄԱՐԴԸ

Ու հասած ենք ահա մեզ համար փափուկ գլուխ մը, երբ արդեն ուրվագծած՝ մարդու մը կյանքին և գործունեության գլխավոր հանգրվանները, ստիպված ենք զայն նժարը դնել, և փորձել տեղ մը գտնել անոր՝ մեր պատմության մեջ։ Արդեն դժվար կդառնա այստեղ մեր գերը, որովհետև մեր առջև ունինք գեղերը նախատինքներուն, որոնց նշավակ դարձավ ան քանի կապրեր և կես դարու այլազան վաստակ մը, որ շփոթություն կպատճառե. մեկ կողմե անթիվ բարբասավներ մարդկային բիծերու մասին և մյուս կողմե մախաղ մը լեցուն բերքե։ Պետք է վեր մնալ ուրեմն բոլոր նախապաշարումներին, հարևանցի անցնիլ բացասական գիծերուն վրայեն, և այդ բերքը կշիռք դնել։ Եվ այդ բերքը կշռած ատեն պահ մը նույնիսկ մոռնալ խծբծանքները, զորս Օրմանյան ինքը կընե ուրիշներու մասին, և իր իսկ անկեղծ պահերը, ուր, սիրտը բացած, ինքը կմատնանշե իր թերությունները։

Օրմանյան մարդը գատել այնքան ալ հեշտ չէ, որովհետև սովորական մարդերեն չէր ան, որպեսզի կարելի բլլար քանի մը բառով ուրվագծել զայն ու անցնիլ։ Ու հետո, շեշտված էին մարդկային շատ մը գիծեր իր մեջ, և անհրաժեշտ էր զանոնք լավ դնել, իր գործունեության զանազան երեսները ես անոնցմով կարենալ բացատրելու համար լրիվ։ Եվ վերջապես այնքան խոսքի նյութ են եղած նկարագրի իր այդ գիծերը իր կենդանության և խարիսխն են կազմած իր շուրջ ստեղծված համակրություններեն շատերուն, որ կարելի չէր թեթև անցնիլ անոնց վրայեն։

Օրմանյանի բիծերը գտնելու համար դժվարություն չենք քաշեր։ Օրմանյան ինքն է, որ մեզ կառաջնորդե զանոնք գտնելու։ Պետք է հետևիլ միայն իր իսկ մատնանշումներուն։ Ան եթե «Ազգապատում»-ին մեջ դեռ վերապահ է հաճախ, որովհետև պատմագիր Օրմանյանն է, որ կխոսի հոն պատրիարք Օրմանյանի մասին և ստիպված է հետեւարար անոր գործերը պատմության հանձնել իրենց դրական գիծերուն մեջ առավելապես, «Խոճ» և Խոսք»-ին մեջ այլևս վերապահ մնալու պատճառներ չունի, որովհետև Օրմանյան մարդն է, որ կխոսի հոն Օրմանյան մարդուն վրա, իր մտածումները անկեղծորեն բսելով իր և ուրիշներու մասին։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի Մ Մ Ե-ից, Զ-ից, Է-ից, Ը-ից, Թ-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1962 թվականի Մ Մ Ա-ից, Բ-ից, Գ-ից և Դ-ից։

Օրմանյան մարդը ճանչնալու համար իր կյանքի զանազան երեսներուն տակ, անհրաժեշտ էր նախ անհատը զննել գոնե քանի մը բառով իր բնավորության, իր խառնվածքին և իր նկարագրի գիծերուն մեջ։ Առանց ադոր կարելի պիտի չըլլար բացատրել իր մեջ հանրային մարդը, որ այնքան ցայտուն ելավ գործունեության իր բոլոր դաշտերուն մեջ ալ, այնքան տարբեր իր շրջապատեն և այնքան առարկա հասարակական դատաստաններու։ Ադով, մյուս կողմե, պիտի կըրնանք ըմբռնել նաև, թե ուրկե էր ապշեցուցիչ բեղմնավորությունը, որ իր կյանքին հատկանիշը եղավ և ուրկե կուգային նաև իր վրեպները։

Նախընթաց գլուխներու մեջ մենք տվինք զանազան հանգրվանները անոր կյանքին ու գործունեության։ Չայն ճանչնալե հետո հարկ իսկ չկա այլևս ըսելու, թե Օրմանյան օժտված էր բացառիկ իմացականությամբ մը ըմբռնելու, տրամաբանելու և դատելու բացառիկ ուժով, որ հնարավորություն պիտի տար իրեն այնքան արագ հասուննալու և հասկ կապելու, և նվիրվելու ստեղծագործ ճիգերու։

Կմնա, որ այս անգամ ալ տեսնենք Օրմանյանը իր նկարագրի ընդհանուր գիծերուն մեջ, ավելի ճշգրիտ ըմբռնելու համար իր կյանքն ու գործունեությունը։

Ըսենք ամենեն առաջ, թե աչխատելու իր բնածին ընդունակությունը, որ ամենեն շքեղաղ տուրքերեն մեկն է, որով բնությունը կրնա օժտել մարդուն, մեծագույն նեցուկն եղավ Օրմանյանին գործունեության բոլոր դաշտերուն վրա, որոնց մեջ նետեց զինք ճակատագիրը։ Անով է, որ Օրմանյան պտղաբերեց իր իմացականությունը։

Պիտի չկրնար սակայն օգտվիլ իր բնածին ձիրքերեն, եթե անոնց կողքին չունենար նաև հրաշագործ այն ուժը, որ կամքն է մարդ էակին մեջ։ Օրմանյան այդ ուժին ալ կպարտի իր հարատևությունը կյանքի բոլոր տեսողության, և համառությունը մաքառելու դժվարությանց դեմ, ինչպես և կարելիություն՝ փորձությանց ալ դիմագրավելու։

Իր ձիրքերուն մեծ չափով օժանդակեց նաև ժուժկալությունը, զոր ցույց տվավ իր կենցաղին մեջ։ Արդարև ժուժկալությունը, որով ինքն իսկ կպարծենա հաճախ, կարելի գարձուց տոկուն մնալ միշտ ֆիզիկապես, կուրծք տալ հոգեկան հուզումներու, և մտքի հստակությունն ու աշխատելու տենչը միշտ անվթար պահել, երբ նույնիսկ ֆիզիկական ուժերը դավաճանել սկսեր էին արդեն իրեն։

Բայց ինչ որ իր մեջ կարժեքավորեր բոլոր ձիրքերը, իր նկարագրին անհատական շեշտված գիծն էր։ Օրմանյան իր այս գիծին կպարտի նախ ազդեցությունը, զոր ունեցավ իր շրջապատին վրա և կնիքը, զոր իր ժամանակին վրա դրավ։ Այդ գիծն էր, որ, ինչպես պիտի տեսնենք, վարեց հանրային մարդը իր մեջ։

Եվ ավա՜ղ, նույն այդ գիծեն կուգան շատ մը բիծեր իր վրա, որոնք ավելի ևս պիտի սրեն հակակրությունները դեպի ան։ Իր անհատական բուռն խառնվածքն էր, որ զինք շեղեցուց երբեմն ընդունված կարգեն, ու զինք նշավակ դարձուց հարվածներու ալ։

Օրմանյան հաճախ պարծենցած էր, թե ցմիշտ հավատարիմ մնացած է ուխտին, որուն հանձնառու եղավ հոգևոր ասպարեզ մտնելու ատեն։ Այդ ուխտը, զոր ան ըրավ Անտոնյան միաբանության մեջ մտնելու առթիվ, երբ դեռ հազիվ պատանի էր, սրբությամբ պահեց հետագային ալ։

Հավանաբար իր այս հանձնառությունները ոչ մեկը այնքան սրբությամբ չկիրարկեց Օրմանյան, որքան կամավոր աղքատ մնալու ուխտը։ Օրմանյան կրնա արդարև պարծենալ, թե նյութը երբեք չսիրեց։

«Նյութական շահի իղձերեն հեռու մնացած եմ թե՛ բնական բերմամբ և թե՛ նախնական դաստիարակությամբ,— կըսե Օրմանյան,— և այս առաջնորդած է զիս Անտոնյան միաբանության մեջ կամավոր աղքատության ուխտադրությունը, այսինքն ոչինչ կրնալ սեփականելը։ Այնպես որ այսօր ոչինչ լունիմ բացի գիրքերես ու գիրքերեսս»[253]։

Օրմանյան կրցավ ապացուցանել, թե նյութի մարդ չեղավ, և այդ՝ իր կյանքի բովանդակ տևողության։ Նույնիսկ կարծես թե հեռու կփախեր նյութեն։

Կրնար, խիղճը վաճառքի հանելով, նյութական պատկառելի դիրք մը ստեղծել իրեն համար, ինչպես պիտի ընեին ուրիշներ, եթե իր ազդեցությունը ունենալի, կամ ինչպես ըրած են ոմանք, առանց նույնիսկ այդ ազդեցությունը ունենալու։

Ոչ ոք համարձակեցավ ըսել, թե որևէ առթիվ որևէ կաշառք ստացած է ան, իսկ իր կողմե գործված գեղծումներու մասին պահ մը հրապարակ նետված առասպելները քանի մը օր միայն կրցան դիմանալ, որովհետև Օրմանյան իր ստացած ու ծախսած բոլոր գումարներուն լրիվ հաշիվը իսկույն տվավ։ և անկե հետո ոչ ոք բերան առավ նման առասպել մը։

Փառասե՞ր. ինչո՞ւ չըսենք, փառասեր էր Օրմանյան, ինչպես որ ինքը ևս կըսե. հետո, փառասեր ո՛վ չէ որ։ բայց ամեն մարդ փառքը սիրելու իր կերպը ունի. ոմանց մոտ փառամոլության հասած է արդեն ան, երբ փառքը միակ նպատակը կդառնա կյան-

[253] «Խոհք և խոսք», էջ 22։

քին. ուրիշներու քով հոգեկան պարզ գոհացումն է հաղթանակի մը տարած ըլլալու. ոմանք իրենք կվարեն փառքին ետեւեն, ուրիշներու ետեւեն փառքը ինքն է որ կուգա։ «Գալով բարոյական օգուտին,— կրսեր Օրմանյան,— այսինքն փառքին և պատվին, համարձակ ըսեմ, թե անոր առջև անդգա չեմ եղած. և մինչև իսկ հրատարակությամբ ալ միտքս հայտնած եմ՝ թե փառասիրությունը վատ իրաձ մը չէ, և թե փառամոլությունն տիրապես տարբեր է։ Փառքը ստվեր է կոչված, և համամիտ եմ. բայց ստվեր չի գոյանար, եթե իր մը չգտնվի. փառքը գոյացնող իրը արդյունքն է, արդյունքին ստվերը փառքն է. ուղիղ է արդյունքին հետևիլ, ուսկից փառքը ինքնին գոյանա. սխալ է փառքին հետևիլ, առանց արդյունքին հետեւելու լոկ երևույթին հետապնդելով։ Ուղիղը փառասիրությունն է, սխալը փառամոլությունն է. այս է իմ բարոյական և իմաստասիրական տեսակետը, և այդ սկզբունքով առաջնորդված եմ պաշտոնավարությանս մեջ. արդյունքն եմ ըրած ինձի նպատակակետ. փառքն ու պատիվը, զոր վայելած եմ, անոր արտաքին հետևանքն է եղած, որուն համար առանձին փույթ կամ ճիգ չեմ ունեցածը»[234]։

Արտաքինով՝ Օրմանյան հեռու էր պաստիկառանք ազդելե։

Պատկառանքը շատ անգամ մարդուն արտաքինեն կբխի։ Նույնիսկ շատեր կան, որոնք իրենց արտաքին դրավչությունի շնորհիվ կազդեն իրենց դիմացինին վրա, մինչդեռ դատարկ են ներսեն, իսկ իրենց շուքը շատ կարճ կտեսնեն։ Ու փոխարեն որքա՞ն մարդիկ կան, որ զուրկ են արտաքին կերպարանքի մը, և պետք է ճանչնալ զանոնք իրենց հոգեկան արժեքներուն մեջ, պատկառիլ սկսելու համար։

Օրմանյան սույն այս դասեն էր։

Ինչքան ճշգրիտ գծած է զայն Զօհրապ «Ծանոթ դեմքեր»-ուն մեջ.

«Մարմնական հաղթ զանգված մը, դեպի հետն շրջած քիչ մը. հեացող ու դժգոհ լանջ մը, որուն վրա վաղահաս ալեորումով ճերմկած՝ առյուծի գլուխ մը ու զվարթ դեմք մը կհոխաբտան. սրտաթունդ ու անուշ ձայն մը, որուն հայտնի անկեղծության շեշտը շիտակ սրտիդ կերթա ու կտիրե անոր. ձեռքի բուռն շարժումներ, որոնք սպառնալից պիտի թվեին, եթե դադարեին շնորհալի ըլլալե և որոնք՝ խոսակցության մեջ բանիվ բերան։ չզուրցված մասերը ամբողջացնելու պաշտոնը կկատարեն։

Այս է արտաքին երևույթը։

Հին ատենները սպարանքներու բոլոր արվեստական շքեղությունը ներսն էր. հիմակվան ճարտարապետությունը՝ շենքի դուրսի երեսին վրա կթափե իր բոլոր ճիգը, իր արվեստը, իր ճաշակը հոն ի տես կդնե ու փույթ չըներ, որ ներսի պատերը անշնո՞ր կամ անպաճույճ երևան, հո՛ս հանգած է բաղաքակրթության հարատև ձգտումը. ամեն ինչ դուրսը։ Գերաշնորհ Օրմանյան՝ հին ժամանակի ապարանքներեն է. իր ներսը հմտության գանձեր կան լեցված և հոն կառուցված ապարանք մը կա սրտի ու մտքի ամեն ճոխություններով, որոնք իր եկեղեցականի համեստ սքեմին տակ կծածկվին միշտ։

Օրմանյան ինքզինքը հեռու չէր պահեր ժողովուրդեն. ընդհակառակը իր պտույտները թաղ՝ պատարագի ու քարոզի համար, տուներն ու հանդեսները՝ որոնց միշտ առիթ կստեղծեր, ժողովուրդին հետ միշտ շփման մեջ կպահեին զայն։ Այնուամենայնիվ բան մը կպակսեր իրեն ժողովրդական դառնալու համար. հաղորդական չէր. հակառակ իր ցույց տված պարզության, անչրպետ մը միշտ կար իր և ժողովրդական խավերուն միջև։

Համեստ էր Օրմանյան, բայց ոչ հաղորդական, ժողովրդական դառնալ ամենուն տրված չէ. ոչ ալ բավական է արժանիք ունենալ՝ ժողովրդականություն շահելու համար։

Որքա՞ն բախտախնդիր մարդիկ կան, օրինակ, որոնք գիտեն ժողովրդականություն շահելու կերպը։ Ու նաև որքա՞ն ամբոխավարներ, որոնք իսկույն կկախարդեն զանգվածը։

Ու փոխարեն մարդիկ ալ, որոնք իրենցմե կխրուչեցնեն ուրիշները, չեն կրնար ամենուն ժպտիլ, բոլորը սիրաշահիլ։ Կրսեն ինչ որ կմտածեն, չվախնալով նույնիսկ կոշտ ըլլալե իրենց անկեղծության մեջ։ Օրմանյան այս վերջիններեն էր։

Լուրջ գործի մեջ, բայց դիտեր զուսպ ըլլալ ի հարկին։ Ազդեր էր իր շենշող ընավորությունը, որ կատակներով կհամեմեր իր խոսակցությունները, թեև այդ կատակներ երբեմն մինչև հեգնության կերթային։

Օրմանյան իր զուսպ ձևին մեջ կրքոտ էր ներսեն։ Եվ պետք է ըսել, որ նկարագրի իր այս գիծը ևս մաս կկազմեր իր անհատական շեշտված խառնվածքին, որ մարդը երբեմն պաղարյուն կպահեր ճշնամությանց դեմ։ Եվ ավելցնենք անմիջապես, որ այդ կիրքը զրսպած է հաճախ կյանքի մեջ և զգուշացած է իր թշնամիներուն դեմ ելույթներ ունենալե, թեև այդ պաղարյունությունը չէ կրցած պահել իր օրերու պատմությունը կամ իր մտածումները գրի առած ատեն։ Իր երկերուն մասին խոսած ատեն տեսանք, թե «Ազգապատումա»-ին և «Հոգ և խոսքա»-ին մեջ դեռ

[234] «Հոգ և խոսքա», էջ 23։

կշամենա կիրք մը, թեև անոնք գրված ըլլան իրենց պատմած դեպքերեն տասնյակ տարիներ հետո։

Բլուզանդ Քեչյան, որ շատ մոտեն ճանչցած էր Օրմանյանը և անոր ամենեն չերմ հիացողներեն մեկն էր եղած, կգրեր անոր նվիրված խմբագրականի մը մեջ, նույնիսկ տգեղ ցույցերեն անմիջապես հետո. «Հարկ է նաև խոստովանիլ, թե Օրմանյան վերին աստիճանի ընկերային մարդ էր. իր խոսակցությունը հույժ հաճելի էր. կատարյալ կենցաղագետ մ'էր. ընտանեկան անթերի և անստգյուտ կյանք մ'ուներ և իր անձնական բարոյականն անաղարտ մնաց Բերայի ամենեն եռուզեռ կոգրոնին մեջ բնակելուն հակառակ»։

Իր նկարագիրը լրիվ տված պիտի չըլլայինք, եթե զանց ընեինք Օրմանյանի մեկ ուրիշ բացառիկ գիծն ալ՝ հակասությանց մարդը իր մեջ, և մանավանդ իր բացառիկ ուժը բոլոր այդ հակասությունները իրարու հետ հաշտեցնելու։ Իսկ այդ ուժը ուրիշ բան չէր, բայց եթե կյանքի պայմաններուն կարենալ հաշտվելու իր ձիրքը, և իր շրջապատին համաձայն դիրք առնելու իր կարողությունը՝ իր անհատականությունը առանց սակայն զոհ տալու իր շուրջի պայմաններուն։

Օրմանյան ինքն իսկ կընդունի, թե իր կյանքը ուրիշ բան չեղավ, բայց եթե «Շատ մը իրարմե տարբեր ու իրարու անհարիր շրջաններու համախմբություն մը, անկապակից տեսությանց միավորություն մը, և փոխադարձաբար անկախ գործերու գումարում մը։ Ես իսկ վարանոտ անուշադրության մեջ կգտնվիմ, երբոր կուզեմ ճշտել, թե ի՞նչ եղած է կյանքիս տիրող նկարագիրը։ Ո՞ւր Անտոնյանց վանքին երկյուղած ու բարեպաշտ ուսանողը, և ո՞ւր Վատիկանի դեմ պայքար մղող հաստատամիտ գործիչն ու գրիչը։ Ո՞ւր հռոմեական գրության չատագով աստվածաբանը, և ո՞ւր հակահռոմեական աստվածաբանության հոանդուն ուսուցիչը։ Ո՞ւր եվրոպական ոստաններու մեջ հանգստավետ կյանքով ապրողը, և ո՞ւր Հայաստանի անկոխ լեռներն ու անշեն ձորերն ու շինական խրճիթներուն մեջ զվարթամիտ թափառողը։ Ո՞ւր պահպանողական սկզբունքներով սնած ու գործած աշակերտը, և ո՞ւր ազատամիտ ու լայնախոհ սկզբունքներու հետևողն ու պաշտպանողը։ Սակայն իրականությունն մըն է, որ այս ամենն ալ ճշմարտված են իմ կյանքիս մեջ, և իրարու ներհակ ծայրերու ծառայելով մեկտեղ՝ ո՛չ ինքնությունս եմ կորուսած, և ո՛չ իսկությունս շփոթած, ո՛չ անարգանաց հանդիպած, և ո՛չ զարմացմանց տեղի տված, այլ միևնույն և ինքնիրեն համաձայն անհատականությունս եմ պահած»[255]։

Տարբեր դիրքերու վրա նույն մարդը մնալու այս վարժությունը հիմնական գիծերեն մեկը կազմեց Օրմանյանի նկարագրին, և զայն ընդունակ դարձուց գիրք բռնել պարագային համեմատ «Պարտյաց, պահանջից և պատշաճից հպատակիլ» կանվանե Օրմանյան այս ճարտարությունը, և զայն գերագույն իմաստություն կսեպե, մինչ ուրիշներ կեղծիք պիտի նկատեին զայն պարզապես։ Այդ ճարտարությունը, զոր կիրարկած է մինչև վերջ, Հռոմի տարիներեն կուգա իրեն, երբ առանց համոզված ըլլալու, միջնադարյան հավատաքննությունը պաշտպանած է եկեղեցական պատմության քննության ատեն, իսկ պապական իշխանության ջատագովականն ըրած է, առանց նույնպես իր ըմբռնումն ըլլալու, աստվածաբանական մագիստրոսության քննության պահուն, և երկու քննությանց մեջ ալ շահած է մրցանակը։

Շահեկան է սակայն դինքը կարդալ. «Նորահաս կամ լավ ևս տհաս աշակերտությանս ժամանակ տեսածիս հետևելով և թելադրվածին համակերպելե տարբեր բան մը չէի կրընար ընել, և խղճմտությամբ վարեցի այդ դերը օրինակելի ճշտապահությամբ։ Կրոնական սկզբունքներս, դավանական ըմբռնումներս, գործնական արարքներս միևնույն ուղղության վրա պահեցի. տարբեր համոզում չէի կրնալ ունենալ, տարբեր ընթացք ալ պետք չէր որ ունենայի։ Ջափահաս աշակերտությանս և հետախույզ ճիգերուս մեջ գտնված դավանանքս սկսավ զիս չգոհացնել, հռոմեադավան սկզբունքներուն հիմերը սկսան տկար երևնալ, գործածված փաստեր կամայականության ձևեր և՝ այլայլության իմաստներ սկսան ցուցնել, բայց տակավին իմ վրա չէի զգար այնչափ հեղինակություն և այնչափ փորձառություն, որ կարենամ կացությունը հուզել և խզել եկեղեցական պատմության մրցակից քննության մեջ միջնադարյան հավատաքննության պաշտպանությունը նյութ տրվեցավ, այնպես պաշտպանեցի՝ որ մրցանակը տարի, թեպետ համոզումս լիուլի չէր։ Աստվածաբանական մագիստրոսության մեջ պապական իշխանությունը այնպես պաշտպանեցի՝ որ հռոմեականներն ալ զարմացուցի, թեպետ ըմբռնումս համաձայն չէր։ Սակայն համալսարանական ծրագիրը այս էր և ես այս ծրագրին հետևած էի

255 «Հոգի և խոսք», էջ 457։

և ուսումնական իշխանության հեղինակության դեմ բարոստանալու ոչ պարագայք կներին և ոչ օրինավորությունը կթույլատրեր։ Պարտյաց և պահանջից և պատշաճից հպատակիլը դերագույն իմաստությունն է, ուսկից երբեք բաժնվիլ չեմ ուզած»[256]։

2. ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՐՄԻՑԸ

Ամենեն շահեկան դիծն է Օրմանյանի մեջ հանրային գործիչը, որովհետև ամենեն բնորոշիչն է իր գործունեությունը այլազան ներուժներուն մեջ, և միևնույն ատեն ամենեն փշոտ գետինն է Օրմանյանի կյանքը պրպտողին համար, որովհետև հոն է, որ կրախին հակասություններու։

Հայ ժողովուրդը հոսի սովորություն մը ունի՝ մարդիկը հեռացնել իրենց կոչումեն...։ Պրպտեցե՛ք հայ ժողովուրդի պատմությունը, աչք մը պտտցուցե՛ք մանավանդ ձեզի մոտիկ շրջաններուն վրա, ու պիտի տեսնեք, որ կյանքը հեռացուցած է շատերը իրենց հիմնական կոչումեն, հաճախ պարզ ուսուցիչներու ձեռքը տալով Հայկական դատը, դիվանագետի վերածելով բանաստեղծները, ու փոխարեն հասարակ վարժապետի փոխարկելով մարդիկ, որոնք պիտի կրնային բարիք բերել հայ ժողովուրդին տարբեր ասպարեզներու վրա։

Հայ կյանքի բացառիկ պայմանները Օրմանյանը ևս շեղեցուցին քանիցս իր նախընտրած ասպարեզեն, որ գրականությունն ու մանավանդ ուսուցչությունն էր, բան իր խոստովանությունն։

«Բնական բերմամբ վարչական գործերու սիրահար չեմ եղած,— կգրե Օրմանյան,— և ուսումնական ու գրական աշխատանքներու նախագասած եմ, նույնիսկ անհատական առավելությանց տեսակետեն, դի գրական արդյունքները մշտնջենական հիշատակ կթողուն, մինչ վարչականներ ապաշնորհ հետևանքներ կարտադրեն։ Ասով մեկտեղ մտադրություն հանձն առի վարչական պաշտոններ երբոր օրինավոր և պարտավորիչ կերպով ինձի առաջարկվեցան։ Իբրև հաստատուն կանոն բրի ինձի ոչ մի պաշտոնի հետամուտ բլլալ և ոչ մի պաշտոնե խուսափիլ»[257]։

Արդարև, Օրմանյանի համար խորթ ասպարեզ էր եղեր Կարնո առաջնորդությունը։ Նախ, զոր ստանձներ էր հազիվ մտած հայ կյանքի սեմեն, ինչպես պիտի բլլար հետադարձ Պոլսո պատրիարքությունը ևս, որուն պիտի կոչեին զինքը, ընդհատելով իր գործունեությունը։

Վարչական այս պաշտոններուն մեջ էր առավելապես, որ հանրային մարդը աշքառու պիտի դառնար իր մոտ, որովհետև այդ պաշտոններուն առթիվ էր, որ շփման պիտի մտներ հանրության լայն խավերուն հետ։

Ինչպես առաջ ալ ըսինք, Օրմանյանի նկարագրին ամենեն բնորոշ կողմը անհատական դիծն էր իր մեջ։ Իր բնավորության բոլոր մյուս գիծերը, և անոնց հետ նաև իր բոլոր թերությունները, իր շեշտված անհատականությունենեն կբխին։ Այդ դիծը տիրական մնաց հանրային մարդու մեջ ալ։

Եվ հետևաբար անոնք, որ հանրային մարդը կդատեն Օրմանյանի մեջ, պետք է նույն այս գիծեն մեկնին անոր գործունեության մեջ վրեպներ ևս փնտռելու ատեն։ Առանց իր բնավորության այս շեշտված գիծին, հավանաբար իրեն վերագրված վրեպներեն շատերը չունենար ան, և անշմար անցնեին իր վրա շատ մը բիծեր, զոր ամեն մեկս ունինք և որոնք ավելի ցայտուն կերևան սակայն ուժեղ մարդոց վրա։

Եվ նույն այդ գիծն էր, զարձյալ, որ շատերը խրտչեցուց իրմե, անջրպետ ստեղծեց իր և ուրիշներու միջև և դժդոհներ ստեղծեց իր շուրջ։ Անկե կուգան հետևաբար հակակրություններն ալ, զորս սկսավ քաղել և որոնցմե շատերը թշնամության պիտի փոխվեին հետո։

Այնպես որ իր այդ շեշտված անհատականությունն էր, որ կմղեր զինքը տիրական դիրք մը որդեգրել բոլոր այն պաշտոններուն մեջ, զորս կոչված էր վարել, և մանավանդ իր պատրիարքության տասներկու տարիներուն։

Մենատիրության բաղձանք կոչենք իր այդ բնավորությունը թե կամքի մեջ համառություն, Օրմանյան չափազանցության տարած էր զայն, ու ճիշտ ադոր կպարտի թշնամությունները, զորս քաղած է ան, և որոնք հալածանքի պիտի փոխվեին, երբ ինք իշներ իր դիրքեն։

Տեսակ մը խոստովանություն է որ կրնե, երբ կրսե հանրային մարդուն դերը ճշտելու առթիվ. «Առաջին պայմանը ինքնիր գործին տեր բլլալն է։ Գիտեմ, որ սահմանադրական և խորհրդակցական դրությունը պաշտոնի գլուխ գտնվողները կպարտավորե յուրովի և աղեկամի չգործել, այլ ո՛չ թե իր ինքնությունը ուրանալ։ Ընդհանուր կարծիքը գլուխ գտնվոզը պատասխանատու կճանչնա և ձախողվածի առթիվ կմեղադրե, ուստի՝ դի-

257 «Հոհք և խօսք», էջ 15։

256 «Հոհք և խոսք», էջ 458։

մարաժանյալ իրավունքով, գլուխ գտնվողը պետք չէ առաջնությունը և առաջնորդությունը ձեռքն թողու, և ստրկաբար ծառայե այնոր պիսիներու, որոնք կընեն ու կըլլան»[258]։

Ճիշտ այդ պատճառով էր, որ Օրմանյան չէր կրնար ուրիշներու գործակցիլ հավասար պայմաններու մեջ. պետք է որ ինք վարեր գործը, որ կհանձնվեր իրեն։ Երբ մեկը կգիտակցի մանավանդ շուրջիններուն վրա իր ունեցած առավելությանց. հաճախ կստիպվի ինքզինքը զգացնել անոնց հետ իր գործակցության պահուն։ Շատ մեծ պետք է ըլլալ, չտեսնելու համար այդ անշրպետը. իսկ մեր օրերուն մարդոց տրված չէ այդքան մեծ ըլլալ։ Համեստ շատերը կըլլան. խոնարհ ըլլալ քիչերու միայն վերապահված է։

Օրմանյան ինքն իսկ կրացատրե վարվելու իր ձեր շուրջիններուն հետ. «Աշխատած եմ, որքան հնար է, իմ գործերուս տերը ես ըլլալ, օրենքին և կանոնին ապահոված չափը ձեռքե չհանել, խնդիրները ներկայելու մեջ պատշաճ զգուշավորությունը գործածել, ժողովականներու միտքերը կանուխեն պատրաստել, գործին կամ խնդիրին թեր ու դեմ պարագաները հստակորեն հաղորդել, և այս կերպերով որոշումը իր նախադասած կողմը հակեցնել։ Դյուրին և հայտնի խնդիրներու մեջ չեմ քաշված կանուխեն կարծիք պարզել և որոշումը փութացնել, իսկ դժվարին ու ծանր խնդիրներու մեջ թողած եմ, որ ժողովականները նախապես իրենց բաժանյալ կարծիքը և գաղափարները հայտնեն, վիճին ու վիճաբանին, և երբոր կդադրին, այն ատեն միայն խոսք առած, խոսքերը ամփոփած և որոշումը փութացուցած եմ։ Ժողովական որոշումները հաճախ իմ տեսությանց համաձայն տրված են, և այս ոմանց առիթ տված է ըսել, թե միշտ իր կամքը առջև կտանի, ասկայն օրենքի հակառակ պարագա մը ցույց տալ չեն կրցած, իսկ ճարտար կերպով կիրառությունը ոչ մի օրենք չէ արգիլած, ես ալ օձիքս ուրիշի ձեռք տալ չեմ ուզած, ինչպես ոամկորեն բացատրությամբ կզրուցվի»[259]։

Դարձյալ ինքն է, որ կխոստովանի, որ հ-թե իր պաշտոնին վրա պահեց, օրինակ, Գաբրիել վարդապետ Ճեվահիրճյանը իրեն պատրիարքական փոխանորդ և նույնիսկ եպիսկոպոսության բարձրացուց զայն, անոր համար էր միայն, որ Ճեվահիրճյան հլու, մեղմ, համեստ հոգևորական մըն էր և ընդունակ չէր ինքզինք շեշտելու իր պաշտոնին մեջ. «Ճեվահիրճյան համեստ ու չափավոր կարողության տեր. և մեծ գործեր յուրովի ստանձնելու և վարելու չգտնող, իսկ շատերե անբավական անձ նկատված էր, ուստի ոմանք այնպես կարծեցին, թե լոկ յուր քեռորդվույն, Նորատունկյան Գաբրիելի, հաճելի ըլլալու համար զայն պաշտոնի վրա պահել ուզած ըլլամ, մինչ ես շատ հեռու եմ եղած ուրիշին հաճելի ըլլալու համար անհարմար անձի գործածությամբ նեղվելե։ Իմ տեսությամբս փոխանորդ եղող անձը պետք է, որ նախաձեռնարկ գործունեությունը չունենա, գլխավորին հանձնարարությանց և թելադրությանց ճշտապահ գործադիր ըլլա, համեստ կյանքով ու անշահասեր ուղղությամբ գործե, յուր և յուր գլխավորին պատիվը պահել գիտնա, և հղված տեղեր հարգանք կարենա վայելել։ Ճեվահիրճյան ճշտիվ այդ անձն էր. նախաձեռնարկ գործունեությենե զգուշանալը առավելություն մըն էր, որով կըրցած և ուզած եմ զայն փոխանորդ պահել իմ կամքիս հետևելով, և ո՛չ երբեք ուրիշի հաճելի ըլլալու միտքով»[260]։

Ակնհայտնի է իր դժգոհությունը, օրինակ, առաքելության առթիվ, որով Երուսաղեմ կղրկվեր 1914-ին. վանքը բնականոն պայմաններու մեջ դնելու համար։ Դժգոհ է նախ հրահանգներեն, զորս Ազգային վարչությունը խմբագրած է իբրև ուղեցույց Երուսաղեմ գացող պատվիրակության. այդ հրահանգները կկաշկանդեն զինք իր գործունեության մեջ, և, ինչպես կկարծե, պիտի խանգարեն գինքը. ազկե է, որ ան կխմբագրե ու կտպե «Դիտողագիր» մը, փոխել տալու համար այդ հրահանգներու։ Դժգոհ է նաև, որ ինք միակ լիազորը պիտի չըլլա Երուսաղեմի մեջ. իրեն հաճելի չի թվիր, որ Ազգային ներսիսյանական ժողովը Վահան Թեքեյանը ևս ընկերացուցած է իրեն նույնպես իբրև լիազոր, որուն հետ առաջին օրեն կգժտվի։

Օրմանյան կըսե սակայն, թե գործի ընթացքին գժտության առիթ չի տված երբեք, իր անհատականությունը պահելով հանդերձ. «ժողովականներու հետ կանոնական ճշտությունները հարգած եմ, այնպես որ տասվերկու տարիներու մեջ երբեք գժտության և հակառակության տեղի տրված չէ. իսկ հրաժարելիս ետքը խոսված կամ գրված զրույցները՝ խծբծողներու ձայնակից ըլլալու մարմաջով հղացված մտացածին բաներ են։ ... Սակայն կանոնական ճշտությունները պահելով մեկտեղ, ո՛չ նախագահական առավելությունս նվաղեցուցի, ո՛չ ինքնությունս ուրացա, և ո՛չ ալ իմ

[258] Նոհդ և խոսքս, էջ 31։

[259] Անդ, էջ 23։

[260] Անդ, էջ 179։

տեսությանց ներհակ գործունեության ապարեզ տվիր»[261]։

Թե Օրմանյան ամեն բան իր ձեռքին մեջ էր կեդրոնացուցած, այդ իր բարեկամներն ալ կընդունին։ Բայց այդ կվերագրեն այն բանին, որ ձեռնհաս մարդիկ իր շուրջը չկային, իսկ եթե կային, գործերուն փարած էին մատին ծայրով։ Օրմանյան ստիպված էր հաճախ ինքն ընել բոլորին ալ գործը։ Բյուզանդ Քեչյան այդ բանին ակնարկելով կգրեր. «Ամեն բան ինքն էր, և ինչպես որ Լուի ԺԴ ըսավ L'état c'est moi (ես ինքս եմ տերությունը), Օրմանյան ա՛լ ավելի իրավամբ կրնար հայտարարել, թե «ես ինքս եմ պատրիարք, Պատրիարքարան, Կրոնական ժողով, Քաղաքական ժողով, Տնտեսական խորհուրդ, Ելեմտից հոգարարձություն, Դատաստանական խորհուրդ և Ուսումնական խորհուրդ»։

Գարրիել Նորատունկյան, որ ամբողջ 12 տարի Օրմանյանի հետ գործեր էր առանց սակայն անոր կողքին մնալու «քավության» պահուն, ըսեր էր «Մշակ»-ի թղթակից Սարուխանի. «Օրմանյան վերին աստիճանի աշխատասեր մարդ էր. նա հոգնել չգիտեր։ Պատրիարքարանի բոլոր գործերին համարյա թե միայն ինքն էր ուղղություն տալիս. ոչ մի գրություն դուրս չէր գար Պատրիարքարանից, մինչև որ նա կանխավ տեսած և սրբագրած չլիներ։ Նա եռանդուն էր թե՛ խոսելու և թե՛ գործելու մեջ»։

Հանրային մարդը Օրմանյանի մեջ կընորոշվի նաև իր սառնասրտությամբ և պաղարյունությամբ։

Օրմանյան արդարև զգացումի մարդ չէր։ Ան կդավաներ, որ վարիչ մարդը պետք չէ զգացումներն տարվի։ Ընդհակառակը զգացումը թերություն մը կդավաներ պատասխանատվություն ստանձնող մարդու մը համար, որ պարտավոր էր ամուր ջիղեր ունենալ, շուտով չհուզվեր ու չխանդավառվեր, ու շուտով ալ չհուսահատեր ու չսմքեր։ Վարչական մարդը, իրեն համար, պետք է պողպատե շինված ըլլար՝ չազդվելու համար ոչ սպառնալիքներեն, ոչ ալ արցունքներեն, ոչ վախեր, ոչ ալ փղձկեր։

Հիմա լսենք Օրմանյանն ալ.

«Ավելի ծանր դիտողություններու առիթ տվավ սիրտի խնդիրը, մինչև իսկ հոչակելով, թե Օրմանյան սիրտ չունի։ Սիրտ անունը երկու իմաստով կգործածվի սովորական խոսակցության մեջ, երբեմն իբր կորով և երբեմն իբր գորով։ Իբր կորով կնշանակե դժվարությանց դեմ արիանալ, վտանգներու դեմ խոյանալ, արգելքներու դեմ քաջանալ, և այդ իմաստով կառնվի սրտոտ, այսինքն սիրտ ունեցող անունը։ Իսկ իբր գորով իմացված ատեն կնշանակե զգացումով առատանալ, ախուվախեր խոսիլ, արգահատանաց բացատրություններ շռայլել, երբեմն ալ կեղծ ու իրավ արտասվել, և ասանկ են բուխ-սիրտ կոչվածները։ Իմ սիրտ չունենալը առաջին իմաստով առնել հնար չէ, զի դժվարություններու հանդեպ և սպառնալիքներու ներքև տասվերկու տարիներ պաշտոնիս վրա անհողդողդ մնալս բավական է զիս արդարացնել, նյութական ո՛չ մի առավելություն չվայելելով մեկտեղ։ Իսկ երկրորդ իմաստին գալով, մարդ զգացումի հետ միտք ալ ունի, և յուր դերագույն ձիրքը միտքն է, իսկ զգացումը անբաններու ալ հասարակ է։

Արդ՝ պահանջել, որ մարդը զգացումով առաջնորդվի, զայն ստորացնել է և ոչ թե բարձրացնել, և իմ համոզմամբ կատարելագույն է մարդը՝ որ միտքով, խորհրդածությամբ և կշռադատությամբ կառաջնորդվի, և պատահական զգացումը իրեն ուղեցույց և կանոն չընդունիր, երևույթով չի խաբվիր, ամեն ցույցի դյուրավ ականջ չի կախեր։ Կընդունիմ որ եղեր են պարագաներ, որոնց մեջ ադալանքներ, պաղատանքներ, թախանձանքներ, արտասուքներ ինձի իբրև փաստ երևցած չեն խնդրանք մը կատարելու, երբոր գործին պարագաները և մասնավոր տեղեկություններ, և հետապնդյալ զբաղումներ անոնց արդարացի ըլլալը չեն հաստատած, և հետևաբար անոնց ընթացք ալ չեմ տված։

...Այս պարագաներու ներքև ավելի արդար էր ինձի համար ըսել, թե զգացումներով կառավարվող մը չէ, թե միտքի կշռադատությանց համառ հետևող մըն է, և ոչ թե ըսել, թե սիրտ չունի»[262]։

Եվ անմիջապես կավելցնեն սակայն, թե դեպքերուն առջև չհուզվիլ չի նշանակեր անտարբեր մնալ կարիքներուն առաջ ալ, և թե ինքը երբեք ալ անկարեկիր գտնված չէ Ազգին ցավերուն հանդեպ. և իբրև ապացույց կհիշե նպաստի գործը, զոր կազմակերպեց «գրեթե բովանդակ իր անձնական նախաձախեղդությամբ»[263]։

Օրմանյան որքան պաղարյուն և սառնասիրտ՝ նույնքան զգույշ և խոհեմ էր գործի մը ձեռնարկած ատեն։ Երկար կշռելե հետո միայն քայլ կառներ, համոզված որ բազմաթիվ ձախողվածներ հետևանքն են հախուռն քայլերու։ Իր այդ զգուշավորությունը սապես կբացատրե ինքը. «Որևէ գործ մը ներկայացած կամ որևէ ձեռնարկ մը սկսելու ատեն, ուշի-ուշով քննել նախընթացն ու պարագա-

[261] «Խոհք և խոսք», էջ 31—32։

[262] Անդ, էջ 26—27։

[263] Անդ, էջ 27։

ները, նպաստավոր և աննպաստ հանգամանքները, հաջողության և ձախողության կշիռը, և այնպես գործին ձեռք դարձնել, ելքը անհավանական և հաղթությունը անստույգ ձեռնարկներն զգուշանալ, ինքզինքը ձախողվածի վտանգեն հնարավոր չափով հեռու պահել։ ...Ոմանց տեսակետով այս ընթացքը վախկոտություն, թուլություն, ապիկարություն, կկարծվի, և եռանը առչեր չկշռելով գործի ձեռնարկողներ աշխույժ, արի և գործունյա կդատվին։ Իմ փորձառությունս հակառակը կհաստատեւ։ Հախուռն և անկշռադատ ձեռնարկներ պարզապես անիմաստ ընթացք են, որոնց հետևանքները ձեռնարկողին վրա կծանրանան, իր գործունեության մեջ ձախողելը պզտիկություն կրերե գործողին վրա, հաղթանակի առավելություն կուտա դիմացինին, դյուրավ մերժվելու դուռ կբանա, պատիվը կնվազեցնե, հարգն ու վարկը կվտանգե, որ է ըսել՝ բարոյական առավելություններն կկապտե գործողը, որ նյութական առավելություններն գերագույն կշիռ ունի գործիչներու համար»[264]։

Իր զգույշ բնավորության հետ, Օրմանյան համառություն ալ ուներ սկսված գործ մը ելքելու կես ճամբան և զայն հասցնելու իր ցանկացած վախճանին։ Ճիշտ է, հաճախ կգոհանար կիսամիջոցներով, և պզտիկ բավարություն մը հաջողություն կսեպեր, բայց չէր կասեր արդյունք մը ձեռք չձգած։

Օրմանյան սակայն հուսահատիլ ևս չէր գիտեր ձախողությանց առեն, ինչպես չէր սիրեր ձեռնթափ ըլլալ դժվարությանց առչև։

Ուրիշներ, իր տեղը, դասալիք պիտի ըլլային շուտով խութերու հանդիպած ժամանակ· ինք կտոկար մինչև վերջ։ Ադգե նաև իր անհողդողդ կեցվածքը իր պաշտոնին վրա, հակառակ բոլոր այն դժվարություններուն, զորս արքունիքը և պետական ուրիշ մարմիններ անընդհատ կհարուցանեին իր գործունեության առչև, և հակառակ նաև իրեն տրված խորհուրդներուն ու մինչև իսկ սպառնալիքներուն՝ որպեսզի պաշտոնեն քաշվի։

Իր գլխավոր պատճառաբանությունն էր, թե Ազգը գործ մը կհանձնե մեկուն, որպեսզի զայն վարե, ոչ թե անկե հրաժարի։

«Ինչ համոզմամբ և սկզբունքով պատրիարքությունը ստանձնեցի,— կրսե Օրմանյան,— նույն կերպով ալ զայն պահեցի տասվերկու տարիներ։ Ինձի նվիրական պարտք համարելով Ազգը ընտրողական տագնապի չմատնել, և կամ անտերունչ մնալու վիճակին չենթարկելը»[265]։

Այդ տրամաբանությամբ էր, որ համառեցավ ան իր պաշտոնը ելքել, և դժվար տեղի տվավ նույնիսկ այն պահուն, երբ եկեր էին հրաժարական պահանջելու ցուցարարները և երբ զինք կլքեին իր իսկ գործակիցները։

Ան կզգուշանար միևնույն ատեն ծայրահեղ պահանջներե, և ինչպես կրսեն, երկու ծայրերուն մեջ միշտ միջին կետը կփնտռեր։ Այս կերպով ոչ դիմացինը կխրտչեցներ, և ոչ ալ պարտված դուրս կուգար։ Նման քաղաքականությունենե մը օգուտ մը միշտ ապահով կգտներ, ինչքան ալ դյուրն ըլլար ձեռք ձրգվածը, բայց փոխարեն վնասի մը հավանականությունը ևս անհետացած կըլլար։

Օրմանյան երբ կպարծենա, որ ոչ ոք կըրցավ ցույց տալ, թե իր գործունեությենեն որևէ վնաս եկած է Ազգին, և որ իր դեմ ուղղված ամբաստանությունները ընդհանուր խոսքեր էին միայն, կրսե նաև։ «Իսկ ասոնցմե դուրս լսվածներ պարագայիդ համեմատ վարվելու պարտավորությենեն կծագին, որ խոհական գերզգոնությունն կկոչվի, հնարավորով գոհանալ երբ հնար չէ բացարձակը ձեռք ձգել, շահիլ երբ հնար չէ գսպել, դարձնել երբ հնար չէ դիմադրել, մինչև իսկ կարասին ծով նետել նավը ազատելու համար»[266]։

Օրմանյան միևնույն ատեն կարծես կհավատա, թե նպատակը կարդարացնե միջոցը։ Իրեն համար երբեմն կարևորություն չունին ճամբաները, բավական է, որ իր ուզած տեղը տանին։ Մեթոդ մըն է այս, որ գուցե Հոմանեն կուգա իր հետը և որ եթե երբեմն հաղթանակի կտանի մարդս, սակայն հաճախ ալ կսայթաքեցնե։ Կարապետ Տերությանն ամուսնալուծման խնդիրը, օրինակ, հաղթանակ մը չեղավ իրեն համար, թեև հաջողեր էր Ազգին կտակ մը ապահովել։

Օրմանյան, գործի մեջ, անհատական շահերու ասպարեզ չէր տար, երբ հանրային շահերն էին խնդրո առարկա։ Այդ սկզբունքեն առաջնորդված, հաճախ մերժած է անհատական դիմումներ, և կկարծե, թե հետագային իր դեմ հարուցված դժգոհություններեն շատերը իր այդ վերաբերումին հետևանքն են։

«Ուրիշ գործնական սկզբունք մըն ալ ըրած եմ ինձի,— կգրե Օրմանյան,— մասնավոր և անհատական գործերով ինքզինքս շատ չծանրաբեռնել, երբ ընդհանուր և հանրային գործեր կան կարդադրվելիք։ Անհատական գործեր ավելի նպաստավոր են անձնական շահերու, գովաբաններ պատրաստելու, երևույթներով փայլելու. և գործի գլուխ գտնվողներ դյուրավ կոահին այդ կողմը։

[264] «Խոհ և խոսք», էջ 25։

[265] Անդ էջ 18։

[266] «Ազգապատում», Գ. էջ 5416—5417։

նս աշխատեցա որքան հնար է, այդ սայթաքումեն զգուշանալ»[267]։

Օրմանյան ձեռակիրպությանց մարդն էր նաև։ Ան երբեմն կկարծեր, որ ձեռքը փրկելով ոգին ալ փրկած կըլլար մեկուեղ։ Ան կարծեց, օրինակ, Սահմանադրությունը կիրարկած ըլլալ, իրենց պաշտոնը վաղուց ավարտած երեսփոխանները երբեմն հավաքելով և անոնց տեղեկություն տալով Ազգին գործերուն մասին։ Վատ բան չէր ուրիշները նս տեղյակ պահել իր գործունեության, բայց պետք էր նկատի ունենար, որ այդ ուրիշները այլևս Ազգային երեսփոխանական մարմով չէին։

3. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Հոգևորականը փնտռել հոգևորականի մը մեջ՝ անհեթեթ կթվի ինքնին։ Բայց անհրաժեշտ կդառնա, երբ պարագան Օրմանյանինն է։ Անհրաժեշտ էր գիտնալ արդարև, թե ինչպես կներկայանար հոգևորականը գիտնականի մը մոտ, որ եկեղեցական ու կրոնական հարցերու այնքան ուսումնասիրություններ է նվիրած և հավատքի մարդը ուսուցչի մը մոտ, որ հոգևորականներու սերունդ մը հասցուցած է։

Ըսենք ամենեն առաջ, թե իրրև հոգևորական Օրմանյան անթերի կատարած է իր կոչումին հարկադրած բոլոր պարտականություններն ու ձեռակերպությունները, սկսելով Անտոնյանց մոտ իր նորընծայությենեն։ Ուր ալ գտնված է և ինչ պաշտոնի ալ վրա, եկեղեցական պաշտմունքն չէ խուսափած բնավ։ Վանքերու մեջ գտնվեր պաշտոնով, թե վարչական զբաղումներու մեջ, եկեղեցի հաճախած է անվրեպ։ Եթե առանձնացման իր տարիներուն հետու մնաց եկեղեցական արարողություններեն, այդտեղ արդեն մեղավորը ինքը չէր։ Ամբոխն էր, որ պատարագելե արգիլեց զայն քանիցս։

Օրմանյան եկեղեցիեն չբացակայեցավ նույնիսկ իր ծերության օրերուն, երբ Երուսաղեմի վանքը կմնար, այլևս գրեթե անպաշտոն։

«Եկեղեցական պաշտամանց անպակաս էի առտու և երեկո՝ կանուխ երթալու և չվերջացած չելլալու պայմանով,— կգրե Օրմանյան։ — Որովհետև վանքին մեջ Ջիլինկիրյանե զատ եպիսկոպոս չկար, և ան ալ առանց փոխարինության աշխատանքներու հետամուտ չէր, գրեթե հատատուն հանդիսապետը կըլլայի նախատոնակներու և ատյաններու, թափորներու և դնացքներու, որոնք Երուսաղեմի մեջ հաճախ ու երկար են, և իրավունքի պարագաներ պարունակելուն՝ անտնօրինելի պարտավորիչ են»[268]։

Այնպես որ կրնանք վճռապես ըսել, թե Օրմանյան երբեք չթերացավ բոլոր այն ձեվակերպությանց մեջ, զորս կհարկադրեր իրեն սքեմը։

Բայց ըսենք նաև, թե Օրմանյան հոգևորականությունը ասպարեզ կնկատեր և ոչ թե կոչում։ Ասպարեզը, արդարև, առաքելություն մըն է։ զոր մարդ կընդգրկե գիտակցորեն, համոզումով. ինքն իր կամքովը, մինչ կոչումը կենթադրե նախասահմանված ըլլալ այդ առաքելության, և օժտված ըլլալ ի բնե որոշ ձիրքերով հատկապես այդ առաքելության համար։ Արվեստագետի ձիրքը կոչում մըն է, օրինակ։ Իսկ մարդիկ հոգևորական կդառնան, ինչպես պիտի նվիրվեին հանրային ուրիշ ասպարեզի։ Հավատքը դեր չի խաղար հոդ։ Որքա՞ն հավատացյալներ կան, որոնք սքեմ չեն կրեր։

Օրմանյան, սակայն, հավատացյալ մըն էր։ Ոչ թե տնոր համար միայն, որ աշքը վանքի մեջ բացավ և կրոնքն եղավ իր անդրանիկ սնունդը, այլ որովհետև հավատքը անհրաժեշտ գտավ, երբ արդեն իրերը սառն դիտելու տարիքին հասած էր։ Բայց սխալ պիտի ըլլար անոր հավատքը շփոթել քրիստոնեականներե անգիր սորվված բանաձևերու հետ։

Օրմանյան ինքը կուգա խոստովանելու, թե բրածո, քարացած համոզում մը չէր իր հավատքը։ «Կխոստովանիմ, թե կստեի, եթե հավատքի ու գիտության լոին պայքարը, որ ներկա դարուս հրապարակի վրա ալ կմղվի, իմ վրաս ազդած չէ բսեի։ Որչափ ալ ուսմանց ընթացքս և դաստիարակությունս կրոնական ուղղությամբ եղած են, այսուամենայնիվ թե՛ ուսմամբ, թե՛ ընթերցանությամբ, թե՛ հարաբերությամբ և թե՛ մոտեն շփմամբ, արտաքին գիտությանց և պատմական հետազոտմանց ու ներկա դարուս ուղղությանց օտար մը եղած չեմ։ Իմ միտքս ալ ընկճված է դավանական խորհուրդներու ծանր բեռներուն ներքև, իմ տեսություններս ալ զգածված են անիմանալի մթության առջև։ Բայց մտախոհ զգուշավորությամբ և հանդարտ խորհրդածությամբ կրցած եմ միտքս հանդարտեցնել, և ներքին խաղաղ մտայնություն և կացություն մը կազմել։ Այդ մասին իմ միտքիս վրա մեծապես ներգործած են բնական կամ նյութական աշխարհի գաղտնիքները, որոնցմե դյուրավ բարձրացած եմ գերբնական և հոգեկան գաղտնիքներու իրականությանն։ Երրորդության խորհուրդն իսկ անմարսելի և անտանելի չեմ գտած,

[267] «Հանք և խոսք», էջ 26։

[268] Անդ, էջ 333։

բայց մարդեղության և հաղորդության խորհուրդները ավելի ճնշած են միտքս, աստվածային բնության հետ համաձայնեցնելու դժվարության կողմեն։ Այսուհանդերձ անոր հպատակիս ալ դյուրացած է, քրիստոնեության վրա ունեցած բարձր և զորավոր, իսկական և ճշմարիտ համոզմանս ուժով, որ երբ հիմ մը հաստատուն է, անոր շենքն ու մասերը խարխուլ չեն կրնար ըլալ։ Այս համոզմանս շնորհիվ կրցած եմ ոչ միայն լավ հավատացյալ մը, այլև աստվածաբանական ճշմարտությանց լավ ուսուցիչ մըն ալ ըլլալ, հեռի մնալով միշտ հոմեադավան դրության յափազանցյալ և մենամոլ տեսություններեն, և հիմնվելով հայադավան յայնախոհ և ներողամիտ դրության վրա, ինչպես գործերովս ալ ապացուցած եմ»[269]։

Եատ քիչ անգամ հոգևորական մը այսքան ճարտար կերպով կրցած է իր հավատքը հաշտ ցույց տալ գիտության վճիռներուն հետ։ Միշտ է, հայ դավանանքի «յայնախոհ և ներողամիտ դրությունը» օգնության կհասնի իրեն, բայց ինքն ալ կրցած է մոլեռանդությունը քանդել իր մեջ, հիմքին հավատալ ու գերի չդառնալ մանրամասնությանց։

«Հավատքին անհրաժեշտության համոզումը,— կըսե Օրմանյան,— կգաղեմ մարդկային բնության իսկ իր կազմակերպությունը լրացնելու համար հավատքի պետք ունենալեն բնական և կենցաղական շրջանակին մեջ։ Հավատքին պակասությունը ահագին դատարկ մը կձգե մտավորական բնության մեջ, և որովհետև գիտությունն ալ կընդունի, թե բնությունը դատարկե կխորշի, անկե կհետևցնեմ, թե հավատքը անհրաժեշտ պետք մըն է միտքին դատարկը լրացնելու։

Այս տեսակետեն մեկնած, դժվար պիտի չըլլար իրեն համար բացատրել և աղոթքը։ «Հավատքի չափ,— կըսե ան,— և թերևս հավատքե ալ ավելի զորավոր եղած է հույսի վրա համոզումս, այն հույսը, որ աստվածային նախախնամության և հովանավորության սկզբունքը կազդե մարդուն։ Այդ ազդեցությամբ է, որ առ Աստված դիմումը և հայցվածը, կամ սովորական բառով աղոթքը, անկեղծությամբ և համոզմամբ կիրարկած եմ ամեն պարագայի։ Ամեն գործի սկիզբին կամ ընթացքին, ամեն դժվարությանց հանդեպ, առ Աստված դիմումը հաստատուն սովորություն եմ ըրած պատանեկան տարիքես ի վեր»։

Գեղեցիկ է հետմահու այս անկեղծությունը։ Մինչդեռ ոմանք սքողած են իրենց թերահավատությունը ու միշտ գերին մնացած ձևերուն և մանրամասնությանց, կամ երբ ուրիշներ հավատքին մեջ անմբռնելի բաները միստիկ գեղեցկության մշուշին են հանձնած, Օրմանյան կուգա ուրույն համոզումով մը, որ տարակույսը կվանե։

Զոհրապ, «Մանոթ դեմքեր»-ու շարքը մտցնելու առթիվ Օրմանյանը, սա տողերով կբնորոշե հավատքի մարդը Օրմանյանի մեջ. «Հավատք մը կա՝ որ անզգալաբար կտիրե վրադ. կարծես թե անուշադիր մեկ վայրկյանեդ օգուտ կքաղե ներս սպրդելու ու հոն հաստատվելու համար. ավելի կսահի քան թե հայտնի կերպով կմտնե։ Իրեն քարոզածը՝ հակառակն է ասոր. պայքարիկ ու բարձրախոսիկ բան մըն է, որ իր գալուստը կանխավ կիմացնե, իր սեփական ուժին կհենու ու հաղթական մուտքով խղճմտանքներեն ներս կմտնե. անոր համար որ համոզումի արդյունք է։ Հավատք, ո՞չ ապաքեն մարդկային իմաստությունը ուրիշ նպրակցության մը չի գար և աստանդական մտքերու համար՝ որոնք անմատչելի բեռի մը վրա ոտք կոխելու հույսով կմոլորին, նորեն ան է վերջին ու անքուլթ նավահանգիստը։ Այս պատճառով է, որ դերաշնորհ Օրմանյան աղաչավորի ու վեճե խուսափողի ձևեր չառներ երբ կրոնքի վրա կխոսի։ Ոչ պատմությունը կշփոթեցնե զինքը և ոչ գիտությունը. ընդհակառակը անոնցմե է, որ կքաղե իր փաստերը ու իր զենքերը կառնե. ամենեն նորահնար ապացույցները անծանոթ չեն իրեն, ու բանակովի մեջը չի նմանիր այն եկեղեցականներուն, որոնց բոլոր համոզումի միջոցները՝ վաղնջական ժամանակներե մնացած փաստեր են, որոնք նորերու դեմ հանվելով՝ առջի վայրկյաններեն կփշրվին»[270]։

Օրմանյան հոգևորականին մաս կկազմեր իր կապը Հայ Եկեղեցվո հետ։ Մեր ընթերցողները ծանոթացան հոգեկան այն բեկումներուն, զորս Օրմանյան կրեց իր ներսը, երբ Կաթոլիկ Եկեղեցվո վերարկուն էր դեռ վրան ու պայմաններուն, որոնք զայն Հայ Եկեղեցվո գիրկը բերին։ Ու այդ պահեն սկսյալ մինչև իր մահը, մոտ քառասուն տարի, Օրմանյան յերմորեն փարած մնաց Հայ եկեղեցվո, ոչ միայն հավատարիմ մնալով անոր իր կրած բոլոր դառնությանց մեջ ալ, այլ նաև ցատագով հանդիսանալով անոր վարդապետությանց իր զանազան երկերուն մեջ։ Օրմանյանի այս կապը Հայ Եկեղեցվո հետ կբխեր անոր հավատքեն այդ Եկեղեցվո վարդապետությանց ճշմարտության մասին, ինչպես և անոր համոզումեն այն առաքելության մասին, որուն կոչված էր Հայ Եկեղեցին հայ ժողովուրդի կյանքին մեջ։

[269] «Խոհք և խոսք», էջ 9—10։

[270] «Մասիս», 1893, էջ 3996։

«Քրիստոնեական սկզբունքներու և ավետարանական վարդապետություններու խորապես համոզված մրն եմ,— կգրե Օրմանյան,— իսկ անոնց ճշտագույն և հավատարմագույն դրությունը կճանչնամ Հայ Եկեղեցվո մեջ, և անոր հետևած եմ ճշմարտության հետեելու նպատակով»։

Համոզումով էր որ, ուրեմն, բաժնված է ան Կաթոլիկ Եկեղեցիեն, ուր կրնար բարձրագույն դիրքերու հասնիլ, և ուր սակայն պիտի բթանար իր մեջ մարդը ու հար պիտի խամբեր։ Երկու տարբեր զգացումներ կվարեն զինքը,— խրտչանք Կաթոլիկ Եկեղեցիեն, որ իր միտքը կկաշկանդեր, և զայրույթ դեպի Վատիկան, որ կփորձեր հայ կաթոլիկ համայնքը լատինացնել։ Բայց այս երկու զգացումները բավական պիտի չըլլային, եթե չունենար նաև այն համոզումը, թե Հայ Եկեղեցվո մեջ ավելի ազատ պիտի ըլլա հոգին։

4. ՈՒՍՈՒՑԻՉԸ

Խոսիլ ուսուցիչ Օրմանյանի մասին, կնշանակե խոսիլ անոր հիմնական առաքելության վրա, ասպարեզի մը վրա, որ անոր նախընտրածն էր և որմե ճակատագիրը սակայն հեռացուց զինքը հաճախ։

Օրմանյան ինքն իսկ մեզ կրսե, թե իր կոչումը առավելապես կրթական ասպարեզն էր, բայց ճակատագիրը թույլ չտվավ մնալ հոն. «Ճաշակ, ախորժակ, կոչում, ավելցուցե՛ք ևս հարմարություն և կարողություն, ավելի ուսումնական քան թե վարչական մարդ մը կսահմանեին զիս լինել։ Ընդհակառակն զավառական. առաջնորդության կոչվեցա շուտով, և յոթը տարի աղեկ գեշ շարունակեցի։ Բարեպատեհ առիթ մը դարձուց զիս ճաշակիս, և Մայր Աթոռս Ճեմարանին ուսուցչության հրավիրվեցա, բայց շատ քիչ միջոց, միայն 1887—1888 դպրոցական տարին կրցա շունակել»[271]։

Նույն խոստովանությունն է, որ ըրած է նաև այլուր։ Արմաշի 25-ամյա հոբելյանին առթիվ լույս տեսած հատորին մեջ, Դպրեվանքին «Առաջին գաղափարը» պարզելու ատեն, ան կգրեր. «Հակառակ իմ ձգտումներուն, գրական և ուսուցչական ասպարեզի դուրս՝ վարչական պաշտոնի կոչված էի 1880-ին, երբ 1887-ին առջևս կբացվեր ուսուցչականին դառնալու առիթը, Մայր Աթոռս Հոգևոր Ճեմարանին մեջ։ այլ, բաբե՜, շատ կարճատև եղած էր այդ գոհունակ պաշտոնավարությունս։ Զանազան պատճառներ ստիպեր էին զիս հեռանալ, և 1888 օգոստոսին Կոստանդնուպոլիս կդառնայի, նորեն վարչականին մեջ մտնելու նախազգացմամբ»[272]։

Ճեմարանի, Արմաշի և Երուսաղեմի իր տարիներուն մասին խոսած ատեն գրած ենք Օրմանյան ուսուցչին վրա։ Ըսենք այստեղ ևս, որ Օրմանյան ուսուցանելու իր ուրույն մեթոդը ունեցավ, և այդ մեթոդին շնորհիվ էր, որ կրցավ ոչ միայն զարգացած հոգևորականներու նոր սերունդ մը պարգևել Հայ Եկեղեցիին, այլև դանոնք օժտել բեղմնավոր դառնալու ձիրքով այլ։ Դպրեվանքի ղույդ դաստիարակները, Օրմանյան ու Դուրյան, տարբեր էին ինչպես խառնվածքով և հակումներով, նույնպես մեթոդով այլ։

Դժբախտ բան պիտի ըլլար, եթե Արմաշեն բոլոր ելլողները մեյմեկ Դուրյան դառնային։ Հայ Եկեղեցին առաքինի մարդոց պետք չուներ միայն, ոչ այլ մտքի արժանիքներով միայն օժտված ու թրծված մարդոց։ Հայ Եկեղեցիին պետք էին նաև վարչական ձիրքերով օժտված հոգևորականներ։ Օրմանյան տեսական գիտելիքներու, այսինքն հմտության հետ, վարչական հակումներ այ պատվաստեղ իր սաներուն, որպեսզի հայ թեմերուն վազվան առաջնորդները դառնան։

Ու պետք է ըսել, որ Դուրյանի ու անոր անմիջական ձեռնասուններուն չունչին տակ թրծված հոգևորականներն անգամ հեռվեն հեռու բան մը ժառանգեցին նաև Օրմանյանեն։ Անոնք ևս ժողովուրդին ծոցը գացին տքնելու համար, ինչպես ըրեր էր մեծ դաստիարակը։

Շահեկան մանրագեպ մը կպատմեն իր աշակերտներու ճարտասանության դասի մը պահուն, երբ Աստուծո գոյության մասին ապացույցներու որոնման կվարժեցներ իր սաները։ Կթվե բոլոր կարելի փաստերը, զորս կրնար հոգևորական մը ճարել այդ առթիվ։ Ու վստահ, թե իր ունկնդիրները արդեն օժտած է անհրաժեշտ զենքերով, որպեսզի իրենց կարգին անոնք այ փաստեն Աստուծո մը գոյությունը, կհարե իր աշակերտներուն զարմացական ակնարկներուն տակ.

— Հիմա այ ապացուցենք, թե Աստված չկա...

Ու միևնույն ճարտարությամբ կշարե բոլոր այն փաստերը, որոնք հնարված են ուրանալու համար Աստուծո գոյությունը...

Այո՛, իր աշակերտները ճարտասանության վարժեցնելու համար, փաստ ու հակափաստ ճարելու արվեստին դանոնք ըն-

271 Թեսդիկ. «Ամենուն տարեցույցը», 1908, էջ 20։

272 «Արմաշու դպրեվանքին 25-ամյա հոբելյանին առթիվ. 1889—1914», Կոստանդնուպոլիս, 1914, էջ 141։

տանեցնելու համար էին հոետորական այս փորձերը։ Բայց անոնք ցույց կուտան միևնույն ատեն, թե Օրմանյան վարպետ էր թեզ մը ընդլայնելու և հիմնավորելու։

5. ՔԱՐՈԶԻՉԸ

Օրմանյան կպատկանի հոգևորականներու թիվի մի մը, որ Հայ Եկեղեցվո եկավ արդեն կազմված։ Իր մտավոր պատրաստությունը լրիվ ստացած էր ան կաթոլիկ մթնոլորտի մեջ, և օժտված էր բոլոր այն ձիրքերով, որոնցմով այդ մթնոլորտը կպատվաստե հոգևորականը։ Քարոզիչի ձիրքը մեկն էր ազգոնցմե և կաթոլիկ դաստիարակության հիմնական պահանջներեն մեկը։ Առանց հոետորդարձած ըլլալու, ասպարեզ չէր իջներ կաթոլիկ հոգևորականը։

Օրմանյան ևս իր բազմաթիվ ձիրքերուն քարոզչի ձիրքը ևս կմիացներ։ Անոր համար քարոզչությունը անբաժան մասն էր հոգևորական ասպարեզին, և թերևս ամենեն էականը։ Ան շատ լավ գիտեր, թե քարոզիչն էր, որ ժողովուրդին կկապեր հոգևորականը և հնարավորություն կուտար անոր ժողովուրդին ևս ուսուցանելու։

Դասարաններուն մեջ իր դասախոսությունները պետք էին շատ տպավորիչ եղած ըլլալ, որովհետև անոնք կուղղվեին լսելու տրամադիր ունկնդիրներու։ Բայց իր որուշ քարոզները հասարակ ժողովուրդին համար չէին։ Պետք էր մտքով լարվիլ, թափանցելու համար անոնց և հետևաբար հաճույք զգալու համար անոնցմե։ Ոչ իր խոսելու ոճը, ոչ ալ իր արտաքինն ու իր ձայնը ունկնդիրը կախարդելու բնույթը ունեին, ինչպես էր, օրինակ, Դուրյանի մոտ, և ինչպես եղեր էր, կըսեն, Նարպեյի մոտ ալ։ Օրմանյան կտպավորեր իր քարոզներուն բովանդակությամբը, բայց տպավորվելու համար պետք էր ճիգ ընեիր նաև դուն ինքդ։ Հոգեկան այդ տրամադրությենեն զուրկ ունկնդիրը ավելի հաճույք կառներ, օրինակ, Հմայակ եպիսկոպոսի քարոզներեն, որոնք գիտեին ժողովուրդին դյուրին թելերուն հետ խաղալ։

Հոետորական գյուտերու մարդը չէր Օրմանյան իր քարոզներուն մեջ, ինչպես կըսեին թե եղեր է Նարպեյ, կամ գրական անակնկալներու վարպետ մը, ինչպես մեր օրերուն եղան Դուրյան ու Գուշակյան։ Իր քարոզները հոետորական ոճի պահանջները անշուշտ կլրացնեին, և հավանաբար մեծ մասամբ խորհրդածության նյութ եղած էին սկիզբեն։

Եվ ադոր համար հասարակ ժողովուրդին ուղղված ատեն ավելի պարզ կդառնային իր քարոզները, կամ ավելի ճիշտ՝ ունկնդիրին համաձայն նյութ ու ոճ կփոխեր, ինչպես քարոզներուն նույնպես և ճառերուն մեջ, զորս կատակներով և սրամտություններով ալ կհամեմեր հաճախ։

«Տեսակ մը ուսուցչություն է քարոզչությունն ալ,— կըսե Օրմանյան,— որուն խնամքով հետևած եմ, և ընդհանուր ըմբռնման մեջ իբրև ընդունելի և գնահատելի քարոզիչ մը ճանչցված եմ։ Քարոզչությանս մեջ հետևած ուղղությունս եղած է անխտիր ժողովուրդին հասկացողության համաձայն խոսիլ, հետևաբար երբոր հարկ եղած է՝ բարձր ոճ գործածած եմ, բայց ամենեն սովորական, լրսեմ ստորին, ոճով խոսած եմ հետամնաց գյուղերու մեջ։ Ջանացած եմ միշտ բարոյական գետնի վրա մնալ, վարդապետական նրբություններեն և հոետորական դարձվածներեն խորշած եմ սկզբունքով, պատմականը գործածած եմ պետք եղած չափով միայն։ Դամբրանականներու և հարսանիքներու մեջ զգուշացած եմ մարդահաճո և շողոքորթ ակնարկներեն, իսկ հանդիսական ատենաբանության մեջ միշտ աշխատած եմ գործնական գետնի վրա մնալ, կացությունը անխարդախ բացատրել, և պետք եղած պայմանները հրահանգել։ Քարոզչական ոճը դպրևանքցվոգ ալ հատկապես ավանդած եմ, և Դպրեվանքի ոճը սկսած է բեմերու վրա տիրապետել, հնօրյա ոճեն բոլորովին տարբեր, ավելի ազդեցիկ և ավելի գնահատված»[273]։

Դամբրանականները, զորս հանդիսավոր առիթներու միայն կխոսեր, ճշգրիտ վերլուծումներ էին, որոնց մեջ հանդուցյալը կրնայիր ճանչնալ իր կյանքին ու գործունեության ամենեն բնորոշ գծերով։ Ջերմ էին անոնք ձուլածո ճամարտակություններեն, որով ուռած կըլլան մեր մեջ դամբանականները հաճախ, և հեռու էին ապսպրրված ըլլալե։

Օրմանյան փույթ չունեցավ իր քարոզներուն և ճառերուն մեկ ժողովածուն ձգելու։ Բավական հրահանգիչ պիտի ըլլային անոնք հոգևորականներու նոր սերունդին համար՝ սրբազան պերճախոսության իրենց մարզանքներուն առթիվ։ Ճիշտ է, որ շատ-շատերը մեր եկեղեցականներեն դրի առած և յույս ընծայած են իրենց քարոզները, բայց Օրմանյան նյութը զարգացնելու իր ուրույն ձևը ուներ, զոր աստվածաբանական համալսարանեն բերած էր հետը և զոր մասամբ ներարկեց Ճեմարանի և Արմաշի իր սանեռուն ալ։

[273] «Հոգի և խոսք», էջ 415—416։

Ճ. ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

Հայրենասերը փնտռել հանրային մարդու մը մեջ ապիրախտ գործ է։ Նախ անոր համար, որ մոլորություն է հայրենասիրությունը նկատել մարդու մը բացառիկ առաքինության մաս, որովհետև հայրենասիրությունը պատվո տիտղոս մը չէ ինքնին, այլ պարտականություն մը։ Բայց ժողովուրդի մը մեջ, որուն մոտ առաքինությունները հրբեմն պղտորած են ստրկության դարերը՝ ուծացածներու, այլասերածներու, ուրացողներու դասեր ստեղծելով, Հայրենիքը սիրելը ևս փառքի մակդիր մը կդառնա։

Հետո, մարդ չի գիտեր, թե ո՛ւր կսկսի և ո՛ւր կվերջանա հայրենասիրությունը։

Սխալ պիտի ըլլար ենթադրել, թե հայրենասեր միայն անոնք էին, որ լեռներուն վրա կռվեցան թշնամիներուն դեմ կամ իրենց կյանքը տվին բանտերուն մեջ կամ կախաղաններու վրա։ Հայրենասեր և անոնք եղան, որոնք հավատացին հայ ժողովուրդի վաղվան վերածնության և ճանապարհ հարթեցին անոր, որոնք տքնեցան թուղթերուն վրա և դիշերնիբուն քամեցին իրենց աչքերուն ու մտքին լույսը, հանուն հայ ժողովուրդի հոգեկան վերելքին։ Աղատագրական պայքարին մեջ կռվի դաշտին վրա ինկողներուն չափ հայրենասեր էին և անոնք, որոնք ամբողջ կյանքը մը բրտինք թափեցին և իրենց աչքերը փակեցին գրիչը իրենց մատներուն մեջ։ Բավ է, որ տքնեցան սիրով, իրենց ճիգը չարկարկելով, հավատալով Հայրենիքի մը։

Ո՞իշտ է, դեռ ատեն մը կար, երբ Հայրենիքը հեռավոր երազ մըն էր բոլորին համար, իսկ շատերուն համար պարզ ցնորք մը, բայց այն մարդոց կողքին, որոնք կձրգտեին այդ երազը իրականացնելու իրենց զոհաբերության գնով, կային և այնպիսիները, որոնց սրտին մեջ տարտամ հավատքը կար հեռավոր հնարավորությանց և որոնք կփորձեին հայ ժողովուրդը իր հոգին վրա ամուր ու բարդավաճ պահել և գարկ տալ անոր հոգեկան վերելքին՝ որպեսզի տոկա մինչև բաղձացված օրը։

Այս ըմբռնումով հայրենասեր էր Օրմանյան ալ։ Ու հայ դատը խորթ չէր իր սրտին, իր վերաբերումը դեպի այդ դատը որքան ալ ձև փոխեր ժամանակին հետ,— մերթ ուղղակի հաղորդակից այդ դատին ստեղծած հուզումներուն, ու մերթ զգույշ և վերապահ, մերթ ալ դարձյալ բռնկած հույսերով մոտակա ապագայի մը համար։ Այնպես որ Օրմանյանի մեջ հայրենասերը փնտռելու համար պետք է հետևել հանգրվաններուն, որոնց մեջեն անցավ Հայկական դատը, ու դնել Օրմանյանի ապրումները այդ հանգրվաններեն ամեն մեկուն միջոցին։

Այս էջերուն հետեւողները տեսան հոգեկան կապը, որ Օրմանյանը կմիացներ հայ ժողովուրդի հուզումներուն, սկսելով իր տաքարյուն երիտասարդութենեն, երբ կռիվ կմղեր Վատիկանի դեմ, որպեսզի ան ձեռք չտա հայ ժողովուրդի ավանդություններուն։ Մեր օրերու ըմբռնումով, հայրենասիրություն այն օրերուն դեռ չկար, բայց ի՞նչ անուն տալ զգացումներու այն չիրմության, որ խորթ միջավայրի մեջ ու խորթ դաստիարակությամբ սնած ու մեծցած երիտասարդ հոգևորական մը կխանդավառեն, հայ ավանդությանց ջատագով հանդիսացնելով դայն և հանուն անոնց պայքարի հանելով ահավոր ուժի մը դեմ, որ Վատիկանն էր։

Հետո, դայն տեսանք Հայկական դատի իսկապես ճակատագրական մեկ պահուն, Բեռլինի ձախողության օրերուն։ Դժբախտաբար շատ քիչ բան դիտենք այն աշակցության մասին, զոր Օրմանյան բերավ Ներսես Վարժապետյանին, Հայ Եկեղեցվո կիրկր դառնալեն առաջ և հետո, այսինքն այն միջոցին, երբ հայ հույսերը Բեռլինի մեջ ջախջախված, հայ ժողովուրդը կարիք ուներ ամուր մնալու հոգեպես։ Եթե հայրենասիրություն էր հայ տառապանքը դավառեն բերել Պոլիս և անոր աղաղակը Եվրոպայի դռսացած խղճմտանքին մեջ պոռթկալ, ի՞նչ անուն տալ հապա հայ ժողովուրդի հուսախաբության օրերուն սիրտ տալ անոր, ու նոր հույսերու պատրաստել դայն։ Ներսես Վարժապետյան լավագույն աշակիրն ուներ հանձին Օրմանյանի տեղատվության այդ տարիներուն, երբ հոգիները ավիշի պետք ունեին, նոր մակընթացությանց սրամադիր դառնալու համար։

Հուսախաբության այիքը գացեր էր նաև դավառ։ Հույսերով ողողվելն հետո պահ մը, դարձյալ հոգերու մեջ կտքար Հայ Հայրենիքը։ Պետք էր հույս տանիլ անոր։ և ամոքել անոր ցավերը։ Եթե հայրենասիրություն էր այդ ցավերուն թարգմանն ըլլալ աշխարհի առջև՝ սարսելու համար անոր կոնծած զգացումները, հայրենասիրութենեն ավելի բան մըն էր այդ վշտերուն մոտենալ ու անոնց սպեղանի փնտռել վերքերուն վրա հակած։ Օրմանյանի յոթը տարիները Կարնո մեջ վկայությունն են նվիրական առաքելության մը, որուն ինքզինքը սիրով կհանձներ հայ հոգևորական մը, հայ հոգին վրա տքնող ու տվայտող ժողովուրդի մը մատաղ ընելով իր ամենեն թարմ ու աշխույժ տարիները։

Կարին կգտնվեր Օրմանյան, երբ «ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն»։ Հայ տառապանքին առաջին պոռթկումն էր ան նոր օրերու մեջ։ Գաղութներու մեջ թափառելն հետո ընդունայն, հայ հայրենասիրությունը կուգար բողբոջիլ հայ հողին վրա։ Օրմանյան ժլատ է իր կապը մատնանշած ատեն այդ շարժումին հետ։ Երբ այդ շարժման մասին կխոսի, արդեն կգտնվի տարիքի մը մեջ, ուր մարդ տարբեր կնայի երիտասարդ օրերու իր խանդավառությանց վրա։ Բայց տարբեր աղբյուրներե գիտենք, թե հայոց լեռներեն եկող այդ ձայնը հնչեց իր հոգիին մեջ ալ, ապրեր էր սրտանց այդ բացառիկ օրերը, և երբ շարժումը կխեղդվեր իր խանձարուրին մեջ, ստիպվեր էր իր ճիգերը նվիրել զոհերը փրկելու և աղետ մը կանխելու համար։

Հայ Եկեղեցին դարերով ապրեր էր ինքնա, հայ ժողովուրդի բովանդակ հոգն ու խոովքը։ Արտասվեր ու հուսացեր, տքներ ու պայքարեր էր անոր հետ մեկտեղ։ Բայց կարիք ուներ թարմանալու և անոր նոր օրերու մեջ ևս դեր կատարելու համար նոր մարդիկ պետք էր հասուննալին իր ծոցին մեջ ալ։ Հայ ժողովուրդի նոր հոգերուն հետ նույնանալու համար նոր հովիվներ պետք էին։ Փո՞քր ծառայություն էր հայ ժողովուրդին հոգևորականներու այդ նոր սերունդը պարգևել անոր։ Օրմանյանի մեկ տարին Ճեմարանի մեջ, և անոր վեց տարիները Արմաշ, վկաներն են այն խոր գիտակցության, թե Հայ Եկեղեցին պետք է ի սպաս դնել հայ ժողովուրդին, անոր կյանքի բոլոր հանգրվաններուն մեջ։

Հայ ժողովուրդին ծառայած ըլլալ կարծեք՝ անոր խաղաղություն պարգևելու իր ջանքերը թափած ատեն դժնդակ այն օրերուն մեջ, երբ Համիդի սարսափին տակ կապրեր երկիրը, և հայ ժողովուրդը անստուգության գերի էին դարձուցեր դեպքերը։ Հայ ժողովուրդին ծառայելու այն ձևը, զոր ան որդեգրած էր իր պատրիարքության տասներկու տարիներուն, հաճելի ձև չէր շատերուն համար։ Բայց Օրմանյան հպարտ է, որ երբեմն ողոքելով, երբեմն բողոքելով կրցավ գազան մը զսպել տասներկու տարի, և եթե փոքր զոհացումներ միայն ձեռք ձգեց ահավոր ճիգերու և կարիքներու այդ տարիներուն, բայց հայրողեցավ առիթ չտալ նոր աղետներու։ Ադով ան կկարծե, թե լիուլի կատարած է հայրենասիրական իր պարտքը հայ ժողովուրդի պատմության ամենեն դժնե մեկ պահուն։

Լավագույն ի՞նչ բանով պիտի կարենար ծառայել հայ ժողովուրդին իր առանձնացման օրերուն, քան հակելով գրքերուն վրա, պրպտելով ու տքնելով։ Մտքի վաստակը, որ այդ տարիներուն պտուղն է, մեծագույն տուրքն էր, զոր ան կրնար ընծայել հայ գրականության, և անով նաև հայ ժողովուրդին, որովհետև ան կուգար կարևոր պակաս մը լրացնել։ Ճիգը, զոր ըրավ մեկ կողմե Հայ Եկեղեցվո ամբողջական պատմությունը մեզ տալու իր հարակից բոլոր դեպքերով, և մյուս կողմե Հայ Եկեղեցվո տեղը ճշտելու համար Եկեղեցիներու ընտանիքին մեջ, նոր մեկ փաստն էր իր անխախտ սիրույն դեպի իր ժողովուրդը՝ բոլոր պայմաններու տակ, նույնիսկ դառնություններով լեցված մեկ պահուն։

Հայաշինչ եղեռնին ատեն ևս ամուր մնաց ան իր հոգվով։ Երբ «Ազգապատում»-ի վերջին մասը կշարադրեր Երուսաղեմի մեջ, մոայլ օրեր էին հայ ժողովուրդին համար։ «Երիտասարդ Թուրք»-երը ամայացուցեր էին այն ատեն Հայաստանը և ցանուցիր ըրեր էին հայ ժողովուրդի մնացորդացը։ Այդպիսի օրերու մեջ մարդիկ տրամադիր կըլլան հոգեկան բեկումի։ Օրմանյան հեռու է սակայն հայ ժողովուրդը մեղավոր կարծելե այն շարժումներուն մեջ, զորս ան փորձեր էր հանուն իր ապագային, և որոնք պատրվակ պիտի ըլլային դահիճներուն համար իրենց նախճիրը արդարացնելու։ Օրմանյան մեղավոր չի գտներ հայ ժողովուրդը, ոչ այն պահուն, երբ կյանքի, ինչքի և պատվի ապահովություն կպահանջեր աշխարհեն, ոչ ալ այն ատեն՝ երբ իր դիմումներուն մեջ հուսահատ, խաբված, պիտի մղվեր հուսահատական ճիգերու։

Խոսելե հետո եվրոպական պետությանց անտարբերության վրա դեպի հայ ժողովուրդի ցավերը, և հայոց կրած հուսախաբության և հուսաբեկության վրա, Օրմանյան կրսե, թե ազնիվ եղան հայությունը շարժման մղողը, ու կշարունակե. «Եվրոպական գավառներու մեջ գործադրվող բարեկամությունները հառաջ եկած էին բնիկ տարբերուն խլրտելեն և զինյալ ընդդիմություններեն և ներքին շփոթություններեն, ինչ որ գործնականապես կթելադրեր, թե այս միայն ըլլա բարեվավությունները ձեռք ձգելու միջոցը։ Այդ մեկնությունը հայտնի կերպով ալ կկրկնվեր ասիակողմը գտնվող եվրոպական հյուպատոսներեն, կթելադրվեր մայրաքաղաքի դեսպանատանց ակնարկներեն, և Եվրոպիո մեջ խոսվածներեն և գրվածներեն, որ եթե հայեր իրավցնե բան մը ձեռք ձգել կուզեն, պետք է իրենք առչև անցնին և հաստատուն կամքերնին գործնականապես ցուցնեն, և շոշափելի կերպով հավաստեն, թե իրենք են երկրին բնիկներն ու տերերը, և ոչ քուրդերը, դի դինյալն է, որ երկրի մը

տերը կճանչցվի և ոչ անզենը, իսկ արգահատանք շարժելու համար մուրացիկ հայեցվածներ բավական չեն արդյունք պատրաստել։ Այդ գրգիռները դուրսեն լսվելով և ներսեն զգացվելով փոփոխություն մը առաջ բերին հայ մտայնության վրա, և 1878-ե 1882 հանդարտ ազերսարկուն և խեղճուկ աղաչավորը, գրեթե բռնադատյալ նոր միջոցներու մղվեցավ, և հայուն կյանքին ու գործին վրա փոփոխություն նշմարվեցավ»[274]։

Օրմանյան հայկական շարժման պոռթկումին մեջ հավասարապես պատասխանատու կնկատե թե՛ Թուրք կառավարությունը և թե՛ Եվրոպան. «Հեռվեն դիտողը և անաչառ կշռադատողը հայտնապես կտեսնե, որ կերպով մը Օսմանյան կառավարությունն էր փոփոխության պատճառ տվողը, երբ հանդարտ ազերսարկուն կանարգեր և խոռվարար պահանջողը կգոհացներ, մինչ բոլորովին հակառակը պետք էր ըլլար յուր քաղաքագիտական ընթացքը, եթե յուր իսկական նպատակն էր հպատակները շահիլ և անոնց բարեկեցությունը պատրաստել։ Բարենորոգումներ խոստացող կառավարութենեն ոչ նվազ պատասխանատու էին հսկող պետություններն ալ, որոնք ամեն միջոցներ, ազդու սպառնալիքներ, բռնադատիչ պահանջներ, նավային ցույցեր չխնայեցին ապրստամբած և խռոված տարրերը գոհացնելու, և լոկ բերանացի կամ անցողակի խոսքերով գոհացան հանդարտ ազերսարկուներու պաշտպանության համար։

Այլուր խոսեցանք իր մտածումներուն վրա հայ ժողովուրդի ապագային մասին։ Ըսված այնպիսի պահու մը, երբ մշուշի մեջ էր դեռ ամեն ինչ, և զանոնք կշարադրեր աշխարհեն կտրված, անոնք կշարունակեն վկաները մնալ այն ջերմ սիրույն, զոր կտածեր դեպի իր ժողովուրդը, և անշեջ հավատքի մը դեղեպի անոր ապագան։

7. ՕՐՄԱՆՅԱՆ ԻՐ ԱՊՐԱԾ ԱՏԵՆ

Սխալ պիտի ըլլար փնտռել, թե ինչ էր հանրային կարծիքը Օրմանյանի կյանքի զանազան շրջաններուն։ Հանրային կարծիքը առաձգական բառ մըն է միայն. ան կփոխվի ամեն մեկ դեպքե հետո, հաճախ մեկ պահիկե մը։

Օրմանյան հայ հորիզոնին վրա երևցող այն մարդոցմեն էր, որոնք իրենց խոր պատրաստությամբ և իրենց ուժեղ նկարագրով կոչված էին աչքառու դառնալ առաջին իսկ պահեն։ Ու հետո, իր կյանքն ու գործունեությունը այնպիսի ազմկալից հանգրվաններե անցած են, որ թերուդեմ հոսանքներ միշտ պիտի ստեղծվեին իր անվան շուրջ։

Իսկ թե ինչ է եղած ժամանակակիցներուն իրենց կարծիքն ու վերաբերումը դեպի Օրմանյան, դժվար է երկու բառով հարցը սպառել։ Անոնք փոխված են ժամանակին հետ, ավելի ճիշտ՝ Օրմանյանի կյանքին հանգրվաններուն հետ մեկտեղ։ Օրմանյան ինքը նույնը չմնաց մեկ հանգրվանեն մյուսը, որպեսզի նույնը մնար նաև իր շուրջի մարդոց գիրքը։ Բայց պետք է ըսել, որ Օրմանյան համակրանք միայն քաղեր էր ի սկզբան, և շատ երկար առեն։

Իր դիրքը հակահասունյան պայքարին մեջ համակրության հոսանք մը ստեղծեր էր իր շուրջ։ Հայ եկեղեցվո գիրկը դառնալե առաջ, Օրմանյան տեղ գրաված էր արդեն հայ ժողովուրդի սրտին մեջ։ Պայքարը, զոր ան կմղեր Վատիկանի դեմ աշխարհի աչքերուն առջև, հայ ավանդությանց ի պաշտպանություն, սիրելի դարձուցած էին անոր անունը ամեն հայու։

Օրմանյանի հանդեպ համակրությունը իր գագաթնակետին հասավ իր հանդիսավոր մուտքին հետ Հայ եկեղեցվո գիրկը։ Ժեստ մըն էր, որ չէր կրնար հուզումով ու խանդավառությամբ չողջունվիլ։

Օրմանյան էրզրումեն կմեկներ տարբեր լուսապակով մը. ներկա էր եղած իր «ձայնը հնչեց էրզրումի հայոց լեռներեն» և Համիդեն ետ էր կանչված. այսքանը բավ էր արդեն, որ համակրության նոր ալիք մը ստեղծվի իր շուրջը։

Ցարական վարչակարգին ցույց տված ատելությունը անոր դեմ, որուն հետևանքով էջմիածինը կթողուր ան, նոր առիթ մը եղեր էր, որպեսզի հայ ժողովուրդին սերը անգամ մը ևս ջերմանա։

Այնպես որ երբ Ազգը Արմաշը կհանձներ իրեն՝ այն վստահությամբ էր, որ հայ եկեղեցվո համար նոր շրջան մը կբացվի, թարմացման ու ծաղկման շրջան, շնորհիվ հոգևորական այն նոր սերունդին, որ հոն պիտի հուսանեաբ իր և Դուրյանի շունչին տակ։ Այդ վստահությունը պիտի արդյարանար առաջին հունձքին հետ, զոր Արմաշ պարգևեց Հայ եկեղեցիին։

Զոհրապ Օրմանյանը իր «Ծանոթ դեմքերը»-ու շարքը կմտցներ ճիշտ այդ օրերուն. «Այն պարտասուն հոգիներուն մեջ, որով մեծ մասամբ մեր եկեղեցականությունը կձևանա, գերաշնորհ Օրմանյան կաղնիի մը ամրարձիկ ուղղություն պահած է. ան-

274 «Ազգապատում», էջ 4405—4406։

խախտ ու ամուր կերպով իր սրբազան կոչումին վրա, առանց պարծենալու շարունակելով հատուցանել իր պարտքը, պարզուկելով հատուցանել իր պարտքը, պարզությամբ ու համեստությամբ. այնպես, ինչպես պարտքերը պետք է որ հատուցվին։ Այսպես, սիրահոժար գացած է հոն, ուր կոչած են զինքը Ազգն ու Եկեղեցին. Կարինի եռանդաշտեն մինչև Արմաշի մենաստանը, ճշմարիտ վարդապետ մը ըլլալով ոչ միայն այն սուրբ օծումով, զոր Եկեղեցին կշնորհե, այլ այն ավելի սուրբ օծումով, զոր անձնվիրությունը կուտա։ Իր համակերպիկ մարդու զվարթախոհությունը՝ կյանքի պայմաններուն ճշմարիտ և ուղիղ ըմբռնումն է։ Գերաշնորհ Օրմանյան գիտե, որ ամեն ճամբաները հարթ ու շիտակ չեն կրնար ըլլալ աշխարհիս վրա և զառիվարներ կան, ուրկե կրնա գլորվիլ մարդ. բայց գիտե նաև, որ ամեն զառիվայր, միանգամայն զառիվեր մըն է. վար կսահիս, բայց վեր ալ կելլես։ և միթե մարդկային ճակատագիրը այս անգույն նկարագրեն շինված չէ՞։ Կրոնքը ասիկա ուսուցած է իրեն, խաչելության քով Հարությունը նշմարած է միշտ ու վայրկյան մը սրտաբեկ չէ եղած։

Զառիվարը շուշացավ։ Հաջորդեց իսկապես դժբախտ շրջան մը։ Ազգը ապերախտ պաշտոն մը պիտի տար անոր, Պոլսո պատրիարքությունը, չարդերեն անմիջապես հետո, գազանի մը դեռ կատղած մեկ պահուն։ Այդ պաշտոնին մեջ ինչպես ալ վարվեր Օրմանյան ու ինչ հրաշք ալ գործեր, պիտի չկրնար ծափեր քաղել։ Տառապող ժողովուրդը սպեղանիներով ամոքելը դժվար էր, ու շարժառիթներ միշտ ալ պիտի ըլլային զայն դառնացնելու։

Զոհրապ սխալած չէր։ Թեև դանդաղ, հասավ սակայն և զառիվերը։ Զառիվերին վրա էր, երբ մահը հասավ։ Զառիվերին վրա էր, երբ Օրմանյան անցավ պատմության։

8. ՕՐՄԱՆՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Ժամանակն է նյութը փակելու։ Բայց ընդրոշելե հետո իրենց տեղին Օրմանյանի կյանքին և գործունեության զանազան շրջանները, պետք էր նաև ընդհանուր ակնարկի մը մեջ խտացնել զանոնք այս էջերը փակելե առաջ։

Օրմանյան բացառիկ դեմք մըն է մեր իրականության նորագույն պատմության մեջ, բացառիկ իր խառնվածքով ու անհատականությամբ նախ, բացառիկ նաև իր պատրաստությամբ ու իր վաստակով. ուրեմն բացառիկ պիտի ըլլար որքան իր նկարագրին՝ նույնքան իր գործունեության մեջ։

Բայց մոլորություն պիտի ըլլար զայն անչափել իր ժամանակեն ու իր շրջապատեն՝ զայն դատելու ժամանակ, որովհետև նման փորձ մը պիտի սայթաքեցներ մեզ, որքան որ ալ իր անձը և գործը շահեկան կողմեր ունենային առանձին քննված ատեն ևս, իրենց այդ բացառիկ բնույթին համար։

Օրմանյան բացառիկ եղավ, որովհետև բացառիկ էին դեպքերը, որոնց մեջ աչքերը բացավ և հասունցավ, ինչպես որ բացառիկ էին անոնք ալ, որոնց մեջ գործեց և որոնց խառնվեցավ և ինքը։

Ըսենք նախ առանց այլևայլի, թե Օրմանյանը կպարտինք այն ամոթալի փորձերուն, զորս Վատիկանը կատարեց մասնիկ մը կորզելու համար հայ ժողովուրդի արդեն իսկ աղկաղկ մարմնեն, և անոր մեջ խորտակելու համար հայրենի ամեն ավանդություն։ Հայ կաթոլիկ համայնքին ծոցին մեջ մղված տխուր պայքարն էր արդարև, որ Օրմանյանը բերավ հայ ժողովուրդին։

Օրմանյան հայ ժողովուրդի ծոցը կուգար մեր նորագույն պատմության ամենեն դժբնդակ մեկ պահուն։ Բեռլինը նոր էր մեզ հուսախաբ ըրեր և մեզ լքեր մեր դահիճներուն լախտին ու տապարանի տակ. Պոլիս կխարխափեր շփոթության մեջ ու գավառը մատնված էր հուսահատության։ Գավառի ցավերը իրենց կանչեցին Օրմանյանը, ու Կարնո դեպքը զինքը հոն գտավ։ Կերպով մը իր կրակի մկրտությունն էր եղեր այդ։

Հայ Եկեղեցին հոգնած էր, ու կարոտ էր թարմանալու. հոգևորականներու հին սերունդը անպետ սկսած էր դառնալ նոր օրերու համար։ Նախաձեռնություն մը պետք էր, որպեսզի ստեղծվի հոգևորական նոր սերունդ, և Օրմանյան բուն մարդն էր նման առաքելության մը համար. Ճեմարանն ու Դպրեվանքը իր կյանքին ամենեն պտղաբեր առիթն եղան։

Եվ ահա հայկական տագնապը, ցույցերու և չարդերու զույգ մը տարին. Իզմիրյան՝ աքսորական, անգլուխ մնացած է Ազգը. ցեցեր եկած են Ազգին գլուխը, որոնցմե ազատիլ կուզե սակայն ան. հոգևորական մը պետք է, որ հոժարի մտնել դժնդակ լուծի մը ներքև և Օրմանյանը կկանչեն այդ լուծին, զոր ան կկրե տասներկու տարի, հայ ժողովուրդի ցավի ճիչերուն և դազանի մը սարսափին ներքև։

Այդ մռայլ օրերուն է, որ հանկարծ կսայթի Թուրքիո Սահմանադրությունը և բոլորը կգինովցնե. Ազգը ամբոխ կդառնա և ամբոխը զոհ մը կուզե իր կրած ցավերուն փոխարեն։ Այդ զոհը Օրմանյանը կըլլա, որովհետև Ազգին գլուխը դայն է գտած իր խեն-

դությանվայրկյանին։ Հալածանք ու գաղթանի մը տարի, մինչև որ ամբոխը կխաղաղի, կիրքերը քիչ մը կմարին, և Օրմանյանը մեկքի կաղատեն ու պաշտոններու կանցնեն դայն դարձյալ։

Եվ ահա աշխատանքի ուրիշ վեց տարիներ, այս անգամ լեցուն տարբեր ճիգերով և հոգումներով։

Ամբողջ իր կյանքը փոթորիկի մեջ կանցնի այսպես Օրմանյան, որովհետև փոթորիկի մեջ էր ինքը Ազգը այդ բովանդակ շրջանին։ Ուժեղ իր նկարագրին մեջ, համառ իր խառնվածքով, ճարտար իր պատրաստությամբ, ան կրցավ դիմանալ բոլոր փոթորիկներուն։ Ուրիշ մը, իր տեղը, պիտի շվարեր, պիտի հուսահատեր։ Ինք անվկանդ մնաց բոլոր փորձությանց պտուհերուն, դիմացավ փառքին որքան հալածանքներուն, և միևնույն ատեն զննեց ու պրպտեց, տքնեցավ ու ստեղծեց և Ազգին նվիրեց մտքի վաստակով լեցուն մախաղ մը։

Այս էր Օրմանյանը։

Աղմուկով լեցուն իր այդ կյանքին մեջ ամենեն փոթորկայիցը Պոլսո պատրիարքության իր տասներկու տարիներն եղան և անոնք էին, որ իրենց ետևեն պիտի բերին այնքան վեհ և այնքան դառնություն։

Տասնամյակ մըն է այդ, որ ամենեն դժնդակ շրջաններեն մեկն էր հայ կյանքին, ու դժնդակ պիտի ըլլար նաև դերը, որ պիտի վիճակեր հայ հոգևոր պետի մը։

Եթե դանգվածային ջարդեր տեղի չունեցան Համիդի այդ վերջին տասներկու տարիներուն, հայը հալածվելե չդադրեցավ երբեք։ Ճնշումը, որուն ենթակա էր ամբողջ երկիրը, կանդրադառնար անշուշտ հայուն ալ։ Վարչակարգին ընդհանուր չարիքներեն զատ, հայը կկրեր սակայն անհամար ուրիշ տառապանքներ ալ, որոնցմե զերծ էին մյուս տարրերը։ Կեղեքումները, որոնց ենթակա էր հայ գյուղացին, ոչ մեկը չէր կրեր մյուս տարրերեն. երթևեկի սեղմումները երկրին մեկ շրջանեն մյուսը առավելապես հայոց համար էին. բանտերը ավելի շատ լեցուն էին հայերով։

Այս կացության առջև ի՞նչ կրնար ընել հայոց պատրիարքը, երբ դեմը գազան մը կար, որմե կախում ուներ ամեն ինչ, և Եվրոպա մը քիչ հեռուն, որ փակեր էր աչքերն ու խղճմտանքը։ Ուրիշ ճամբա չուներ չարիքը մեղմելու համար, բայց եթե աղերսել, բողոքել կամ հրաժարիլ։

Օրմանյան կրսե, թե երեքն ալ փորձեց իրենց տեղին և երեքեն ալ օգուտ քաղեց առավել կամ նվազ չափով։

Ցավը ամոքելու համար բավական չէին անշուշտ ձեռք առնված այդ դույզն արդյունքները. ու հետևարար հայ ժողովուրդը կշարունակեր տառապիլ. ու ժողովուրդ մը, որ կտառապի, իր վարիչները կմեղադրե. ադկե էր ընդհանուր դժգոհությունը, որ կար Օրմանյանի դեմ. ժողովուրդը կտրանչար, որ անտարբեր է իր պատրիարքը։

Կմոլատար նաև արտասահմանը. ցավերը, որ արձագանք կգտնեին գաղութներուն մեջ, չէին էրնար զանոնք ալ չվրդովել. հարազատ եղբոր մը տառապանքը մարդ ինքն ալ կդդա։ Ու դժգոհությունը Պոլսո պատրիարքին դեմ ավելի խորունկ էր անշուշտ դուրսը։ Անուշ ջուրի մեջ մարդ ավելի քաջ կդառնա։

Օրմանյանը կմեղադրեին, թե չափազանց ստրուկ է աղերսած ատեն, թե իր բողոքները թույլ են չափազանց, իսկ հրաժարելու իր փորձերը ձևականություններ են միայն։

Ներսի ու դուրսի այս դժգոհություններն էին, որ տարիներով պիտի խմորվեին, տարբերային ձևով պայթելու համար օր մը, այսինքն 1908 հուլիսին, երբ Համիդ խոսելու հրաման տվավ ներսի ժողովուրդին, ու երկրին դուռները բացավ դուրսեն եկողներուն։ Պահը նպաստավոր էր Օրմանյանի թշնամիներուն համար՝ շահագործելու տարիներով կուտակված այդ դժգոհությունները և լուծելու իրենց վրեժը այդ դժգոհությունները պոռթկալով արտաքոց ցույցերու մեջ, անոնց ահավոր համեմատություններ տված արդեն։

Դժգոհությունները ցույցի վերածված, և քրթմնջյունները մեղադրանքներու, հանցավոր մը կսեպվեր արդեն Օրմանյան։ Ու դայն նստեցուցին ամբաստանյալի աթոռին վրա, մեղադրելով որ խուլ է եղած Ազգին ցավերուն, ծունկ չոքած է ստրուկի պես Համիդի առջև, և կառչած մնացած է աթոռին։

Ատեն անցավ, մինչև որ Օրմանյան պատասխանեց ամբաստանություններուն, նախ գինք դատողներուն՝ պաշտոնական իր բացատրություններով, ու հետո հանրային կարծիքին ալ՝ իր դրքերուն միջոցով։

Օրմանյան պատասխանեց ինչ որ կրցավ։ Իր բացատրությունները բավական եղան, որ զրգռված մտքերը խաղաղին և մեղմանան բորբոքած կրքերը, և իր դատավորները զերծ կացուցանեն զայն իր վրա կուտակված մեղադրանքներեն։

Բայց անպարտության վեհը չէր դեռ այդ։ Այդ վեհը ժամանակը պիտի տար, և առանց շատ երկար սպասելու։ Երբոր, տասնամյակ մը իսկ չբոլորած, հայ ժողովուրդի գլխուն պայթեին ավելի ահավոր աղետներ, և աշխարհը հանդիսատես ըլլար այնպիսի սարսափներու, որոնց առջև աննշան պիտի թվեին Համիդի սարքածները։

Եվ այդ ատեն է, որ մարդիկ հարց պիտի տային, թե ի՞նչ բրավ Օրմանյան իր շրջանի համեմատարար դույզն հալածանքներուն

ատեն, և ինչ ըրին հայ ժողովուրդի հետագա ղեկավարները, երբ այլևս բողոքի շրջանը վաղուց անցած էր, և հայ վարիչներուն ծառանալ և ընդվզել կմնար համատարած ավերին ու սուգին առջև։

Ձեր միտքը բերեք հալածանքի ահավոր այն մյուս շրջանը, զոր պիտի ապրեր հայը սերիտասարդ Թուրքերուն օրով։ Ցիշեցնեք 1915-ը, հայաջինջ սարսափներու տարին, երբ հայ մտավորականությունը խողխողված և հարյուր-հազարավոր հայեր, խլված իրենց օջախներեն, ջարդված էին տարագրության ճամբուն վրա, հայ սրբությունները պղծված էին ու կոտորածներեն ճողոպրածները կմընային միշտ բնաջնջման սպառնալիքի տակ։

Ի՞նչ ըրավ հայ ժողովուրդը այդ բոլորին դեմ։ Ցիշտ է, ընդվզեցավ ան տեղ-տեղ, ու սուղ ծախեց արյունը։ Բայց ի՞նչ ըրին անոնք, որ դեռ ղեկավար կոչվեին հայ ժողովուրդին։ Բողոքի ճիչ մը կրցա՞ն հանել Ներակուլտին և Երեսփոխանական ժողովին մեջ բաղված Թուրքին հայանուն մանկլավիկները։ կրցա՞վ բերանը բանալ Սահակ Խապայան կաթողիկոսը, զոր Թուրքը տարեր բազմեցուցեր էր Երուսաղեմ, իբրև Հայոց Հոգևոր Պետ, Զավեն պատրիարքը աքսոր քշելե և հայ հոգևորականությունը ստվար մասով խողխողելե հետո։

Ձեր միտքը բերեք այս բոլորը, ու հետո միայն դատեցեք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը։

Սխալ պիտի ըլլար ըսել, թե Օրմանյան իր նոր վերելքը միայն ժամանակին կպարտի, նոր-նոր դեպքերուն, որոնք եկան խռովել հայ կյանքը և այլապես ահավոր փորձությանց առջև դրին մեզ, նոր-նոր մարդոց, որոնք դեր կատարեցին այդ նոր դեպքերուն պահուն և մոռցնել տվին վրեպները, զորս դատած էինք հին մարդոց վրա, ու նոր լափանիշներուն, որոնցմով ստիպված ենք դատել իրերը կես դարու փորձառությենե մը հետո։

Ցիշտ են անոնք բոլորը։ Օրմանյան բան մը անշուշտ կպարտի ժամանակին, ինչպես կպարտին բոլոր անոնք, որոնց հանդեպ արդար չէ եղած իրենց իսկ ժամանակը, կրքով դատելով իր օրերու մարդիկը։

Բայց ան պիտի չկրնար Հայ Եկեղեցվո պատմության մեջ ուրույն տեղ մը իրեն համար պահանջել, եթե քեն պահած չըլլար Ազգին դեմ՝ իր կրած նախատինքներուն համար, հոգեկան իր դառնության մեջ լքած ըլլար հայ ժողովուրդին ու Հայ Եկեղեցվո ծառայելու իր ուխտը, եթե քաշած չըլլար աչքերուն ու մտքին լույսը՝ գրի մնալուն վաստակ մը ձգելու համար իրմե ետքիններուն։

Եթե Կապիտոլեն հեռու չէ Տարպյան ժայռը, երբեմն Տարպյան ժայռեն ալ մարդ կրնա Կապիտոլ բարձրանալ կրկին։ Խոշոր են անշուշտ նման փոխարերությունները մեր օրերու մարդոց մասին ըսվելու համար։ Օրմանյանի պարագային համար կրնանք համարձակ ըսել, թե ան վերելքի այդ ճիգը ըրավ։ Ու կրնանք համարձակ ըսել նույնպես, որ տարբեր պայմաններու մեջ տարբեր պատրիարք մը կրնար ըլլալ Օրմանյան։ Կոլոտի, նալյանի դարուն, օրինակ, ան պիտի կրնար հայ հոգևոր կյանքին մեջ իսկապես դարգլուխ մը բանալ, անցյալ դարու կեսերուն՝ ինքն ալ աջակցիլ հայ նոր վերածնության, մեթոդ մտցնելով տարտղնած աշխատանքներուն մեջ, և ապագա խաղաղ օրերու՝ Հայ Եկեղեցին իր հիմնական առաքելության տանիլ ու նոր օրերուն դիմացնել զայն։

***

Այս էջերը գրելու սկսած ատեն տարբեր էր նպատակս։ Կուզեի պարզապես ակնարկ մը նետել Օրմանյանի կյանքին ու գործին վրա, ու խղճի պարտք մը կատարել մարդու մը հանդեպ, որուն նկատմամբ անիրավ եղան իր ժամանակակիցները, որովհետև կրքով դատեր էին զայն, իրենց կույր պաշտամունքին և իրենց կույր ատելության մեջ և զոր, սակայն, ժամանակն էր այլևս պաղարյուն կերպով դատելու, թոթափած ամեն նախապաշարում, այսինքն վերեն նայելով մարդկային բիծերուն վրա, որոնցմե հարկավ Օրմանյանն ալ ունեցած էր, և փորձելով ավելի ճշգրիտ տեսնել զայն հիմա՝ քան երբ իր մոտն էինք։

Հիմա, որ այս էջերը կփակեմ, կտեսնեմ, որ նյութը ստիպած է զիս շատ լայնալ, բայց միևնույն ատեն գոհունակություն ունիմ ուրվագիծը տված ըլլալու մարդու մը, որուն օրերուն ապրեցանք առանց լիովին ճանչցած ըլլալու զայն, ու նաև աղոտ պատկերը շրջանի մը, զոր հիմա ավելի ճշգրիտ կտեսնենք քան այն օրերուն, երբ զայն կշնչեինք։ Սույն էջերը փակած ատեն կրզգամ, թե շատ բան փոխված է մեջս Օրմանյանի մասին ունեցած հին կարծիքներս. հիացում մը իրեն հանդեպ ունեցած եմ միշտ ալ, բայց կտեսնեմ, որ հիմա ավելի կըմբռնեմ զայն իր բուն արժեքին մեջ. իր մասին հիմա ալ որոշ վերապահումներ ունիմ, բայց կնշմարեմ հիմա, որ երբեմն իր վրա գտած բիծերս չկան։ Առհասարակ բան մը փոխված է մեր հին դատաստաններեն։

Թող զարմանալի չթվին հակասությունները, զորս մարդ կկարծե երբեմն նշմարել երեկվան իր մտածումներուն ու այսօրվան-

ներուն միջև։ Իրականին մեջ հակասութիւններ չեն տարբերութիւնները, զորս կգտնե մարդ, երբ կվերհիշե իր պարտավորութիւնները դեպքերուն անմիջական ազդեցութեան տակ և երբ անոնց կանդրադառնա կես դար հետու։ Կես դարը երկար շրջան է, որպեսզի մարդ տարբեր դատե հին օրերու դեպքերն ու դեմքերը, և այդ դատաստանը շատ ավելի անհրաժեշտ կդառնա, երբ մարդ կգտնվի դեպքերու առջև, որոնք ծնունդ էին բացառիկ պայմաններու և որոնք ընթացան բացառիկ ալ պայմաններու մեջ, իրենց ամեն քայլին տարբեր անակնկալներու առջև դրին մեզ՝ դեպքերուն հետ անմիջական կապ ունեցած ըլլալինք, թե հանդիսատեսներ եղած պարզապես։

Այդ տարբերութիւնները հաստատել դառն չի գար մեզ, որովհետև համոզումն ունինք, թե անոնք հետևանք են այն փորձութիւններուն, զորս փոթորիկները բերին։ Ու սիրով կանդրադառնանք անոնց, որովհետև եթե այդ փոթորիկները շատ բան սարսեցին մեր մեջ, փոխեցին շատ բան մեր կարծիքներեն մարդոց ու իրենց գործերուն վրա, հպարտ ենք սակայն, որ անոնք չկրցան հովտ մը այլայլել սիրո այն զդացումեն, զորս ամեն հայ մարդ կպարտի իր ժողովուրդին, պաշտամունքեն դեպի հողը, ուր թաղված են իր մեռելները և ուր կշնչեն իր ավանդութիւնները, և այն անուշ հավատքեն, թե հայ հոգին պիտի երբեք չմեռնի ստեղծագործ իր ճիգերուն մեջ այդ հողին վրա։